- Դուք ստացել եք ապահովագրական ծառայությունը Molina Healthcare-ի ցանցում գրանցված Medi-Cal մատակարարից: Դուք կարիք չունեք բավարարելու այս պայմանը, եթե ստացել եք հրատապ բժշկական օգնություն, ընտանիքի պլանավորման ծառայություններ կամ մեկ այլ ծառայություն, որը Medi-Cal-ը ցանցում չներառված մատակարարողների թույլ է տալիս մատուցել առանց նախնական հաստատման (նախնական թույլտվության):
- Եթե ապահովագրված ծառայությունը, որպես կանոն, պահանջում է նախնական հաստատում (նախնական թույլտվություն), Դուք պետք է ներկայացնեք մատակարարի կողմից տրամադրված ապացույցներ, որոնք հիմնավորում են բժշկական տեսանկյունից ապահովագրված ծառայության անհրաժեշտությունը:

Molina Healthcare-ը Ձեզ կտեղեկացնի, թե արդյոք Ձեզ կփոխհատուցեն, նամակի միջոցով, որը կոչվում է Գործողությունների ծանուցում (NOA): Եթե Դուք համապատասխանում եք վերը նշված բոլոր պայմաններին, Medi-Cal-ում գրանցված մատակարարը Ձեզ պետք է հետ վճարի Ձեր վճարած ամբողջ գումարը: Եթե մատակարարը հրաժարվում է Ձեզ հետ վճարելուց, Molina Healthcare-ը կվերադարձնի Ձեզ Ձեր վճարած ամբողջ գումարը: Մենք պարտավոր ենք Ձեզ փոխհատուցել Ձեր հայցը ստանալուց հետո 45 աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե մատակարարը գրանցված է Medi-Cal-ում, բայց ներառված չէ Molina Healthcare-ի ցանցում և հրաժարվում է Ձեզ վերադարձնել Ձեր վճարած գումարը, Molina Healthcare-ը կվճարի Ձեզ, բայց միայն այն գումարի չափով, որը կվճարեք FFS Medi-Cal-ը: Molina Healthcare-ը կվերադարձնի Ձեզ հրատապ օգնության ծառայությունների, ընտանիքի պլանավորման ծառայությունների կամ մեկ այլ ծառայության համար, որը Medi-Cal-ը ցանցում չներառված մատակարարներին թույլ



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Է տալիս մատուցել առանց նախնական հաստատման (նախնական թույլտվության): Եթե Դուք չեք բավարարում վերը նշված պայմաններից որևէ մեկին, Molina Healthcare-ը Ձեզ հետ չի վճարի:

Molina Healthcare-ը Ձեր ծախսած գումարը չի վերադարձնի Ձեզ, եթե.

- Դուք պահանջել և ստացել եք ծառայություններ, որոնք չեն ծածկվում Medi-Cal-ի կողմից, օրինակ՝ կոսմետիկ ծառայություններ:
- Ծառայությունը ապահովագրված ծառայություն չէ Molina Healthcare-ի համար:
- Դուք ունեք Medi-Cal-ի ծախսերի չվճարված մասնաբաժին:
- Դուք գնացել եք այնպիսի բժշկի մոտ, որը չի ընդունում Medi-Cal, և ստորագրել եք մի ձև, որտեղ ասվում էր, որ Դուք, ամեն դեպքում, ցանկանում եք զննում անցնել, և Դուք ինքներդ եք վճարելու ծառայությունների համար:
- Դուք ունեք Medicare Մաս D-ի համավճարներ դեղատոմսերի համար, որոնք ապահովագրված են Ձեր Medicare Մաս D պլանի կողմից:



Ձանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Ձանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

3. Ինչպես ստանալ ինսամք

Ինչպես ստանալ առողջապահական ծառայություններ

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ ՅԵՏԵԿՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍՉԻ ԻՄԱՆԱՔ, ԹԵ ՈՒՄ ԿՈՂՄԻՑ ԿԱՄ ԻՆՉ ԱՌՈՂՋԱԴԱՅԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ:

Դուք կարող եք սկսել առողջապահական ծառայություններ ստանալ Molina Healthcare-ում Ձեր գրանցման ուժի մեջ մտնելու օրվանից: Միշտ Ձեզ մոտ պահեք ՁMolina Healthcare-ի Ձեր նույնականացման քարտը(ID), Medi-Cal-ի արտոնությունների նույնականացման քարտը (BIC) և առողջության ապահովագրության ցանկացած այլ քարտ: Երբեք թույլ մի տվեք որևէ մեկին օգտագործել Ձեր BIC քարտը կամ Molina Healthcare-ի ID քարտը:

Միայն Medi-Cal-ի ապահովագրությունից օգտվող նոր անդամները պետք է ընտրեն առաջնային ինսամքի մատակարար (PCP) Molina Healthcare-ի ցանցից: Ինչպես Medi-Cal-ի դեպքում, այնպես էլ համապարփակ այլ առողջապահական ապահովագրություն ունեցող նոր անդամները կարիք չունեն առաջնային ինսամքի մատակարար (PCP) ընտրելու:

Molina Healthcare-ի ցանցը բժիշկների, հիվանդանոցների և այլ մատակարարների խումբ է, որոնք աշխատում են Molina Healthcare-ի հետ: Դուք առաջնային ինսամքի մատակարար (PCP) պետք է ընտրեք Molina Healthcare-ի անդամ դառնալու պահից 30 օրվա ընթացքում: Եթե Ծուք չէք ընտրում առաջնային ինսամքի մատակարար (PCP), Molina Healthcare-ը առաջնային ինսամքի մատակարար կընտրի Ձեզ համար:

Դուք կարող եք ընտրել նույն առաջնային ինսամքի մատակարարը (PCP) կամ տարբեր մատակարարներ ընտանիքի բոլոր անդամների համար Molina Healthcare-ում, եթե մատակարարը հասանելի է:

Եթե ունեք բժիշկ, որի հետ ցանկանում եք շարունակել աշխատել, կամ ցանկանում եք գտնել նոր մատակարար, այցելեք Մատակարարների տեղեկատու՝ Molina Healthcare-ի ցանցի առաջնային ինսամքի բոլոր մատակարարների և այլ մատակարարների ցանկին ծանոթանալու համար: Մատակարարների տեղեկատուում ներկայացվում է նաև այլ տեղեկություններ, որոնք կօգնեն Ձեզ



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

ընտրել առաջնային ինսամբի մատակարար: Եթե Ձեզ անհրաժեշտ է Մատակարարների տեղեկատու, գանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Դուք կարող եք նաև Մատակարարների տեղեկատուն գտնել Molina Healthcare-ի կայքում՝ www.MolinaHealthcare.com հասցեով:

Եթե Դուք չեք կարող ստանալ Ձեզ անհրաժեշտ ինսամբը Molina Healthcare-ի ցանցի մասնակից մատակարարից, Ձեր առաջնային ինսամբի մատակարարը կամ Molina Healthcare-իցանցի մասնագետը պետք է ստանա Molina Healthcare-ի հաստատումը՝ Ձեզ ցանցում չներառված մատակարարի մոտ ուղարկելու համար: Սա կոչվում է ուղեգիր: Դուք ուղեգրի կարիք չունեք՝ ցանցում չներառված մատակարարի դիմելու համար, որպեսզի ստանաք զգայուն ինսամբի ծառայություններ, որոնք թվարկված են սույն գլխի հաջորդ՝ «Չգայուն ինսամբ» բաժնում:

Կարդացեք սույն գլխի մնացած մասը՝ առաջնային ինսամբի մատակարարների, ծառայություններ մատուցողների տեղեկատուի և մատակարարների ցանցի մասին ավելին իմանալու համար:

Medi-Cal Rx ծրագիրը վարում է ամբուլատոր դեղատոմսերի դեղերի ապահովագրությամբ: Ավելին իմանալու համար կարդացեք «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ»՝ Գլուխ 4-ում:

Առաջնային ինսամբի մատակարար (PCP)

Ձեր առաջնային ինսամբի մատակարարը (PCP) այն լիցենզավորված մատակարարն է, որին Դուք դիմում եք Ձեր առողջապահական ինսամբի մեծ մասը ստանալու համար: Ձեր առաջնային ինսամբի մատակարարը նաև օգնում է Ձեզ ստանալ Ձեզ անհրաժեշտ այլ տեսակի ինսամբ: Դուք պետք է ընտրեք առաջնային ինսամբի բժիշկ Molina Healthcare-ում գրանցվելուց հետո 30 օրվա ընթացքում: Կախված Ձեր տարիքից և սեռից՝ Դուք կարող եք որպես առաջնային ինսամբի բժիշկ ընտրել ընդհանուր պրակտիկ բժիշկ, մանկաբարձ/գինեկոլոգ, ընտանեկան բժիշկ, բժշկ-պրակտիկանտ կամ մանկաբույժ:

Բուժքույրը (NP), բժշկի օգնականը (PA) կամ վկայագրված բուժքույր-մանկաբարձը նույնպես կարող են հանդես գալ որպես Ձեր առաջնային ինսամբի մատակարար: Եթե Դուք ընտրում եք բուժքրոջ (NP), բժշկի օգնականի (PA) կամ վկայագրված բուժքույր-մանկաբարձի, Ձեզ համար կարող են նշանակել բժշկի, որը կվերահսկի Ձեր ինսամբը: Եթե Դուք և՛ Medicare-ի, և՛ Medi-Cal-ի անդամ եք, կամ ունեք նաև այլ համապարփակ առողջապահական ապահովագրություն, Դուք ստիպված չեք լինի ընտրել առաջնային ինսամբի մատակարարի:

Որպես Ձեր առաջնային ինսամբի մատակարար՝ Դուք կարող եք ընտրել հնդկացիական առողջապահական ինսամբի մատակարար (IHCP), դաշնային մակարդակով որակավորված առողջության կենտրոն (FQHC) կամ առողջության գյուղական կլինիկա (RHC): Կախված մատակարարի տեսակից՝ Դուք կարող եք



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք գանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

ընտրել առաջնային առողջության մեկ մատակարար Ձեր և Ձեր ընտանիքի մյուս անդամների համար, ովքեր Molina Healthcare-ի անդամներ են, եթե առաջնային խնամքի տվյալ մատակարարը հասանելի է:

Նշում՝ Ամերիկյան հնդկացիները կարող են ընտրել IHCP որպես իրենց առաջնային խնամքի մատակարար, նույնիսկ եթե IHCP-ն Molina Healthcare-ի ցանցում ներառված չէ:

Եթե Դուք առաջնային խնամքի մատակարար չեք ընտրում գրանցումից հետո 30 օրվա ընթացքում, Molina Healthcare-ը Ձեզ համար կնշանակի առաջնային խնամքի մատակարարի: Եթե Ձեզ համար նշանակել են առաջնային խնամքի մատակարարի, և Դուք ցանկանում եք փոխել այն, զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Փոփոխությունը տեղի է ունենում հաջորդ ամսվա առաջին օրը:

Ձեր առաջնային խնամքի մատակարարը պետք է.

- Ծանոթանա Ձեր բժշկական պատմությանը և իմանա Ձեր կարիքները:
- Պահպանի Ձեր բժշկական գրառումները:
- Ձեզ տրամադրի անհրաժեշտ կանխարգելիչ և ընթացիկ բուժօգնություն:
- Անհրաժեշտության դեպքում ուղղորդի Ձեզ մասնագետի մոտ:
- Կազմակերպի հիվանդանոցային խնամք, եթե դրա կարիքն ունեք:

Դուք կարող եք ուսումնասիրել Մատակարարների տեղեկատուն՝ Molina Healthcare-ի ցանցում գրանցված առաջնային խնամքի մատակարար գտնելու համար: Մատակարարների տեղեկատուն ներկայացնում է Molina Healthcare-ի հետ աշխատող IHCP-ների, FQHC-ների և RHC-ների ցանկը:

Դուք կարող եք գտնել Molina Healthcare-ի Մատակարարների տեղեկատուն առցանց՝ www.MolinaHealthcare.com հասցեով: Կամ կարող եք զանգահարել 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711) և խնդրել ստանալ Մատակարարների տեղեկատուն, որը փոստով կուղարկվի Ձեզ: Կարող եք նաև զանգահարել, եթե ցանկանում եք պարզել, թե արդյոք Ձեր նախընտրած առաջնային խնամքի մատակարարն ընդունում է նոր հիվանդների:

Բժիշկների և այլ մատակարարների ընտրություն

Դուք լավագույնս գիտեք, թե ինչ բժշկական խնամքի կարիք ունեք, ուստի ավելի լավ կլինի, եթե ինքներդ ընտրեք Ձեր առաջնային խնամքի մատակարարին: Ցանկալի է աշխատել մեկ առաջնային խնամքի մատակարարի հետ, որպեսզի հնարավոր լինի ծանոթանալ Ձեր բժշկական կարիքներին: Այնուամենայնիվ, եթե ցանկանում եք ընտրել նոր առաջնային խնամքի մատակարարի, կարող եք ցանկացած պահի փոխել այն: Դուք պետք է ընտրեք առաջնային խնամքի այնպիսի մատակարարի, որը գտնվում է Molina Healthcare-ի մատակարարների ցանցում և ընդունում է նոր հիվանդների:

Ձեր նոր ընտրությունը կդառնա Ձեր առաջնային խնամքի մատակարարը փոփոխությունը կատարելուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Ձեր առաջնային խնամքի մատակարարին փոխելու համար զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Կարող եք նաև այցելել www.MolinaHealthcare.com և գրանցվել MyMolina-ում: Սա Molina Healthcare-ի



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

անդամների պորտալն է (վեբ կայքը), որտեղ Դուք կարող եք առցանց տեղեկատվություն ստանալ Molina Healthcare-ում Ձեր կարգավիճակի մասին:

Molina Healthcare-ը կարող է փոխել ձեր առաջնային ինսամքի մատակարարին, եթե մատակարարը Նոր հիվանդներ չի ընդունում, դուրս է եկել Molina Healthcare-ի ցանցից, ինսամք չի տրամադրում Ձեր տարիքի հիվանդներին, կամ եթե կան առաջնային ինսամքի մատակարարների ծառայությունների որակի հետ կապված խնդիրներ, որոնք չեն լուծվում: Molina Healthcare-ը կամ Ձեր առաջնային ինսամքի մատակարարը կարող են խնդրել Ձեզ փոխել Ձեր առաջնային ինսամքի մատակարարին, եթե չեք կարողանում հաղորդակցվել կամ համաձայնության գալ Ձեր մատակարարի հետ, կամ եթե բաց եք թողնում կամ ուշանում եք հանդիպումներից: Եթե Molina Healthcare-ին անհրաժեշտ է փոխել Ձեր առաջնային ինսամքի մատակարարին, Molina Healthcare-ը գրավոր կտեղեկացնի Ձեզ այդ մասին:

Եթե Ձեր առաջնային ինսամքի մատակարարը փոխվի, Դուք փոստով կստանաք նամակ և Molina Healthcare-ի անդամի Նոր ID քարտ: Այնտեղ նշված կլինի Ձեր Նոր առաջնային ինսամքի մատակարարի անվանումը: Չանգահարեք անդամների ծառայությունների բաժին, եթե ունեք հարցեր Նոր ID քարտ ստանալու վերաբերյալ:

Որոշ բաներ, որոնց մասին պետք է մտածել, երբ ընտրում եք առաջնային ինսամքի մատակարար:

- Արդյո՞ք առաջնային ինսամքի մատակարարը ինսամք տրամադրում է երեխաներին:
- Արդյո՞ք առաջնային ինսամքի մատակարարն աշխատում է իմ նախընտրած կլինիկայում:
- Արդյո՞ք առաջնային ինսամքի մատակարարի գրասենյակը մոտ է իմ տանը, աշխատավայրին կամ իմ երեխաների դպրոցին:
- Արդյո՞ք առաջնային ինսամքի մատակարարի գրասենյակը մոտ է իմ բնակության վայրին, և հե՞շտ է արդյոք մատակարարի գրասենյակ հասնելը:
- Բժիշկներն ու անձնակազմը խոսո՞ւմ են իմ լեզվով:
- Արդյո՞ք առաջնային ինսամքի մատակարարն աշխատում է իմ նախընտրած հիվանդանոցի հետ:
- Արդյո՞ք առաջնային ինսամքի մատակարարը տրամադրում է ինձ անհրաժեշտ ծառայությունները:
- Արդյո՞ք առաջնային ինսամքի մատակարարի աշխատանքային ժամերը համապատասխանում են իմ գրաֆիկին:
- Արդյո՞ք առաջնային ինսամքի մատակարարն աշխատում է այն մասնագետների հետ, որոնց ծառայություններից ես օգտվում եմ:

Նախնական բժշկական ընդունելություն (IHA)

Molina Healthcare-ը խորհուրդ է տալիս, որ 120 օրվա ընթացքում որպես Նոր անդամ այցելեք Ձեր Նոր առաջնային ինսամքի մատակարարին Ձեր առաջին բժշկական ընդունելության համար, որը կոչվում է նախնական բժշկական ընդունելություն (IHA): Նախնական բժշկական ընդունելության նպատակն է օգնել Ձեր առաջնային ինսամքի մատակարարին ծանոթանալ Ձեր առողջապահական ինսամքի պատմությանը և կարիքներին: Ձեր առաջնային ինսամքի մատակարարը կարող է Ձեզ հարցեր տալ Ձեր առողջության պատմության վերաբերյալ կամ կարող է խնդրել



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Ձեզ լրացնել հարցաթերթիկ: Ձեր առաջնային ինսամքի մատակարարը նաև կպատմի Ձեզ առողջապահական ուսուցողական խորհրդատվության և դասերի մասին, որոնք կարող են օգնել Ձեզ:

Երբ զանգահարում եք՝ նշանակելու Ձեր առաջին բժշկական ընդունելությունը, հեռախոսին պատասխանողին տեղեկացրեք, որ Դուք Molina Healthcare-ի անդամ եք: Հայտնեք Ձեր Molina Healthcare ID համարը:

Ձեր հանդիպման ժամանակ Ձեզ հետ տարեք Medi-Cal BIC քարտը և Molina Healthcare-ի ID քարտը: Ցանկալի է, որ այցելության ժամանակ Ձեզ հետ վերցնեք Ձեր դեղերի և հարցերի ցուցակը: Պատրաստ եղեք Ձեր առաջնային ինսամքի մատակարարի հետ խոսել Ձեր առողջապահական կարիքների և մտահոգությունների մասին:

Անպայման զանգահարեք Ձեր առաջնային ինսամքի մատակարարի գրասենյակ, եթե ուշանում եք կամ չեք կարող գնալ հանդիպմանը:

Եթե հարցեր ունեք Ձեր առաջին բժշկական ընդունելության վերաբերյալ, զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711):

Ընթացիկ ինսամք

Ընթացիկ ինսամքը կանոնավոր բժշկական ինսամքն է: Այն ներառում է կանխարգելիչ ինսամք, որը նաև կոչվում է առողջություն կամ պատշաճ ինսամք: Այն օգնում է Ձեզ մնալ առողջ և կանխարգելում է հիվանդանալուց: Կանխարգելիչ ինսամքը ներառում է կանոնավոր ստուգումներ, զննումներ, պատվաստումներ, առողջության վերաբերյալ կրթություն և խորհրդատվություն:

Molina Healthcare-ը խորհուրդ է տալիս, որ հատկապես երեխաները կանոնավոր և կանխարգելիչ ինսամք ստանան: Molina Healthcare-ի անդամները կարող են ստանալ վաղ կանխարգելման բոլոր ծառայությունները, որոնք առաջարկվում են Ամերիկյան մանկաբուժության ակադեմիայի և Medicare-ի և Medicaid ծառայությունների կենտրոնների կողմից: Այս սքրինինգները ներառում են լսողության և տեսողության հետազոտություն, որը կարող է նպաստել առողջ զարգացմանը և ուսուցմանը: Մանկաբույժների կողմից առաջարկվող ծառայությունների ցանկին ծանոթանալու համար կարդացեք «Պայծառ ապագա» ուղեցույցները, որոնք տրամադրվում են Ամերիկյան մանկաբուժության ակադեմիայի կողմից՝

https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf հասցեով:

Ընթացիկ ինսամքը ներառում է նաև ինսամք հիվանդանալու դեպքում: Molina Healthcare ծածկում է Ձեր առաջնային ինսամքի մատակարարի կողմից ստացած Ձեր ընթացիկ ինսամքը:

Ձեր առաջնային ինսամքի մատակարարը պետք է.

- Ձեզ տրամադրում է Ձեր ընթացիկ ինսամքի մեծ մասը, ներառյալ կանոնավոր ստուգումները, պատվաստումները (ներարկումներ), բուժումը, նշանակումները, անհրաժեշտ սքրինինգները և բժշկական խորհրդատվությունը:
- Պահպանի Ձեր բժշկական գրառումները:
- Անհրաժեշտության դեպքում ուղղորդում է Ձեզ մասնագետների մոտ:
- Անհրաժեշտության դեպքում նշանակում է ռենտգեն, մամոգրաֆիա կամ լաբորատոր հետազոտություն:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Երբ ընթացիկ ինամքի կարիք ունեք, զանգահարեք Ձեր առաջնային ինամքի մատակարարին և հանիդպում նշանակեք: Անպայման զանգահարեք Ձեր առաջնային ինամքի մատակարարին նախքան բժշկական օգնություն ստանալը, բացառությամբ արտակարգ իրավիճակների: Արտակարգ իրավիճակների դեպքում զանգահարեք **911** կամ գնացեք շտապ օգնության մոտակա սենյակ:

Եթե ցանկանում եք ավելին իմանալ առողջապահության և Molina Healthcare-ի կողմից ծածկվող ծառայությունների մասին, ինչպես նաև այն մասին, թե որ ծառայությունները չեն ծածկվում, կարդացեք այս ձեռնարկի Գլուխ 4-ը՝ «Նպաստներ և ծառայություններ», և Գլուխ 5-ը՝ «Երեխաների և երիտասարդների ինամքը»:

Molina Healthcare-ի ցանցում ներառված բոլոր մատակարարները կարող են օգտվել օժանդակ միջոցներից և ծառայություններից՝ հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփվելու համար: Նրանք կարող են Ձեզ հետ շփվել նաև այլ լեզվով կամ ձևաչափով: Տեղեկացրեք Ձեր մատակարարին կամ Molina Healthcare-ին, թե ինչ է ձեզ հարկավոր:

Մատակարարների ցանց

Medi-Cal-ի մատակարարների ցանցը բժիշկների, հիվանդանոցների և այլ մատակարարների խումբն է, որոնք աշխատում են Molina Healthcare -ի հետ՝ Medi-Cal-ի անդամներին Medi-Cal-ի ապահովագրված ծառայություններ մատուցելու համար:

Molina Healthcare-ը կառավարվող ինամքի առողջապահական պլան է: Երբ ընտրում եք մեր Medi-Cal ծրագիրը, Դուք համաձայնում եք ստանալ Ձեր ինամքը մեր բժշկական ինամքի ծրագրի միջոցով: Դուք պետք է ստանաք Ձեր ապահովագրված ծառայությունների մեծ մասը Molina Healthcare-ի միջոցով՝ մեր ներցանցային մատակարարների կողմից: Դուք կարող եք դիմել ցանցում չներառված մատակարարողի՝ առանց ուղեգրի կամ նախնական հաստատման՝ շտապ օգնության կամ ընտանիքի պլանավորման ծառայություններից օգտվելու համար: Դուք կարող եք նաև գնալ ցանցում չներառված մատակարարի մոտ, եթե Դուք գտնվում եք մեր սպասարկման տարածքից դուրս, բայց պետք է շտապ օգնություն ստանաք: Դուք պետք է ուղեգիր կամ նախնական հաստատում ունենաք ցանցում չներառված մյուս բոլոր ծառայությունների համար, հակառակ դեպքում դրանք չեն ծածկվի:

Նշում՝ Ամերիկյան հնդկացիները կարող են ընտրել IHCP որպես իրենց առաջնային ինամքի մատակարար, նույնիսկ եթե IHCP-ն Molina Healthcare-ի ցանցում ներառված չէ:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Եթե ձեր առաջնային ինամբի մատակարարը, հիվանդանոցը կամ այլ մատակարարը բարոյական առարկություն ունի Ձեզ ապահովագրված ծառայություն տրամադրելու հարցում, օրինակ՝ ընտանիքի պլանավորման կամ աբորտի դեպքում, զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Բարոյական առարկությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք այս գլխի «Բարոյական առարկություն» բաժինը:

Եթե Ձեր մատակարարը բարոյական առարկություն ունի Ձեզ ապահովագրված առողջապահական ծառայություններ տրամադրելու հարցում, Ձեզ կարող են օգնել գտնել մեկ այլ մատակարարի, որը Ձեզ կտրամադրի Ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Molina Healthcare-ը նույնպես կարող է օգնել Ձեզ գտնել մատակարարի, որը կմատուցի տվյալ ծառայությունը:

Ներգանցային մատակարարներ

Դուք կօգտվեք Molina Healthcare-ի ցանցի մատակարարներից Ձեր առողջապահական կարիքների մեծ մասի համար: Դուք կստանաք կանխարգելիչ և ընթացիկ ինամբ ցանցային մատակարարների կողմից: Դուք նաև կօգտվեք Molina Healthcare-ի ցանցում ներառված մասնագետներից, հիվանդանոցներից և այլ մատակարարներից:

Ներգանցային մատակարարների տեղեկատու ստանալու համար զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Մատակարարների տեղեկատու կարող եք գտնել նաև առցանց՝ հետևյալ հղումով՝ www.MolinaHealthcare.com: Պայմանագրով նախատեսված դեղերի ցանկի պատճենը ստանալու համար զանգահարեք Medi-Cal Rx 1-800-977-2273 (TTY 1-800-977-2273) և սեղմեք 7 կամ 711: Կամ այցելեք Medi-Cal Rx կայք՝ հետևյալ հասցեով <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>:

Դուք պետք է ստանաք նախնական հաստատում (նախապես թույլտվություն) Molina Healthcare-ից նախքան Molina Healthcare-ի ցանցում չներառված մատակարարի մոտ գնալը, ներառյալ Molina Healthcare-ի սպասարկման տարածքում, բացառությամբ հետևյալ դեպքերի.

- Եթե շտապ օգնության կարիք ունեք, զանգահարեք 911 կամ գնացեք մոտակա շտապ օգնության սենյակ:
- Եթե գտնվում եք Molina Healthcare-ի սպասարկման տարածքից դուրս և շտապ բժշկական օգնության կարիք ունեք, դիմեք շտապ բժշկական օգնության ցանկացած հաստատության:
- Եթե ընտանիքի պլանավորման ծառայությունների կարիք ունեք, գնացեք Medi-Cal-ի ցանկացած մատակարարի մոտ առանց նախնական հաստատման (նախնական թույլտվության):
- Եթե հոգեկան առողջության հետ կապված ծառայությունների կարիք ունեք, դիմեք ներգանցային մատակարարի կամ շրջանի հոգեկան առողջության ծրագրի մատակարարի՝ առանց նախնական հաստատման (նախնական թույլտվության):

Եթե չեք համապատասխանում վերը թվարկված դեպքերից որևէ մեկին և նախնական հաստատում (թույլտվություն) չեք ստացել նախքան ցանցում չգրանցված մատակարարի կողմից բժշկական օգնություն ստանալը, հնարավոր է՝ Դուք ստիպված լինեք կրելու ցանցում չներառված մատակարարների կողմից ստացած բժշկական օգնության դիմաց վճարելու պատասխանատվությունը:



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Ցանցում չներառված մատակարարներ, որոնք գտնվում են մեր սպասարկման տարածքում

Ցանցում չներառված մատակարարներն այն մատակարարներն են, որոնք համագործակցության պայմանագիր չունեն Molina Healthcare-ի հետ: Բացառությամբ շտապ օգնության, ընտանեկան ինամբի, զգայուն ինամբի և այնպիսի ինամբի, որը նախապես հաստատվել է Molina Healthcare-ի կողմից, հնարավոր է՝ Դուք ստիպված լինեք վճարելու ինամբի ցանկացած տեսակի համար, որը ստանում էք Ձեր սպասարկման տարածքում, սակայն ցանցում չներառված մատակարարների կողմից:

Եթե Դուք կարիք ունեք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ առողջապահական ծառայությունների, որոնք հասանելի չեն ցանցում, Դուք կարող եք դրանք անվճար ստանալ ցանցում չներառված մատակարարի կողմից: Molina Healthcare-ը կարող է հաստատել ուղեգիրը, որի միջոցով կարող եք դիմել ցանցում չգրանցված մատակարարին, եթե Ձեզ անհրաժեշտ ծառայությունները հասանելի չեն ցանցում կամ մատուցվում են Ձեր տնից շատ հեռու: Եթե մենք Ձեզ ուղեգիր տանք ցանցում չներառված մատակարարի ծառայություններից օգտվելու համար, մենք կվճարենք Ձեր ինամբի համար:

Molina Healthcare-ի սպասարկման տարածքում շտապ օգնություն ստանալու համար՝ Դուք պետք է դիմեք Molina Healthcare-ի ներցանցային շտապ օգնության մատակարարին: Ներցանցային մատակարարի կողմից շտապ օգնություն ստանալու համար նախնական հաստատման (նախնական թույլտվության) կարիք չկա: Նախնական հաստատում (նախնական թույլտվություն) անհրաժեշտ է ստանալ, երբ հրատապ օգնություն եք ստանում ցանցում չներառված մատակարարի կողմից Molina Healthcare-ի սպասարկման տարածքում:

Եթե շտապ օգնություն եք ստանում ցանցում չներառված մատակարարի կողմից Molina Healthcare-ի սպասարկման տարածքում, հնարավոր է՝ ստիպված լինեք վճարել այդ ինամբի համար: Հրատապ բժշկական օգնության, շտապ օգնության և զգայուն ինամբի ծառայությունների մասին ավելին կարող եք կարդալ այս գլխում:

Նշում՝ Եթե դուք ամերիկյան հնդկացի եք, կարող եք բուժօգնություն ստանալ IHCP-ում մեր մատակարարների ցանցից դուրս՝ առանց ուղեգրի: Ցանցում չներառված IHCP-ն նույնպես կարող է ուղեգրել այն անդամներին, որոնք ամերիկյան հնդկացիներ են, ներցանցային մատակարարի մոտ՝ առանց ցանցում ներառված առաջնային ինամբի մատակարարի կողմից նախնական ուղեգիր պահանջելու:

Եթե օգնության կարիք ունեք՝ ցանցում չներառված ծառայությունների հետ կապված, զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711):

Սպասարկման տարածքից դուրս

Եթե Դուք Molina Healthcare-ի սպասարկման տարածքից դուրս եք և ինամբի կարիք ունեք, որը հրատապ կամ անհետաձգելի չէ, անմիջապես զանգահարեք ձեր առաջնային ինամբի մատակարարին: Կամ կարող եք զանգահարել 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Շտապ օգնության համար զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա շտապ օգնության սենյակ: Molina Healthcare-ը ծածկում է ցանցից դուրս շտապ օգնության ծառայության ծախսերը: Եթե Դուք ճանապարհորդում եք Canadայում կամ Mexicoյում և շտապ օգնության կարիք ունեք, որը պահանջում է հոսպիտալացում, Molina Healthcare-ը կծածկի Ձեր խնամքի ծախսերը: Եթե Դուք ճամփորդում եք Canadայից կամ Mexicoյից դուրս և հրատապ բժշկական օգնության, շտապ օգնության կամ որևէ առողջապահական ծառայության կարիք ունեք, Molina Healthcare-ի **չի** ծածկի Ձեր խնամքի ծախսերը:

Եթե Դուք վճարել եք շտապ օգնության համար, որը պահանջում է հոսպիտալացում Կանադայում կամ Մեքսիկայում, կարող եք դիմել Molina Healthcare-ին Ձեզ փոխհատուցում տրամադրելու համար: Molina Healthcare-ը կդիտարկի Ձեր հարցումը: Փոխհատուցման մասին ավելին իմանալու համար կարդացեք այս ձեռնարկի Գլուխ 2-ը՝ «Ձեր առողջապահական պլանի մասին»:

Եթե Դուք այլ նահանգում եք կամ գտնվում եք Միացյալ Նահանգներին պատկանող տարածքում, օրինակ՝ Ամերիկյան Սամոայում, Գուամում, Յուեսիսային Մարիանյան կղզիներում, Պուերտո Ռիկոյում կամ Միացյալ Նահանգների Վիրջինյան կղզիներում, շտապ օգնության ծախսերը կփոխհատուցվեն: Ոչ բոլոր հիվանդանոցներն ու բժիշկներն են ընդունում Medicaid-ը: (Medi-Cal-ն այն է, ինչ Medicaid-ը կոչվում է միայն Californiaյում): Եթե շտապ օգնության կարիք ունեք Californiaյից դուրս, հնարավորինս շուտ տեղեկացրեք հիվանդանոցի կամ շտապ օգնության բժշկին, որ ունեք Medi-Cal և Molina Healthcare-ի անդամ եք:

Խնդրեք հիվանդանոցին պատճենել Ձեր Molina Healthcare ID քարտը: Տեղեկացրեք հիվանդանոցին և բժիշկներին, որ հաշիվ ներկայացնեն Molina Healthcare-ին: Եթե այլ նահանգում ստացած ծառայությունների համար հաշիվ եք ստանում, անմիջապես զանգահարեք Molina Healthcare-ին: Մենք կաշխատենք հիվանդանոցի և/կամ բժշկի հետ՝ կազմակերպելու, որպեսզի Molina Healthcare-ը վճարի Ձեր խնամքի համար:

Եթե Դուք գտնվում եք Californiaյից դուրս և շտապ պետք է ձեռք բերեք ամբուլատոր դեղատոմսով տրամադրվող դեղեր, խնդրեք, որ դեղատնից զանգահարեն Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 հեռախոսահամարով:

Նշում՝ Ամերիկյան հնդկացիները կարող են ծառայություններ ստանալ ցանցում չներառված IHCP-ներում:

Եթե հարցեր ունեք ցանցից դուրս կամ ծառայության տարածքից դուրս խնամքի վերաբերյալ, զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Եթե գրասենյակը փակ է, սակայն Դուք ցանկանում եք օգնություն ստանալ Molina Healthcare-ի ներկայացուցչի կողմից, զանգահարեք Բուժքույրերի խորհրդատվության գիծ՝ 1-888-275-8750 (անգլերեն) կամ 1-866-648-3537 (իսպաներեն) հեռախոսահամարներով:

Եթե Դուք շտապ օգնության կարիք ունեք Molina Healthcare-ի սպասարկման տարածքից դուրս, գնացեք մոտակա շտապ բուժօգնության հաստատություն: Եթե Դուք ճամփորդում եք Միացյալ Նահանգներից դուրս և շտապ օգնության կարիք ունեք, Molina Healthcare-ը չի ծածկի Ձեր խնամքի ծախսերը: Շտապ օգնության մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք այս գլխի «Շտապ օգնություն» բաժինը:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել Californiaյի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Պատվիրակված մոդելներ՝ կառավարվող խնամքի մատակարարներ (MCP-ներ)

Molina Healthcare-ը անդամների համար նշանակում է Բժշկական խմբեր/Անկախ պրակտիկայի ասոցիացիաներ(IPA-ներ): Բժշկական խմբերը/IPA-ները պայմանագիր են ստորագրում Molina Healthcare-ի հետ և ունեն մատակարարների ցանց: Բժշկական խմբերը/ IPA-ները կազմակերպում են, որպեսզի մի խումբ բժիշկներ, մասնագետներ և այլ առողջապահական ծառայությունների մատակարարներ ընդունեն Molina Healthcare-ի անդամներին: Ձեր բժիշկը Բժշկական խմբի/ IPA-ի հետ միասին հոգում է Ձեր բոլոր բժշկական կարիքները: Սա կարող է ներառել մասնագետ բժիշկների այցելելու կամ բժշկական ծառայություններից օգտվելու թույլտվություն ստանալը, օրինակ՝ լաբորատոր թեստերի, ռենտգեն հետազոտությունների և/կամ հիվանդանոց ընդունվելու համար:

Եթե ունեք հարցեր հաստատում ստանալու, ցանցից դուրս կամ ծառայության տարածքից դուրս խնամքի վերաբերյալ, զանգահարեք Ձեր բժշկական խմբին/IPA-ին՝ օգտագործելով ձեր ID քարտում նշված հեռախոսահամարը: Օգնություն ստանալու համար կարող եք նաև զանգահարել Molina Անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711):

Ինչպես է կազմակերպվում կառավարվող խնամքը

Molina Healthcare-ը կառավարվող խնամքի առողջապահական պլան է: Molina Healthcare-ը խնամք է տրամադրում պլանի այն անդամներին, ովքեր ապրում են Los Angeles շրջանում: Կառավարվող խնամքի դեպքում Ձեր առաջնային խնամքի մատակարարը, մասնագետները, կլինիկան, հիվանդանոցը և այլ մատակարարները միասին աշխատում են Ձեր մասին հոգ տանելու համար:

Molina Healthcare-ը պայմանագիր է կնքում բժշկական խմբերի հետ՝ Molina Healthcare-ի անդամներին խնամք տրամադրելու համար: Բժշկական խումբը կազմված է բժիշկներից, որոնք առաջնային խնամքի մատակարարներ և մասնագետներ են: Բժշկական խումբն աշխատում է այլ մատակարարների հետ, ինչպիսիք են լաբորատորիաները և երկարատև օգտագործման բժշկական սարքավորումների մատակարարները: Բժշկական խումբը կապված է նաև հիվանդանոցի հետ: Ստուգեք Ձեր Molina Healthcare ID քարտը՝ Ձեր առաջնային խնամքի մատակարարի, բժշկական խմբի և հիվանդանոցի անվանումներն իմանալու համար:

Երբ Դուք միանում եք Molina Healthcare-ին, Դուք ընտրում եք կամ կցվում եք առաջնային խնամքի որևէ մատակարարի: Ձեր առաջնային խնամքի մատակարարը բժշկական խմբի մասն է կազմում: Ձեր առաջնային խնամքի մատակարարը և բժշկական խումբը կառավարում են Ձեր բոլոր բժշկական կարիքների գնահատումն ու խնամքը: Ձեր առաջնային խնամքի մատակարարը կարող է Ձեզ ուղղորդել մասնագետների մոտ կամ նշանակել լաբորատոր թեստեր և ռենտգեն: Եթե Ձեզ անհրաժեշտ են ծառայություններ, որոնք պահանջում են նախնական հաստատում (նախնական թույլտվություն), Molina Healthcare-ը կամ Ձեր բժշկական խումբը կվերանայեն նախնական հաստատումը (նախնական թույլտվությունը) և կորոշեն՝ արդյոք կարիք կա հաստատելու ծառայությունը:



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Շատ դեպքերում Դուք պետք է դիմեք նեղ մասնագետների և այլ առողջապահական մասնագետների, ովքեր աշխատում են նույն բժշկական խմբի հետ, ինչ Ձեր առաջնային խնամքի մատակարարը: Բացառությամբ արտակարգ դեպքերի, Դուք պետք է նաև հիվանդանոցային օգնություն ստանաք Ձեր բժշկական խմբի հետ կապված հիվանդանոցից:

Երբեմն Ձեզ կարող է անհրաժեշտ լինել այնպիսի ծառայություն, որը հասանելի չէ բժշկական խմբի մատակարարի կողմից: Այդ դեպքում Ձեր առաջնային խնամքի մատակարարը Ձեզ կուղեգրի այլ մատակարարի մոտ, որը մեկ այլ բժշկական խմբի անդամ է կամ գտնվում է ցանցից դուրս: Ձեր առաջնային խնամքի մատակարարը կպահանջի նախնական հաստատում (նախնական թույլտվություն), որպեսզի Դուք կարողանաք գնալ այդ մատակարարի մոտ:

Շատ դեպքերում Դուք պետք է նախնական թույլտվություն ունենաք Ձեր առաջնային խնամքի մատակարարից, բժշկական խմբից կամ Molina Healthcare-ից, նախքան կկարողանաք այցելել ցանցում չներառված մատակարարի կամ այլ մատակարարի, որը Ձեր բժշկական խմբի մաս չէ: Դուք նախնական հաստատման (նախնական թույլտվության) կարիք չունեք շտապ օգնության ծառայություններից, ընտանիքի պլանավորման ծառայություններից կամ հոգեկան առողջության հետ կապված ներցանցային ծառայություններից օգտվելու համար:

Անդամներ, ովքեր ունեն և՛ Medicare, և՛ Medi-Cal

Այն անդամները, որոնք ունեն Medicare և Medi-Cal, պետք է հնարավորություն ունենան օգտվելու մատակարարներից, որոնք իրենց Medicare-ի սպահովագրության մաս են կազմում, ինչպես նաև մատակարարներից, որոնք ներառված են Medi-Cal պլանի ծածկույթում: Անհրաժեշտության դեպքում դիմեք Medicare Advantage EOC-ին կամ Medicare Advantage Provider-ի տեղեկատուին:

Բժիշկներ

Որպես Ձեր առաջնային խնամքի մատակարար՝ Դուք կընտրեք բժիշկ կամ այլ մատակարար Molina Healthcare-ի Մատակարարների տեղեկատուից: Ձեր ընտրած առաջնային խնամքի մատակարարը պետք է լինի ներցանցային մատակարար: Molina Healthcare-ի Մատակարարների տեղեկատուի պատճեն ստանալու համար զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Այն կարող եք գտնել նաև առցանց՝ հետևյալ հասցեով www.MolinaHealthcare.com:

Եթե Դուք ընտրում եք նոր առաջնային խնամքի մատակարարի, ապա պետք է նաև զանգահարեք Ձեր նախընտրած առաջնային խնամքի մատակարարին՝ համոզվելու համար, որ նա նոր հիվանդներ է ընդունում:

Եթե Դուք բժիշկ եք ունեցել նախքան Molina Healthcare-ի անդամ դառնալը, և այդ բժիշկը Molina Healthcare-ի ցանցում ներառված չէ, կարող եք սահմանափակ ժամանակով շարունակել աշխատել տվյալ բժշկի հետ: Սա կոչվում է խնամքի շարունակականություն: Շարունակական խնամքի մասին ավելին կարող եք կարդալ այս ձեռնարկում: Ավելին իմանալու համար՝ զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711):



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Եթե Ձեզ անհրաժեշտ է նեղ մասնագետ, Ձեր առաջնային ինսամբի մատակարարը Ձեզ կուղեգրի Molina Healthcare-ի ցանցում ներառյալ մասնագետի մոտ: Որոշ մասնագետներ ուղեգիր չեն պահանջում: Ուղեգրերի մասին ավելին իմանալու համար՝ կարդացեք այս գլխի «Ուղեգրեր» բաժինը:

Հիշեք, որ եթե Դուք չեք ընտրում առաջնային ինսամբի մատակարարի, Molina Healthcare-ը մատակարար կընտրի Ձեզ համար, եթե Medi-Cal-ից բացի այլ համապարփակ առողջության ապահովագրություն չունեք: Ձեր առողջական խնդիրների մասին Դուք լավագույնս եք տեղյակ, այնպես որ, ցանկալի է, որ ինքներդ ընտրեք մատակարարի: Եթե Դուք և՛ Medicare-ի, և՛ Medi-Cal-ի անդամ եք, կամ եթե ունեք այլ առողջապահական ապահովագրություն, Դուք ստիպված չեք լինի առաջնային ինսամբի մատակարար ընտրելու Molina Healthcare-ից:

Եթե ցանկանում եք փոխել Ձեր առաջնային ինսամբի մատակարարին, առաջնային ինսամբի մատակարար պետք է ընտրեք Molina Healthcare-ի մատակարարների տեղեկատուից: Համոզվեք, որ առաջնային ինսամբի մատակարարը ընդունում է նոր հիվանդներ: Ձեր առաջնային ինսամբի մատակարարին փոխելու համար զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Դուք կարող եք նաև Ձեր առաջնային ինսամբի մատակարարին փոխել MyMolina-ում գրանցվելուց հետո:

Հիվանդանոցներ

Արտակարգ իրավիճակների դեպքում զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա շտապ օգնության սենյակ:

Եթե արտակարգ իրավիճակ չէ, սակայն Դուք հիվանդանոցային ինսամբի կարիք ունեք, Ձեր առաջնային ինսամբի մատակարարը կորոշի, թե որ հիվանդանոց եք գնալու: Դուք պետք է գնաք այնպիսի հիվանդանոց, որից օգտվում է Ձեր առաջնային ինսամբի մատակարարը, և որը գտնվում է Molina Healthcare-ի մատակարարների ցանցում: Մատակարարների գրացուցակը թվարկում է հիվանդանոցները Molina Healthcare ցանցում:

Կանանց առողջության մասնագետներ

Դուք կարող եք դիմել կանանց առողջության մասնագետի Molina Healthcare-ի ցանցում, որպեսզի ստանաք ապահովագրված ինսամբ, որն անհրաժեշտ է կանանց կանխարգելիչ և ընթացիկ ինսամբի ծառայությունների մատուցման համար: Այս ծառայություններից օգտվելու Ձեր առաջնային ինսամբի մատակարարի կողմից ուղեգրի կամ թույլտվության կարիք չկա: Կանանց առողջության մասնագետ գտնելու հարցում օգնության համար կարող եք զանգահարել 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Կարող եք զանգահարել նաև 24/7 Բուժքույրերի խորհրդատվական գիծ՝ 1-888-275-8750 (անգլերեն) կամ 1-866-648-3537 (իսպաներեն) հեռախոսահամարներով:

Որպեսզի օգտվեք ընտանիքի պլանավորման ծառայություններից, պարտադիր չէ, որ Ձեր մատակարարը լինի Molina Healthcare մատակարարների ցանցում: Դուք կարող եք ընտրել Medi-Cal-ի ցանկացած մատակարարի և այցելել նրան առանց ուղեգրի կամ նախնական հաստատման (նախնական թույլտվության): Molina Healthcare մատակարարների ցանցում չներառված Medi-Cal մատակարար գտնելու հարցում օգնության համար զանգահարեք 1-888-665-4621 հեռախոսահամարով:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Մատակարարների տեղեկատու

Molina Healthcare-ի Մատակարարների տեղեկատուում ներկայացվում են Molina Healthcare-ի ցանցում ներառված մատակարարները: Ցանցը մատակարարների խումբն է, որն աշխատում է Molina Healthcare-ի հետ:

Molina Healthcare-ի Մատակարարների տեղեկատուի մեջ նշված են հիվանդանոցները, առաջնային ինամբի մատակարարները, մասնագետները, բուժքույրերը, բուժքույր մանկաբարձները, բժիշկների օգնականները, ընտանիքի պլանավորման մատակարարները, FQHC-ները, հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ մատուցողները, կառավարվող երկարաժամկետ ծառայություններն ու աջակցությունը (MLTSS), Անկախ ծննդյան կենտրոնները (FBCs), IHCP-ները և RHC-ները:

Մատակարարների տեղեկատուի մեջ ներկայացվում են Molina Healthcare-ի ներցանցային մատակարարների անուններ, մասնագիտություններ, հասցեներ, հեռախոսահամարներ, աշխատանքային ժամեր և լեզուներ: Այն կտեղեկացնի Ձեզ՝ արդյոք մատակարարը նոր հիվանդներ է ընդունում: Այն նաև տեղեկատվություն է տրամադրում շենքի ֆիզիկական հնարավորությունների, օրինակ՝ ավտոկայանատեղիների, թեքահարթակների, բազրիքներով աստիճանների և լայն դռներով և ճաղավանդակներով գուլգարանների առկայության մասին:

Բժշկի կրթության, մասնագիտական որակավորման, օրդինատուրա ավարտելու, վերապատրաստման և սերտիֆիկացման մասին ավելին իմանալու համար զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711):

Մատակարարների տեղեկատուն կարող եք գտնել նաև առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Եթե Ձեզ անհրաժեշտ է Մատակարարների տեղեկատուի տպագիր տարբերակը, զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711):

Medi-Cal Rx-ի հետ աշխատող դեղատների ցանկը կարող եք գտնել Medi-Cal Rx դեղատների տեղեկատուում՝ հետևյալ հասցեով՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>: Դուք կարող եք նաև գտնել Ձեր մոտ գտնվող դեղատուն՝ զանգահարելով Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 (TTY 1-800-977-2273) և սեղմելով 7 կամ 711:

Ժամանակին հասանելիություն ինամբին

Ձեր ներցանցային մատակարարը պետք է Ձեզ համար ապահովի ինամբի ժամանակին հասանելիություն՝ ելնելով Ձեր առողջապահական կարիքներից: Նրանք, նվազագույնը, պետք է առաջարկեն Ձեզ հանդիպում ստորև աղյուսակում նշված ժամկետներում:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Հանդիպման տեսակը	Դուք պետք է կարողանաք հանդիպում ստանալ հետևյալ շրջանակներում.
Նախնական համաձայնեցում (նախնական թույլտվություն) չպահանջող հանդիպումներ՝ շտապ բուժօգնություն ստանալու համար	48 ժամ
Նախնական հաստատում (նախնական թույլտվություն) պահանջող հանդիպումներ՝ հրատապ բուժօգնություն ստանալու համար	96 ժամ
Առաջնային բուժօգնության ոչ հրատապ (ընթացիկ) հանդիպումներ	10 աշխատանքային օր
Ոչ հրատապ (ընթացիկ) հանդիպումներ՝ մասնագիտական ինամբ ստանալու համար	15 աշխատանքային օր
Ոչ հրատապ (ընթացիկ) այցելություններ հոգեկան առողջության մասնագետին (ոչ բժիշկ)	10 աշխատանքային օր
Չեռագա ինամբի համար նախատեսված հանդիպումներ հոգեկան առողջության մատակարարի (ոչ բժշկի) հետ՝ ոչ հրատապ (ընթացիկ) ինամբի դեպքում	Վերջին հանդիպումից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում
Վնասվածքների, հիվանդությունների կամ առողջական այլ խնդիրների ախտորոշման կամ բուժման հետ կապված լրացուցիչ (օժանդակ) ծառայություններ ստանալու համար ոչ հրատապ (աջակցող) այցեր	15 աշխատանքային օր

Սպասման ժամանակի այլ ստանդարտներ	Դուք պետք է կարողանաք կապ հաստատել նշված ժամերի շրջանակում.
Անդամների սպասարկման բաժնի հեռախոսային սպասման ժամերին սովորական աշխատանքային ժամերին	10 րոպե
Բուժքույրերի խորհրդատվության գծի հեռախոսային սպասման ժամերին	30 րոպե (միացված է բուժքրոջը)

Երբեմն հանդիպման համար ավելի երկար սպասելը ինդիք չէ: Ձեր մատակարարը կարող է \$եզ ավելի երկար սպասեցնել, եթե դա վնասակար չէ Ձեր առողջության համար: Ձեր գրառումներում պետք է նշվի, որ ավելի երկար սպասելու ժամանակը չի վնասի Ձեր առողջությանը: Դուք կարող եք սպասել, մինչև ավելի ուշ Ձեզ համար հանդիպում կնշանակեն, կամ կարող եք զանգահարել Molina Healthcare՝ Ձեր



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

ընտրած մեկ այլ բժշկի դիմելու համար: Ձեր մատակարարը և Molina Healthcare-ը հարգանքով կվերաբերվեն Ձեր ցանկությանը:

Կախված Ձեր կարիքներից՝ Ձեր բժիշկը կարող է խորհուրդ տալ կանխարգելիչ ծառայությունների, ընթացիկ առողջական խնդիրներին հետևելու հատուկ ժամանակացույց, ինչպես նաև կարող է ուղեգրել նեղ մասնագետների մոտ:

Տեղեկացրեք մեզ, եթե Ձեզ անհրաժեշտ են թարգմանչական ծառայություններ, ներառյալ ժեստերի լեզուն, Molina Healthcare զանգահարելիս կամ ապահովագրված ծառայություններ ստանալիս: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք խստորեն հորդորում ենք չօգտվել անչափահասներից կամ ընտանիքի անդամներից՝ որպես թարգմանիչներ: Մեր կողմից առաջարկվող թարգմանչական ծառայությունների մասին ավելին իմանալու համար զանգահարեք 1-888-665-4621:

Եթե Medi-Cal Rx դեղատանը թարգմանչի ծառայությունների կարիք ունեք, ներառյալ ժեստերի լեզուն, զանգահարեք Medi-Cal Rx-ի Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-977-2273 հեռախոսահամարով, որը գործում է շուրջօրյա: TTY-ից օգտվող անձինք կարող են զանգահարել 711 երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8-ից մինչև երեկոյան 5-ը:

Ժամանակի և հեռավորության գործոնները խնամքի կազմակերպման մեջ

Molina Healthcare-ը Ձեր խնամքն ապահովելու համար պետք է հետևի ճանապարհի վրա ծախսվող ժամանակի և հեռավորության չափանիշներին: Այդ չափանիշներն օգնում են համոզվել, որ Դուք կարող եք բուժօգնություն ստանալ՝ առանց ստիպված լինելու Ձեր բնակության վայրից շատ հեռու գնալու: Ժամանակի և հեռավորության չափանիշները կախված են այն շրջանից, որտեղ Դուք ապրում եք:

Եթե Molina Healthcare-ը չկարողանա Ձեզ բուժօգնություն տրամադրել ժամանակի և հեռավորության այս ստանդարտների շրջանակներում, Առողջապահական ծառայությունների վարչությունը (DHCS) կարող է թույլ տալ կիրառել մեկ այլ ստանդարտ, որը կոչվում է այլընտրանքային հասանելիության ստանդարտ: Ձեր բնակության վայրի համար Molina Healthcare-ի սահմանած ժամանակի և հեռավորության չափանիշներին ծանոթանալու համար՝ այցելեք www.MolinaHealthcare.com: Կամ կարող եք զանգահարել 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711) հեռախոսահամարով:

Մատակարարը համարվում է հեռու, եթե Դուք չեք կարող հասնել նրան՝ ըստ Molina Healthcare-ի սահմանած ժամանակի և հեռավորության՝ անկախ նրանից, թե այլընտրանքային հասանելիության ինչ ստանդարտ կարող է Molina Healthcare-ը կիրառել Ձեր փոստային կոդի համար:

Եթե Ձեր բնակության վայրից հեռու գտնվող մատակարարի խնամքի կարիքն ունեք, զանգահարեք անդամների ծառայությունների բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Ձեզ կարող են օգնել բուժօգնություն ստանալ Ձեզ ավելի մոտ գտնվող մատակարարի մոտ: Եթե Molina Healthcare-ը չի կարող Ձեզ բժշկական օգնություն տրամադրել մոտակա մատակարարի մոտ, կարող եք խնդրել Molina Healthcare-ին կազմակերպել Ձեր փոխադրումը Ձեր մատակարարի մոտ, նույնիսկ եթե այդ մատակարարը հեռու է Ձեր բնակավայրից:



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 7:00-19:00: Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Եթե ունեք օգնության կարիք՝ կապված մատակարար դեղատների հետ, զանգահարեք Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 (TTY 1-800-977-2273) և սեղմեք 7 կամ 711:

Այցելություններ

Երբ բուժօգնության կարիք ունեք.

- Չանգահարեք Ձեր առաջնային խնամքի մատակարարին:
- Պատրաստեք Ձեր նույնականացման համարը՝ Molina Healthcare-ին զանգահարելու համար
- Թողեք հաղորդագրություն Ձեր անունով և հեռախոսահամարով, եթե գրասենյակը փակ է:
- Այցելության ժամանակ Ձեզ հետ տարեք Ձեր Medi-Cal BIC քարտը և Molina Healthcare ID քարտը:
- Անհրաժեշտության դեպքում փոխադրամիջոց խնդրեք Ձեր հանդիպման համար՝զանգահարելով 1-844-292-2688 կամ 1-888-665-4621 հեռախոսահամարներով:
- Անհրաժեշտության դեպքում լեզվական օգնություն կամ թարգմանչական ծառայություններ խնդրեք նախքան Ձեր այցելությունը, որպեսզի ծառայությունները ստանաք Ձեր այցելության ժամանակ:
- Ժամանակին ներկայացեք Ձեր հանդիպմանը, ժամանեք մի քանի րոպե շուտ՝ գրանցվելու, ձևերը լրացնելու և Ձեր առաջնային խնամքի մատակարարի հարցերին պատասխանելու համար:
- Անհապաղ զանգահարեք, եթե չեք կարող գալ հանդիպմանը կամ ուշանում եք:
- Ձեր հարցերն ու դեղերի մասին տեղեկատվությունը պատրաստ պահեք:

Եթե Դուք արտակարգ իրավիճակում եք, զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա շտապ օգնության սենյակ: Եթե օգնության կարիք ունեք՝ որոշելու, թե որքան հրատապ է Ձեզ անհրաժեշտ խնամքը, իսկ Ձեր առաջնային խնամքի մատակարարը հասանելի չէ Ձեզ հետ խոսելու համար, զանգահարեք Molina Healthcare-ի Բուժքույրերի խորհրդատվության գիծ՝ 1-888-275-8750 (անգլերեն) կամ 1-866-648-3537 (իսպաներեն) հեռախոսահամարով:

Ինչպես հասնել Ձեր հանդիպմանը

Եթե հնարավորություն չունեք՝ ապահովագրված ծառայությունների ստանալու համար մատակարարի մոտ հասնելու և վերադառնալու, Molina Healthcare-ը կարող է օգնել կազմակերպել Ձեր փոխադրման հարցը: Կախված Ձեր իրավիճակից՝ Դուք կարող եք օգտվել բժշկական կամ ոչ բժշկական փոխադրման հնարավորությունից: Այս տրանսպորտային ծառայությունները նախատեսված չեն արտակարգ իրավիճակների համար և կարող են հասանելի լինել անվճար:

Եթե Դուք արտակարգ իրավիճակում եք, զանգահարեք **911**: Փոխադրամիջոցից օգտվելու հնարավորությունը հասանելի է այնպիսի ծառայությունների և հանդիպումների համար, որոնք շտապ բուժօգնություն չեն պահանջում:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Լրացուցիչ տեղեկությունների համար՝ կարդացեք այս գլխի «Փոխադրամիջոցից օգտվելու արտոնություններ շտապ բուժօգնություն չպահանջող իրավիճակներում» բաժինը:

Չեղարկում և հետաձգում

Եթե չեք կարողանում հասնել Ձեր հանդիպման վայր, անմիջապես զանգահարեք Ձեր մատակարարի գրասենյակ: Մատակարարներից շատերը պահանջում են, որ զանգահարեք հանդիպումից 24 ժամ (1 աշխատանքային օր) առաջ, եթե ստիպված եք չեղարկել հանդիպումը: Եթե հաճախ եք բաց թողնում նշանակված հանդիպումները, Ձեր մատակարարը կարող է դադարեցնել Ձեզ ինսամբ տրամադրելը, և Դուք ստիպված կլինեք գտնել նոր մատակարար:

Վճարում

Դուք ստիպված չեք լինի վճարել ապահովագրված ծառայությունների համար, եթե մասնաբաժին չունեք երկարաժամկետ ինսամբի ծախսերում: Ավելին իմանալու համար՝ կարդացեք «Երկարատև ինսամբ ստացող և ծախսերի մասնաբաժին ունեցող անդամների համար» բաժինը՝ Գլուխ 2-ում: Շատ դեպքերում Դուք մատակարարի կողմից հաշիվ-ապրանքագիր չեք ստանա: Դուք պետք է ցույց տաք Ձեր Molina Healthcare ID քարտը և Ձեր Medi-Cal BIC քարտը, երբ առողջապահական ծառայություններ կամ դեղատոմսեր եք ստանում, որպեսզի Ձեր մատակարարն իմանա, թե ումից գանձել Ձեր բուժօգնության ծախսերը: Մատակարարի կողմից Դուք կարող եք ստանալ Արտոնությունների բացատրություն (EOB) կամ քաղվածք: Արտոնությունների բացատրությունները և քաղվածքները հաշիվ-ապրանքագրեր չեն:

Եթե հաշիվ-ապրանքագիր եք ստանում, զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Եթե դեղատոմսերի համար հաշիվ-ապրանքագիր եք ստանում, զանգահարեք Medi-Cal Rx 1-800-977-2273 (TTY 1-800-977-2273) հեռախոսահամարով և սեղմեք 7 կամ 711: Կամ այցելեք Medi-Cal Rx կայքը՝ հետևյալ հասցեով՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>:

Molina Healthcare-ին հայտնեք Ձեզից գանձվող գումարի չափը, ծառայության ամսաթիվը և հաշիվ-ապրանքագրի պատճառը: Molina Healthcare-ը կօգնի Ձեզ պարզել՝ հաշիվ-ապրանքագրի ծառայությունը ծածկվելու է, թե ոչ: Դուք չպետք է վճարեք մատակարարներին Molina Healthcare-ի ապահովագրված ծառայությունների համար: Եթե Դուք բուժօգնություն եք ստանում ցանցում չներառված մատակարարի կողմից և չեք ստացել նախնական հաստատում (նախնական թույլտվություն) Molina Healthcare-ի կողմից, հնարավոր է՝ ստիպված լինեք վճարել Ձեր ստացած ինսամբի համար:

Դուք պետք է ստանաք նախնական հաստատում (նախնական թույլտվություն) Molina Healthcare-ի կողմից՝ նախքան ցանցում չգրանցված մատակարարին այցելելը, բացառությամբ այն դեպքերի, երբ.

- Ձեզ անհրաժեշտ է շտապ օգնություն: Այդ դեպքում անհրաժեշտ է զանգահարել 911 կամ գնալ մոտակա հիվանդանոց:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

- Դուք ընտանիքի պլանավորման կամ սեռական ճանապարհով փոխանցվող վարակների ստուգման ծառայությունների կարիք ունեք, ինչի դեպքում կարող եք դիմել Medi-Cal-ի ցանկացած մատակարարի՝ առանց նախնական հաստատման (նախնական թույլտվության):
- Դուք կարիք ունեք հոգեկան առողջության ծառայությունների, ինչի դեպքում Դուք կարող եք գնալ ներցանցային մատակարարի կամ շրջանի հոգեկան առողջության պլանի մատակարարի մոտ՝ առանց նախնական հաստատման (նախնական թույլտվության):

Եթե կարիք ունեք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ինամբ ստանալ ցանցում չներառված մատակարարի կողմից, որովհետև այն հասանելի չէ Molina Healthcare-ի ցանցում, Դուք ստիպված չեք լինի վճարել, եթե բուժօգնությունը ներառում է Medi-Cal-ի կողմից ծածկվող ծառայություն, և Դուք դրա համար ստացել եք նախնական հաստատում (նախնական թույլտվություն) Molina Healthcare-ի կողմից: Շտապ բժշկական օգնության, շտապ օգնության և զգայուն ծառայությունների մասին ավելին իմանալու համար՝ օգտվեք այս գլխի՝ համապատասխան վերնագրերը կրող բաժիններից:

Եթե հաշիվ-ապրանքագիր եք ստանում, կամ Ձեզ ինդրում են վճարել համավճար, որը Ձեր կարծիքով Դուք չպետք է վճարեք, զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Եթե վճարում եք հաշիվ-ապրանքագիրը, կարող եք Molina Healthcare-ին ներկայացնել փոխհատուցման պահանջի ձև: Դուք պետք է գրավոր կերպով Molina Healthcare-ին տեղեկացնեք այն ապրանքի կամ ծառայության մասին, որի համար վճարել եք: Molina Healthcare-ը կկարդա Ձեր հայցը և կորոշի, թե արդյոք կարող եք հետ ստանալ գումարը:

Հարցերի դեպքում զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711):

Եթե ծառայություններ եք ստանում Վետերանների հարցերով զբաղվող համակարգում, կամ չծածկվող կամ չարտոնված ծառայություններ եք ստանում California-ից դուրս, հնարավոր է՝ ստիպված լինեք պատասխանատվություն կրել վճարումների համար:

Molina Healthcare-ը Ձեր ծախսած գումարը չի վերադարձնի Ձեզ, եթե.

- Ծառայությունները չեն ծածկվում Medi-Cal-ի կողմից, օրինակ՝ կոսմետիկ ծառայությունները:
- Դուք ունեք Medi-Cal-ի ծախսերի չվճարված մասնաբաժին:
- Դուք գնացել եք այնպիսի բժշկի մոտ, որը չի ընդունում Medi-Cal, և ստորագրել եք մի ձև, որտեղ ասվում էր, որ Դուք, ամեն դեպքում, ցանկանում եք զննում անցնել, և Դուք ինքներդ եք վճարելու ծառայությունների համար:
- Դուք ինդրում եք, որ Ձեզ հետ վճարեն Medicare Մաս D-ի Ձեր Medicare Մաս D պլանով նախատեսված դեղատոմսերի համավճարների համար:

Ուղեգրեր

Եթե Ձեր ինամբի համար նեղ մասնագետի կարիք ունեք, Ձեր առաջնային ինամբի մատակարարը կամ մեկ այլ մասնագետ Ձեզ ուղեգիր կտրամադրի: Նեղ մասնագետը մատակարար է, որը կենտրոնանում է առողջապահական ծառայության մեկ



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

տեսակի վրա: Ձեզ ուղեգրող բժիշկը կաշխատի Ձեզ հետ՝ մասնագետ ընտրելու համար: Համոզվելու համար, որ Դուք կարող եք ժամանակին դիմել մասնագետի, Առողջապահական ծառայությունների վարչությունը (DHCS) անդամների համար այցեր նշանակելու ժամկետներ է սահմանում: Այս ժամկետները թվարկված են այս գլխի՝ «Ժամանակին հասանելիություն ինամբին» բաժնում: Ձեր առաջնային ինամբի մատակարարի գրասենյակը կարող է օգնել Ձեզ մասնագետի մոտ այց նշանակելու հարցում:

Այլ ծառայությունները, որոնց համար կարող է ուղեգիր պահանջվել, ներառում են ամբուլատոր պրոցեդուրաներ, ռենտգեն հետազոտություններ, լաբորատոր աշխատանք:

Ձեր առաջնային ինամբի մատակարարը կարող է Ձեզ ձևաթուղթ տալ, որը պետք է տանեք մասնագետի մոտ: Մասնագետը կլրացնի ձևաթուղթը և այն հետ կուղարկի Ձեր առաջնային ինամբի մատակարարին: Մասնագետը Ձեր բուժմամբ կզբաղվի այնքան ժամանակ, քանի դեռ, իր կարծիքով, Դուք բուժման կարիք ունեք: Մասնագիտական ծառայությունները պետք է մատուցեն այն բժիշկները, որոնք Molina կամ Medical Group/IPA ցանցի մաս են կազմում: Եթե ներցանցային մասնագետը հասանելի չէ, մենք կօգնենք գտնել Ձեր պահանջներին համապատասխանող մատակարարի:

Եթե ունեք այնպիսի առողջական խնդիր, որի պատճառով կարիք ունեք երկարատև հատուկ բուժօգնության, դուք կարող եք մշտական ուղեգիր պահանջել: Մշտական ուղեգիր ունենալը նշանակում է, որ Դուք կարող եք նույն մասնագետի մոտ գնալ մեկից ավելի անգամ՝ առանց ամեն անգամ ուղեգիր ստանալու:

Եթե դժվարանում եք ստանալ մշտական ուղեգիր կամ ցանկանում եք ձեռք բերել Molina Healthcare-ի ուղեգրային քաղաքականության պատճենը, զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711):

Ձեզ ուղեգիր պետք չէ հետևյալ ծառայությունների համար.

- PCP-ի մոտ այցելություններ
- Այցեր մանկաբարձին/գինեկոլոգին (OB/GYN)
- Այցեր՝ ստանալու հրատապ կամ շտապ բուժօգնություն:
- Չափահասներին մատուցվող հատուկ ծառայություններ, ինչպիսիք են սեռական բռնության դեպքերը:
- Ընտանիքի պլանավորման ծառայություններ (ավելին իմանալու համար՝ զանգահարեք Ընտանիքի պլանավորման վերաբերյալ տեղեկատվության և ուղղորդման ծառայություն՝ 1-800-942-1054 հեռախոսահամարով):
- ՄԻԱՎ-ի թեստավորում և խորհրդատվություն (12 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար):
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների հետ կապված ծառայություններ (12 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար):
- Կիրոպրակտիկ ծառայություններ (հնարավոր է՝ ուղեգրի կարիք լինի, երբ ծառայությունը տրամադրվում է ցանցում չգրանցված FQHC-ների, RHC-ների և IHCP-ների կողմից):
- Հոգեկան առողջության նախնական գնահատում



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

- Ամբուլատոր այցեր մասնակից ներցանցային մասնագիտացված մատակարարների մոտ
- Առողջապահության ոլորտի համայնքային աշխատողներ
- Դոկայի ծառայություններ

Անչափահասները կարող են ստանալ նաև հոգեկան առողջության հետ կապված որոշ ծառայություններ, զգայուն ծառայություններ և թմրամիջոցների օգտագործման կանխարգելմանն ուղղված ծառայություններ՝ առանց ծնողի կամ ինսամակալի համաձայնության: Ավելին իմանալու համար՝ կարդացեք այս գլխի «Ծառայություններ անչափահասների համաձայնությամբ» բաժնում և «Թմրամիջոցների օգտագործման խանգարումների բուժման ծառայություններ» այս ձեռնարկի Գլուխ 4-ում:

Ուղեգրեր՝ ըստ California-ից քաղցկեղի բուժման հավասար հնարավորությունների ակտի

Բարդ քաղցկեղի արդյունավետ բուժումը կախված է բազմաթիվ գործոններից: Դրանք ներառում են՝ ճիշտ փստորոշում և ժամանակին բուժում ստանալը քաղցկեղի մասնագետների կողմից: Եթե Ձեզ մոտ փստորոշվել է բարդ քաղցկեղ, California-ի քաղցկեղի բուժման հավասար հնարավորությունների նոր ակտը թույլ է տալիս Ձեզ ուղեգիր ինդրել Ձեր բժշկից, որպեսզի ստանաք քաղցկեղի դեմ բուժում ցանցում գրանցված Քաղցկեղի ազգային ինստիտուտի (NCI) քաղցկեղի կենտրոնում, Քաղցկեղի ազգային ինստիտուտի Քաղցկեղի հետազոտությունների համայնքային ծրագրին (NCORP) կցված կենտրոնում կամ քաղցկեղի որակավորված ակադեմիկ կենտրոնում:

Եթե Molina Healthcare-ը չունի Քաղցկեղի ազգային ինստիտուտի կողմից նշանակված քաղցկեղի ներցանցային կենտրոն, Molina Healthcare-ը թույլ կտա Ձեզ ինդրել ուղեգիր՝ քաղցկեղի դեմ California-ում գտնվող, սակայն ցանցում չգրանցված հետևյալ կենտրոններից մեկում, եթե ցանցում չներառված կենտրոնը և Molina Healthcare-ը համաձայն են վճարման հարցում, եթե Դուք չընտրեք քաղցկեղի բուժմամբ զբաղվող այլ մատակարարի:

Եթե Ձեզ մոտ քաղցկեղ է փստորոշվել, դիմեք Molina Healthcare-ին՝ պարզելու համար, թե արդյոք Դուք իրավասու եք օգտվելու քաղցկեղի բուժում տրամադրող հետևյալ կենտրոններից որևէ մեկի ծառայություններից:

Պատրա՛ստ եք թողնել ծխելը: Անգլերենով ծառայությունների մասին ավելին իմանալու համար՝ զանգահարեք 1-800-300-8086 հեռախոսահամարով: Իսպաներենի համար զանգահարեք 1-800-600-8191:

Ավելին իմանալու համար այցելեք www.kickitca.org:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Նախնական հաստատում (նախնական թույլտվություն)

Որոշակի խնամքի դեպքում Ձեր առաջնային խնամքի մատակարարը կամ մասնագետը պետք է Molina Healthcare-ից թույլտվություն ստանա նախքան Ձեզ բուժօգնություն տրամադրելը: Սա կոչվում է նախնական հաստատում կամ նախնական թույլտվություն խնդրել: Դա նշանակում է, որ Molina Healthcare-ը պետք է համոզվի, որ բժշկական առումով կա խնամքի կարիք (անհրաժեշտություն):

Բժշկական առումով անհրաժեշտ ծառայությունները համարվում են ողջամիտ և անհրաժեշտ՝ Ձեր կյանքը պաշտպանելու, Ձեզ լուրջ հիվանդանալուց կամ հաշմանդամությունից զերծ պահելու կամ ախտորոշված հիվանդության կամ վնասվածքի հետևանքով սաստիկ ցավը մեղմելու համար: 21 տարեկանից ցածր անդամների համար Medi-Cal ծառայությունները ներառում են խնամք, որը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ խնդիրը կարգավորելու կամ մեղմելու համար:

Հետևյալ ծառայությունների համար **միշտ** նախնական հաստատման (նախնական թույլտվության) կարիք կա, նույնիսկ եթե դրանք ստանում եք Molina Healthcare-ի ցանցի մատակարարի կողմից:

- Հոսպիտալացում, եթե անհետաձգելի բուժօգնության կարիք չունեք:
- Ծառայություններ Molina Healthcare-ի սպասարկման տարածքից դուրս, եթե անհետաձգելի կամ շտապ բժշկական օգնության կարիք չունեք:
- Ամբուլատոր վիրաբուժություն
- Երկարատև խնամք կամ հմուտ բուժքույրական ծառայություններ բուժքույրական հաստատությունում (ներառյալ մեծահասակների և մանկական ենթասուր խնամքի հաստատությունները, որոնք պայմանագիր են կնքել Առողջապահական ծառայությունների վարչության Ենթասուր խնամքի բաժանմունքի հետ) կամ միջանկյալ խնամքի հաստատություններում (ներառյալ Չարգացման խանգարումներ ունեցող հաշմանդամների միջանկյալ խնամքի հաստատությունը (ICF/DD), ICF/DD-Habilitative-ը (ICF/DD-H), ICF/DD-Nursing-ը (ICF/DD-N)):
- Մասնագիտացված բուժում, վիզուալիզացիա, թեստավորում և պրոցեդուրաներ
- Բժշկական տրանսպորտային ծառայություններ, եթե արտակարգ իրավիճակ չէ:
- Համայնքային աջակցության ծառայություններ

Շտապ օգնության ծառայությունների համար չի պահանջվում նախնական հաստատում (նախնական թույլտվություն):

Molina Healthcare-ն ունի 5 աշխատանքային օր՝ սկսած այն պահից, երբ Molina Healthcare-ը ստանում է ողջամտորեն անհրաժեշտ տեղեկատվությունը նախնական հաստատման (նախնական թույլտվության) հարցումներին պատասխանելու համար (հաստատելու կամ մերժելու համար): Երբ նախնական հաստատման (նախնական թույլտվության) հարցումը կատարվում է մատակարարի կողմից, և Molina Healthcare-ը համարում է, որ ստանդարտ ժամկետին հետևելը կարող է լրջորեն վտանգել Ձեր կյանքը կամ առողջությունը կամ առավելագույն ֆունկցիոնալության հասնելու, պահպանելու կամ վերականգնելու հնարավորությունը, Molina Healthcare-



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
 Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
 Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

ը կկայացնի նախնական հաստատման (նախնական թույլտվության) որոշում 72 ժամից ոչ ուշ ժամկետում: Սա նշանակում է, որ նախնական հաստատման (նախնական թույլտվության) հարցումը ստանալուց հետո Molina Healthcare-ը Ձեզ կտեղեկացնի այնքան արագ, որքան Ձեր առողջական վիճակն է պահանջում, և ոչ ուշ, քան ծառայությունների հարցումից 72 ժամ կամ 5 օր հետո: Կլինիկական կամ բժշկական անձնակազմը, ինչպիսիք են, օրինակ, բժիշկները, բուժքույրերը և դեղագործները, դիտարկում են նախնական հաստատման (նախնական թույլտվության) հարցումները:

Molina Healthcare-ը որևէ կերպ չի ազդում հարցումները դիտարկողների որոշման վրա՝ մերժելու կամ հաստատելու ծածկույթը կամ ծառայությունները: Եթե Molina Healthcare-ը չի հաստատում հարցումը, Molina Healthcare-ը Ձեզ կուղարկի Գործողությունների ծանուցում (NOA) պարունակող նամակ: Գործողությունների ծանուցումը կօգնի Ձեզ հասկանալ, թե ինչպես բողոքարկել, եթե համաձայն չեք որոշման հետ:

Molina Healthcare-ը կկապվի Ձեզ հետ, եթե Molina Healthcare-ին ավելի շատ տեղեկատվություն կամ ավելի շատ ժամանակ պետք լինի՝ Ձեր հարցումը վերանայելու համար:

Շտապ օգնության համար Դուք երբեք նախնական հաստատման (նախնական թույլտվության) կարիք չեք ունենա, նույնիսկ եթե այն դուրս է Molina Healthcare-ի ցանցից կամ Ձեր սպասարկման տարածքից: Սա ներառում է ծննդօգնություն և ծննդաբերություն, եթե Դուք հղի եք: Դուք նախնական հաստատման (նախնական թույլտվության) կարիք չունեք զգայուն խնամքի հետ կապված որոշակի ծառայությունների համար: Չգայուն խնամքի հետ կապված ծառայությունների մասին ավելին իմանալու համար՝ կարդացեք այս գլխի «Չգայուն խնամք» բաժինը:

Նախնական հաստատման (նախնական թույլտվության) հետ կապված հարցերի դեպքում զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711):

Երկրորդ կարծիքներ

Դուք կարող եք ցանկանալ ստանալ երկրորդ կարծիք այն բուժօգնության մասին, որը Ձեր բժշկի կարծիքով Ձեզ անհրաժեշտ է, ինչպես նաև Ձեր ախտորոշման կամ բուժման պլանի մասին: Օրինակ՝ Դուք կարող եք ցանկանալ լսել երկրորդ կարծիք, եթե ցանկանում եք համոզվել, որ Ձեր ախտորոշումը ճիշտ է, վստահ չեք, որ նշանակված բուժման կամ վիրահատության կարիքն ունեք, կամ փորձել եք հետևել բուժման պլանին, և այն արդյունավետ չի եղել: Molina Healthcare-ը կվճարի երկրորդ կարծիքի համար, եթե Դուք կամ Ձեր ներցանցային մատակարարը դիմեք դրա համար, և Դուք երկրորդ կարծիք կստանաք ներցանցային մատակարարի կողմից: Դուք Molina Healthcare-ի կողմից նախնական հաստատման (նախնական թույլտվության) կարիք չունեք՝ ներցանցային մատակարարի կողմից երկրորդ կարծիք ստանալու համար: Եթե ցանկանում եք ստանալ երկրորդ կարծիք, մենք Ձեզ կուղարկենք որակավորված ներցանցային մատակարարի մոտ, որը կարող է Ձեզ տալ այդպիսի կարծիք:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Երկրորդ կարծիք խնդրելու և մատակարարի ընտրության հարցում օգնություն ստանալու համար՝ զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Ձեր ներգանցային մատակարարը կարող է նաև օգնել Ձեզ ստանալ երկրորդ կարծիքի ուղեգիր, եթե ցանկանում եք:

Եթե Molina Healthcare-ի ցանցում չկա այնպիսի մատակարար, որը կարող է Ձեզ երկրորդ կարծիք հայտնել, Molina Healthcare-ը կվճարի ցանցում չներառված մատակարարի կողմից երկրորդ կարծիք ստանալու համար: Molina Healthcare-ը 5 աշխատանքային օրվա ընթացքում Ձեզ կտեղեկացնի, եթե երկրորդ կարծիքի համար Ձեր ընտրած մատակարարը հաստատվել է: Եթե Դուք ունեք քրոնիկ, ծանր կամ լուրջ հիվանդություն, կամ Ձեր առողջությանն ուղիղ և լուրջ վտանգ է սպառնում, ներառյալ, բայց չսահմանափակվելով կյանքի, վերջույթների կամ մարմնի հիմնական մասերի կամ մարմնի գործունեության կորուստ, Molina Healthcare-ը որոշման մասին գրավոր կերպով կհայտնի Ձեզ 72 ժամվա ընթացքում:

Եթե Molina Healthcare-ը մերժում է երկրորդ կարծիքի Ձեր խնդրանքը, կարող եք բողոք ներկայացնել: Բողոքների մասին ավելին իմանալու համար՝ կարդացեք այս ձեռնարկի Գլուխ 6-ում՝ «Բողոքները» բաժնում :

Չգայուն խնամք

Անչափահասի համաձայնության ծառայություններ

Եթե դուք 18 տարեկանից փոքր եք, կարող եք որոշ ծառայություններ ստանալ առանց ծնողի կամ խնամակալի թույլտվության: Այս ծառայությունները կոչվում են անչափահասի համաձայնության ծառայություններ:

Դուք կարող եք ստանալ այս ծառայություններն առանց Ձեր ծնողի կամ խնամակալի թույլտվության:

- Ծառայություններ՝ բռնաբարության և այլ սեռական ոտնձգությունների դեպքում:
- Հղիության ստուգում և խորհրդատվություն:
- Հակաբեղմնավորման հետ կապված ծառայություններ, օրինակ՝ հակաբեղմնավորիչների նշանակում (բացառելով ստերոիդիզացումը):
- Աբորտի ծառայություններ

Եթե Դուք 12 տարեկան կամ ավելի մեծ եք, կարող եք ստանալ հետևյալ ծառայություններն առանց Ձեր ծնողի կամ խնամակալի թույլտվության:

- Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ և խորհրդատվություն, կամ բնակվելու ապաստարանի տրամադրման ծառայություններ՝ հիմք ընդունելով Ձեր հասունությունը և սեփական առողջության կազմակերպմանը մասնակցելու կարողությունը:
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ խորհրդատվություն, կանխարգելում, թեստավորում և բուժում:
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելում, թեստավորում և բուժում, ներառյալ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, ինչպիսիք են սիֆիլիսը, գոնորեան, քլամիդիան և հերպեսի սիմպլեքսը:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

- Թմրանյութերի օգտագործման խանգարումների բուժում թմրամիջոցների և ալկոհոլի չարաշահման դեմ, ներառյալ զննում, գնահատում, միջամտություն և ուղեգրման ծառայություններ:
 - Ավելին իմանալու համար՝ կարդացեք «Թմրանյութերի օգտագործման խանգարումների բուժման ծառայություններ» բաժինն այս ձեռնարկի Գլուխ 4-ում:

Հիիության ստուգման, հակաբեղմնավորման ծառայությունների կամ սեռական ճանապարհով փոխանցվող վարակներով զբաղվող ծառայությունների համար պարտադիր չէ, որ մատակարարը կամ կլինիկան լինեն Molina Healthcare-ի ցանցից: Դուք կարող եք ընտրել Medi-Cal-ի ցանկացած մատակարարի և այցելել նրան՝ օգտվելու այս ծառայություններից առանց ուղեգրման կամ նախնական հաստատման (նախնական թույլտվության):

Ցանցում չներառված մատակարարի կողմից մատուցվող այն ծառայությունները, որոնք կապված չեն զգայուն խնամքի հետ, չեն կարող ծածկվել: Molina Healthcare Medi-Cal ցանցում չներառված Medi-Cal մատակարար գտնելու կամ մատակարարին հասնելու համար փոխադրման հարցում օգնություն խնդրելու համար՝ զանգահարեք 1-888-665-4621 հեռախոսահամարով: Հակաբեղմնավորման ծառայությունների հետ կապված լրացուցիչ տեղեկությունների համար՝ կարդացեք «Կանխարգելիչ և առողջապահական ծառայություններ և քրոնիկ հիվանդությունների կառավարում» բաժինն այս ձեռնարկի Գլուխ 4-ում:

Անչափահասների համաձայնությամբ մատուցվող ծառայությունների համար, որոնք ամբուլատոր հոգեկան առողջության ծառայություններ են, Դուք կարող եք առանց ուղղորդման և առանց նախնական հաստատման (նախնական թույլտվություն) դիմել ներցանցային կամ ցանցում չներառված մատակարարի: Պարտադիր չէ, որ Ձեր առաջնային խնամքի մատակարարը Ձեզ ուղեգրի, և Դուք կարիք չունեք Molina Healthcare-ի կողմից ստանալու նախնական հաստատում (նախնական թույլտվություն) անչափահասների համաձայնությամբ ապահովագրված ծառայություններ ստանալու համար:

Molina Healthcare-ը չի ծածկում անչափահասների համաձայնությամբ մատուցվող ծառայությունները, եթե դրանք հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ են: Ձեր բնակության շրջանի հոգեկան առողջության շրջանային պլանը ծածկում է անչափահասների համաձայնությամբ տրամադրվող այն ծառայությունները, որոնք հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ են: Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունների համար զանգահարեք հոգեկան առողջության Ձեր շրջանային պլանին կամ Molina Healthcare Behavioral Health կազմակերպությանը ցանկացած ժամանակ՝ օրը 24 ժամ, շաբաթը՝ 7օր: Բոլոր շրջանների անվճար հեռախոսահամարներն առցանց գտնելու համար այցելեք՝

<http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx>:

Անչափահասները կարող են առանձին զրուցել ներկայացուցչի հետ իրենց առողջական խնդիրների մասին՝ զանգահարելով 24/7 Բուժքույրերի խորհրդատվության գիծ՝ 1-888-275-8750 (անգլերեն) կամ 1-866-648-3537 (իսպաներեն):



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Եթե ըստ օրենքի՝ Դուք ի վիճակի եք համաձայնություն տալու Ձեր սեփական ինամքի հարցում առանց Ձեր ծնողի կամ ինամակալի համաձայնությունը ստանալու, Molina Healthcare-ը Ձեր զգայուն ինամքի ծառայությունների մասին տեղեկատվություն չի տրամադրի Ձեր Molina Healthcare պլանի ապահովադրին, հիմնական բաժանորդին կամ Molina Healthcare-ում գրանցված որևէ անձի առանց Ձեր գրավոր թույլտվության: Դուք կարող եք նաև ինդրել ստանալ գաղտնի տեղեկատվություն Ձեր բժշկական ծառայությունների մասին հատուկ ձևով կամ ձևաչափով, եթե այդպիսին հասանելի է, և այն ուղարկվի Ձեզ այլ վայրում: Ավելին իմանալու այն մասին, թե ինչպես ինդրել ստանալ գաղտնի տեղեկատվություն՝ կապված զգայուն ծառայությունների հետ, կարդացեք «Գաղտնիության պրակտիկայի մասին ծանուցում» բաժինն այս ձեռնարկի Գլուխ 7-ում:

Մեծահասակների զգայուն ինամքի ծառայություններ

Որպես 18 տարեկան կամ ավելի բարձր տարիքի չափահաս անձ՝ Դուք ստիպված չեք լինի գնալ Ձեր առաջնային ինամքի մատակարարի մոտ՝ որոշակի զգայուն կամ գաղտնի բուժօգնություն ստանալու համար: Դուք կարող եք ընտրել ցանկացած բժշկի կամ կլինիկա հետևյալ տեսակի բուժօգնության համար.

- Ընտանիքի պլանավորում և հակաբեղմնավորիչ միջոցառումներ, ներառյալ ստերիլիզացում 21 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահաս անձանց համար:
- Հղիության ստուգում և խորհրդատվություն, ինչպես նաև հղիության հետ կապված այլ ծառայություններ:
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում և թեստավորում:
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելում, թեստավորում և բուժում:
- Բուժօգնություն սեռական բռնության դեպքում:
- Աբորտի ամբուլատոր ծառայություններ

Պարտադիր չէ, որ զգայուն ինամք տրամադրող բժիշկը կամ կլինիկան ներառված լինեն Molina Healthcare-ի ցանցում: Այս ծառայությունները ստանալու համար Դուք կարող եք գնալ Medi-Cal-ի ցանկացած մատակարարի մոտ՝ առանց Molina Healthcare-ի կողմից ուղեգրման կամ նախնական հաստատման (նախնական թույլտվության): Եթե Դուք ցանցում չներառված մատակարարի կողմից ստացել եք այնպիսի բուժօգնություն, որը նշված չէ որպես զգայուն ինամք, հնարավոր է՝ ստիպված լինեք վճարել դրա համար:

Եթե օգնության կարիք ունեք այս ծառայություններից օգտվելու համար բժիշկ կամ կլինիկա գտնելու հարցում, կամ այս ծառայությունների տրամադրման վայրը հասնելու համար կարիք ունեք օգնության (ներառյալ՝ փոխադրման հարցում), զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Կարող եք զանգահարել նաև Բուժքույրերի խորհրդատվական գիծ/Բուժքույրերի խորհրդատվական գիծ՝ 1-888-275-8750 (անգլերեն) կամ 1-866-648-3537 (իսպաներեն) շուրջօրյա հեռախոսահամարներով:

Molina Healthcare-ը Ձեր զգայուն բուժօգնության ծառայությունների մասին տեղեկատվություն չի տրամադրի Molina Healthcare պլանում Ձեր ապահովադրին, հիմնական բաժանորդին կամ Molina Healthcare-ին անդամագրված որևէ անձի՝



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

առանց Ձեր գրավոր թույլտվության: Դուք կարող եք որոշակի ձևով կամ ձևաչափով, եթե այդպիսին կա, գաղտնի տեղեկատվություն ստանալ Ձեր բժշկական ծառայությունների մասին, և այն կուղարկվի Ձեզ այլ վայրում: Ավելին իմանալու այն մասին, թե ինչպես ինդրել ստանալ գաղտնի տեղեկատվություն՝ կապված զգայուն ծառայությունների հետ, կարդացեք «Գաղտնիության պրակտիկայի մասին ծանուցում» բաժինն այս ձեռնարկի Գլուխ 7-ում:

Բարոյական առարկություն

Որոշ մատակարարներ բարոյական առարկություն են ունենում որոշ ապահովագրված ծառայությունների նկատմամբ: Նրանք իրավունք ունեն **չառաջարկելու** որոշ ապահովագրված ծառայություններ, եթե բարոյապես համաձայն չեն ծառայությունների հետ: Այս ծառայությունները, այնուամենայնից, հասանելի են Ձեզ համար մեկ այլ մատակարարի մոտ: Եթե Ձեր մատակարարը բարոյական առարկություն ունի, նա կօգնի Ձեզ գտնել այլ մատակարարի՝ Ձեզ անհրաժեշտ ծառայությունների համար: Molina Healthcare-ը նույնպես կարող է օգնել Ձեզ գտնել այլ մատակարարի:

Որոշ հիվանդանոցներ և մատակարարներ չեն տրամադրում հետևյալ ծառայություններից մեկը կամ մի քանիսը, նույնիսկ եթե դրանք ապահովագրված են Medi-Cal-ով:

- Ընտանիքի պլանավորում
- Հակաբեղմնավորիչ միջոցառումներ ներառող ծառայություններ, ներառյալ շտապ հակաբեղմնավորումը
- Ստերիլիզացիա, այդ թվում՝ արգանդի խողովակների կապումը ծննդաբերության ժամանակ և ծննդաբերությունից անմիջապես հետո
- Անպտղության բուժում
- Աբորտ

Որպեսզի համոզվեք, որ Դուք ընտրում եք այնպիսի մատակարարի, որը կարող է ապահովել Ձեր և Ձեր ընտանիքի ինամբը, զանգահարեք Ձեր նախընտրած բժշկին, բժշկական խմբին, անկախ պրակտիկայի ասոցիացիային կամ կլինիկային: Հարցրեք՝ արդյոք մատակարարը կարող է և կտրամադրի Ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Կարող եք զանգահարել նաև Molina Healthcare՝ 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711):

Հետևյալ ծառայությունները հասանելի են Ձեզ համար: Molina Healthcare-ը կհամոզվի, որ Դուք և Ձեր ընտանիքի անդամները կարող եք օգտվել այնպիսի մատակարարներից (բժիշկներ, հիվանդանոցներ և կլինիկաներ), որոնք Ձեզ կտրամադրեն Ձեզ անհրաժեշտ ինամբը: Եթե ունեք հարցեր կամ օգնության կարիք՝մատակարար գտնելու հարցում, զանգահարեք Molina Healthcare 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711):



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Անհետաձգելի բուժօգնություն

Անհետաձգելի բուժօգնությունը նախատեսված չէ արտակարգ կամ կյանքին վտանգ սպառնացող վիճակների համար: Այն նախատեսված է այնպիսի ծառայությունների համար, որոնց միջոցով Դուք պետք է կանխեք Ձեր առողջությանը սպառնացող լուրջ վնասը, որը կարող է պատճառել հանկարծակի հիվանդությունը, վնասվածքը կամ արդեն ունեցած առողջական խնդրի բարդացումը: Անհետաձգելի խնամք ստանալու համար սովորական նախնական հաստատման (նախնական թույլտվության) կարիք չկա: Եթե Դուք անհետաձգելի խնամք ստանալու համար այց եք խնդրում, ապա 48 ժամվա ընթացքում այցի հնարավորություն կստանաք: Եթե Ձեզ անհրաժեշտ անհետաձգելի խնամքի ծառայությունների համար պահանջվում է նախնական հաստատում (նախնական թույլտվություն), Դուք հանդիպման հնարավորություն կստանաք Ձեր հարցումից հետո 96 ժամվա ընթացքում:

Անհետաձգելի բուժօգնության համար զանգահարեք Ձեր առաջնային խնամքի մատակարարին: Եթե չեք կարողանում կապվել Ձեր Առաջնային խնամքի մատակարարի հետ, զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Կարող եք նաև զանգահարել Բուժքույրերի խորհրդատվական գիծ/Բուժքույրերի խորհրդատվական գիծ՝ 1-888-275-8750 (անգլերեն) կամ 1-866-648-3537 (իսպաներեն)՝ ծանոթանալու խնամքի այն մակարդակին, որը լավագույնն է Ձեզ համար:

Դուք ցանկացած պահի կարող եք զանգահարել Բուժքույրերի խորհրդատվական գիծ/Բուժքույրերի խորհրդատվական գծին՝ հետևյալ հեռախոսահամարով՝ 1-888-275-8750 (TTY/TDD կամ 711), եթե ունեք ախտանշաններ կամ առողջապահական խնամքի մասին տեղեկատվության կարիք ունեք: Գրանցված բուժքույրերը հասանելի են օրը 24 ժամ, շաբաթը 7 օր՝ գնահատելու Ձեր ախտանիշները և օգնելու Ձեզ առողջապահական խնամքի վերաբերյալ ճիշտ որոշումներ կայացնել:

Այս գրանցված բուժքույրերը չեն ախտորոշում. նրանք գնահատում են ախտանիշները և հիվանդին ուղղորդում են դեպի խնամքի առավել համապատասխան մակարդակ՝ հետևելով բուժքույրերի խորհրդատվական գծի հատուկ մշակված ալգորիթմներին (բուժման հրահանգներին): Բուժքույրերի խորհրդատվական գիծ/Բուժքույրերի խորհրդատվական գիծը կարող է Ձեզ ուղղորդել առաջնային խնամքի մատակարարի, մասնագետի մոտ, 911 կամ շտապ օգնության սենյակ: Հիվանդներին ուսուցանելու և Ձեզ դեպի խնամքի հետագա քայլեր ուղղորդելու միջոցով կարելի է նվազեցնել ծախսերը և առողջապահական համակարգի ոչ ճիշտ օգտագործումը:

Եթե Դուք անհետաձգելի բժշկական օգնության կարիք ունեք Ձեր տարածքից դուրս, դիմեք մոտակա շտապ օգնության բուժհաստատություն:

Անհետաձգելի խնամք պահանջող կարիքները կարող են ներառել՝

- Մրսածություն
- Կոկորդի ցավ
- Ջերմություն
- Ականջի ցավ



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

- Մկանի ձգվածություն
- Հղիության պահպանման ծառայություններ

Երբ Դուք Molina Healthcare-ի սպասարկման տարածքում եք և անհետաձգելի բուժօգնության կարիք ունեք, Դուք պետք է ստանաք անհետաձգելի ինսամբի ծառայություններ ներցանցային մատակարարի կողմից: Կարիք չկա նախնական հաստատում (նախնական թույլտվություն) ունենալ՝ Molina Healthcare-ի սպասարկման տարածքում ներցանցային մատակարարների կողմից անհետաձգելի բուժօգնություն ստանալու համար:

Եթե Դուք Molina Healthcare-ի սպասարկման տարածքից դուրս եք, սակայն Միացյալ Նահանգների տարածքում եք, նախնական հաստատման (նախնական թույլտվության) կարիք չկա սպասարկման տարածքից դուրս անհետաձգելի բուժօգնություն ստանալու համար: Քննեք մոտակա անհետաձգելի բուժօգնության հաստատությունը:

Medi-Cal-ը չի ծածուկ անհետաձգելի բուժօգնության ծառայությունները Միացյալ Նահանգներից դուրս: Եթե Դուք ճամփորդում եք Միացյալ Նահանգներից դուրս և անհետաձգելի բուժօգնության կարիք ունեք, մենք չենք ծածկի Ձեր բուժօգնության ծախսերը:

Եթե Ձեզ անհրաժեշտ է հոգեկան առողջության հետ կապված անհետաձգելի բուժօգնություն, զանգահարեք հոգեկան առողջության Ձեր շրջանային պլանին կամ Անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711) հեռախոսահամարով: Չանգահարեք հոգեկան առողջության Ձեր պլանին կամ Ձեր Molina Healthcare Behavioral Health կազմակերպությանը ցանկացած պահի՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Բոլոր շրջանների անվճար հեռախոսահամարներն առցանց գտնելու համար այցելեք՝

<http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContaktList.aspx>:

Եթե Դուք դեղորայք եք ստանում որպես Ձեր ապահովագրված անհետաձգելի բուժօգնությամբ գրանցված այցի մի մաս, միևնույն Դուք այնտեղ եք, Molina Healthcare-ը կփոխհատուցի դրանք որպես Ձեր ապահովագրված այցի մաս: Եթե Ձեր անհետաձգելի բուժօգնության մատակարարը Ձեզ դեղատոմս տա, որը Դուք պետք է տանեք դեղատոմս, Medi-Cal Rx-ը կորոշի, թե արդյոք այն ապահովագրված է: Medi-Cal Rx-ի մասին ավելին իմանալու համար՝ կարդացեք «Դեղատոմսով դուրս գրվող դեղերը, որոնք ապահովագրված են Medi-Cal Rx-ով» բաժինն այս ձեռնարկի Գլուխ 4-ի «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ»-ում:

ՇՏԱԴ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Շտապ օգնության համար զանգահարեք **911** կամ զննեք մոտակա շտապ օգնության սենյակ (ER): Շտապ օգնություն ստանալու համար կարիք **չկա** նախնական հաստատում (նախնական թույլտվություն) ստանալ Molina Healthcare-ի կողմից:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Միացյալ Նահանգների տարածքում, ներառյալ Միացյալ Նահանգների հսկողության տակ գտնվող ցանկացած տարածքում, Դուք իրավունք ունեք օգտվելու ցանկացած հիվանդանոցից կամ այլ հաստատությունից՝ շտապ օգնություն ստանալու համար:

Եթե Դուք գտնվում եք Միացյալ Նահանգներից դուրս, ապա ապահովագրված համարվում միայն այն շտապ օգնությունը, որը պահանջում է հոսպիտալացում Canadaյում և Mexicoյում: Այլ երկրներում շտապ օգնության և այլ տեսակի բուժօգնության ծախսերը չեն ծածկվում:

Շտապ օգնությունը ցուցաբերվում է կյանքի համար վտանգավոր առողջական խնդիրների դեպքում: Այս բուժօգնությունը նախատեսված է այնպիսի հիվանդության կամ վնասվածքի համար, որի դեպքում առողջության և բժշկության մասին միջին գիտելիքներ ունեցող խելամիտ (ողջամիտ), սակայն ոչ մասնագետ (ոչ առողջապահական մասնագետ) անձը կարող է ակնկալել, որ անմիջապես բուժօգնություն չստանալու դեպքում Ձեր առողջությունը (կամ Ձեր չճնված երեխայի առողջությունը) լուրջ վտանգի տակ կարող է լինել: Սա ներառում է Ձեր մարմնի գործառնություններին, օրգաններին կամ մարմնի մասերին լուրջ վնաս հասցնելու վտանգը: Օրինակները կարող են ներառել, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

- Ակտիվ աշխատանք
- Կոտրված ոսկոր
- Սաստիկ ցավ
- Կրծքավանդակի ցավ
- Շնչառության խանգարում
- Խորը այրվածք
- Թմրամիջոցների չափից մեծ դոզա
- Ուշագնացություն
- Ուժեղ արյունահոսություն
- Հոգեբուժական արտակարգ իրավիճակներ, ինչպիսիք են ծանր դեպրեսիան կամ ինքնասպանության մասին մտքերը:

Մի դիմեք շտապ օգնության սենյակ՝ ընթացիկ ինամբի կամ այնպիսի ինամբի համար, որն անհետաձգելի չէ: Ընթացիկ բուժօգնությունը Դուք պետք է ստանաք Ձեր առաջնային ինամբի մատակարարի կողմից, որը Ձեզ ամենալավն է ճանաչում: Կարիք չկա հարցնել Ձեր առաջնային ինամբի մատակարարին կամ Molina Healthcare-ին նախքան շտապ օգնության սենյակ գնալը: Այնուամենայնիվ, եթե վստահ չեք՝ արդյոք Ձեր առողջական խնդիրն անհետաձգելի է, թե ոչ է, զանգահարեք Ձեր առաջնային ինամբի մատակարարին: Կարող եք զանգահարել նաև 24/7 Բուժքույրերի խորհրդատվական գիծ՝ 1-888-275-8750 (անգլերեն) կամ 1-866-648-3537 (իսպաներեն) հեռախոսահամարներով:

Եթե Ձեզ անհրաժեշտ է շտապ օգնություն Molina Healthcare-ի սպասարկման տարածքից դուրս, գնացեք մոտակա շտապ օգնության սենյակ, նույնիսկ եթե այն Molina Healthcare-ի ցանցում ներառված չէ: Եթե Դուք գնում եք շտապ օգնության սենյակ, խնդրեք նրանց զանգահարել Molina Healthcare: Դուք կամ հիվանդանոցը, որը Ձեզ ընդունել է, պետք է զանգահարի Molina Healthcare-ին շտապ օգնություն ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում: Եթե Դուք ճամփորդում եք Միացյալ Նահանգներից դուրս, բացառությամբ Canadaյի և Mexicoյի, և շտապ օգնության կարիք ունեք, Molina Healthcare-ը **չի** ծածկի Ձեր ինամբի ծախսերը:



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել Californiaյի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Եթե Ձեզ անհրաժեշտ է շտապ փոխադրում, զանգահարեք **911**:

Եթե շտապ օգնություն ստանալուց հետոն (հետկայունացման ինամբ) ինամբի կարիք ունեք ցանցում չներառված հիվանդանոցում, հիվանդանոցից կզանգահարեն Molina Healthcare-ին:

Եթե Դուք կամ Ձեզ ծանոթ որևէ անձ գտնվում է ճգնաժամի մեջ, խնդրում ենք զանգահարել 988՝ Ինքնասպանությունների և ճգնաժամների գծին:

Չանգահարեք կամ գրեք 988 համարին կամ գրուցեք առցանց՝

988lifeline.org/chat: 988 Ինքնասպանությունների և ճգնաժամների գծին առաջարկում է անվճար և գաղտնի աջակցություն ճգնաժամի մեջ գտնվող յուրաքանչյուր անձի համար: Դա ներառում է այն մարդկանց, ովքեր գտնվում են հուզական լարվածության մեջ, ինչպես նաև նրանց, ովքեր աջակցության կարիք ունեն ինքնասպանության, հոգեկան առողջության և/կամ թմրամիջոցների օգտագործման հետ կապված ճգնաժամները հաղթահարելու համար:

Չիշեք՝ Մի՛ զանգահարեք 911, եթե համոզված չեք, որ շտապ բժշկական օգնության կարիք ունեք: Շտապ օգնության դիմեք միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, այլ ոչ թե ընթացիկ ինամբի կամ աննշան հիվանդության համար, ինչպիսիք են, օրինակ, մրսածությունը կամ կոկորդի ցավը: Եթե դա արտակարգ իրավիճակ է, զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա շտապ օգնության սենյակ:

Molina Healthcare-ի Բուժքույրերի խորհրդատվական գիծ
Բուժքույրերի խորհրդատվական գիծը Ձեզ անվճար բժշկական տեղեկատվություն և խորհրդատվություն է տրամադրում՝ օրը 24 ժամ, տարվա յուրաքանչյուր օր:
Չանգահարեք Բուժքույրերի խորհրդատվական Բուժքույրերի խորհրդատվական գիծ գիծ՝ 1-888-275-8750 (անգլերեն) կամ 1-866-648-3537 (իսպաներեն) (TTY/TDD կամ 711):

Բուժքույրերի խորհրդատվական գիծ

Molina Healthcare Բուժքույրերի խորհրդատվական գիծ Բուժքույրերի խորհրդատվական գիծը կարող է Ձեզ անվճար բժշկական տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրել օրը 24 ժամ, տարվա յուրաքանչյուր օր: Չանգահարեք Բուժքույրերի խորհրդատվական գիծ՝ 1-888-275-8750 (անգլերեն) կամ 1-866-648-3537 (իսպաներեն) (TTY/TDD կամ 711)։

- Խոսեք բուժքրոջ հետ, որը կպատասխանի Ձեր բժշկական հարցերին, խորհուրդ կտա ինամբի հետ կապված հարցերի շուրջ և կօգնի Ձեզ որոշել, թե արդյոք Դուք պետք է անմիջապես դիմեք մատակարարի:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

- Օգնություն ստացեք այնպիսի առողջական խնդիրների դեպքում, ինչպիսիք են շաքարային դիաբետը կամ ասթման, ինչպես նաև խորհուրդներ այն մասին, թե ինչպիսի մատակարար կարող է հարմար լինել Ձեր առողջական խնդրի դեպքում:

Բուժքույրերի խորհրդատվական գիծը **չի կարող** օգնել կլինիկական այցերի կամ դեղերի ձեռք բերման հարցում: Չանգահարեք Ձեր մատակարարի գրասենյակ, եթե վերոնշյալ հարցերի հետ կապված օգնության կարիք ունեք:

Առողջապահական հարցերով նախնական կարգադրություն

Առողջապահական հարցերով նախնական կարգադրությունը կամ նախնական կարգադրությունը իրավական ձև են: Դուք կարող եք ձևաթղթում նշել, թե ինչ առողջապահական խնամք կցանկանաք ստանալ, եթե ավելի ուշ ի վիճակի չլինեք խոսել կամ որոշումներ կայացնել: Կարող եք թվարկել նաև, թե ինչպիսի առողջապահական խնամք **չեք** ցանկանում ստանալ: Եթե ի վիճակի չլինեք Ձեր առողջապահական խնամքի վերաբերյալ որոշումներ կայացնել, կարող եք նշել որևէ մեկի, օրինակ՝ կողակցի անունը՝ Ձեր առողջական խնամքի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:

Այն անդամները, որոնց հետ կապվում են Molina-ի գործերի կառավարիչները, նախնական կարգադրության մասին տեղեկատվություն կարող են խնդրել իրենց գործի կառավարիչ: Անդամները կարող են նաև լրացուցիչ տեղեկություններ խնդրել նախնական կարգադրության և գործի կառավարման ծառայությունների մասին՝ զանգահարելով Molina Healthcare՝ 1-888-665-4621 հեռախոսահամարով (TTY/TDD կամ 711):

Դուք կարող եք նախնական հրահանգի ձևաթուղթ ստանալ դեղատներից, հիվանդանոցներից, փաստաբանական գրասենյակներից և բժիշկների գրասենյակներից: Հնարավոր է, որ ստիպված լինեք վճարել ձևի համար: Դուք նաև կարող եք գտնել և անվճար բեռնել ձևաթուղթն առցանց: Դուք կարող եք խնդրել Ձեր ընտանիքի անդամներին, առաջնային խնամքի մատակարարին կամ այլ անձի, ում վստահում եք, օգնել Ձեզ լրացնել ձևը:

Դուք իրավունք ունեք խնդրելու, որ Ձեր նախնական կարգադրությունը տեղադրվի Ձեր բժշկական քարտում: Դուք իրավունք ունեք ցանկացած ժամանակ փոփոխելու կամ չեղարկելու Ձեր նախնական կարգադրությունը:

Դուք իրավունք ունեք տեղեկանալու առողջապահական հարցերով նախնական կարգադրությանը վերաբերող փոփոխությունների մասին, որոնք կատարվել են օրենսդրության մեջ: Molina Healthcare -ը Ձեզ կտեղեկացնի նահանգային օրենքում արված փոփոխությունների մասին փոփոխությունից ոչ ուշ, քան 90 օր հետո:

Ավելին իմանալու համար՝ կարող եք զանգահարել Molina Healthcare՝ 1-888-665-4621 հեռախոսահամարով:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Օրգանների և հյուսվածքների նվիրատվություն

Դուք կարող եք օգնել կյանքեր փրկել՝ դառնալով օրգանի կամ հյուսվածքի դոնոր: Եթե Դուք 15-18 տարեկան եք, կարող եք դոնոր դառնալ Ձեր ծնողի կամ ինամակալի գրավոր համաձայնությամբ: Դուք կարող եք փոխել օրգանի դոնոր դառնալու Ձեր որոշումը ցանկացած պահի: Եթե ցանկանում եք ավելին իմանալ օրգանների կամ հյուսվածքների նվիրատվության մասին, խոսեք Ձեր առաջնային ինամքի մատակարարի հետ: Կարող եք նաև այցելել Միացյալ Նահանգների Առողջապահության և մարդկանց ծառայությունների վարչության կայքը հետևյալ հասցեով՝ www.organdonor.gov:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

4. Արտոնություններ և ծառայություններ

Ինչ արտոնություններ և ծառայություններ է ներառում Ձեր առողջապահական պլանըը

Այս գլխում ներկայացվում են այն արտոնությունները և ծառայությունները, որոնք ծածկում է Molina Healthcare-ը: Ձեր ապահովագրված ծառայություններն անվճար են, եթե դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և տրամադրվում են Molina Healthcare-ին երցանակային մատակարարի կողմից: Դուք պետք է ստանաք Molina Healthcare-ի նախնական հաստատումը (նախնական թույլտվությունը), եթե ինքնաբերական ցանցից դուրս է, բացառությամբ որոշ զգայուն ծառայությունների և շտապ օգնության: Ձեր առողջապահական պլանը կարող է ներառել բժշկական առումով անհրաժեշտ ծառայություններ ցանցում չներառված մատակարարի կողմից, սակայն Դուք պետք է Molina Healthcare-ի կողմից ստանաք նախնական հաստատում (նախնական թույլտվություն):

Բժշկական առումով անհրաժեշտ ծառայությունները համարվում են ողջամիտ և անհրաժեշտ՝ Ձեր կյանքը պաշտպանելու, Ձեզ լուրջ հիվանդանալուց կամ հաշմանդամությունից գերծ պահելու կամ ախտորոշված հիվանդության կամ վնասվածքի հետևանքով սաստիկ ցավը մեղմելու համար: 21 տարեկանից ցածր անդամների առաջարկվող Medi-Cal ծառայությունները ներառում են ինքնաբերական բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ վիճակը շտկելու կամ թեթևացնելու համար: Ձեր ապահովագրված ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար՝ զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711) հեռախոսահամարով:

Մինչև 21 տարեկան անդամները ստանում են լրացուցիչ արտոնություններ և ծառայություններ: Ավելին իմանալու համար՝ կարդացեք այս ձեռնարկի Գլուխ 5-ը՝ «Երեխաների և երիտասարդների պատշաճ ինքնաբերական»:

Molina Healthcare-ի առաջարկված առողջապահական արտոնություններից և ծառայություններից մի քանիսը թվարկված են ստորև. Աստղանիշով (*) նշված արտոնությունների ու ծառայությունների համար նախնական հաստատման (նախնական թույլտվության) անհրաժեշտություն կա:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

4 | Նպաստներ և ծառայություններ

- Ասեղնաբուժություն*
- Սուր (կարճաժամկետ բուժում) տնային թերապիա և ծառայություններ
- Չափահասների պատվաստումներ (ներարկումներ)
- Ալերգիայի թեստավորում և ներարկումներ
- Շտապօգնության ծառայություններ արտակարգ իրավիճակների համար
- Անեսթեզիոլոգի ծառայություններ
- Աթմայի կանխարգելում
- Աուդիոլոգիա*
- Վարքագծային առողջության բուժումներ*
- Կենսամարկերի փորձարկում*
- Սրտանոթային համակարգի վերականգնում
- Խիրուրգիկ ծառայություններ*
- Զիմիաթերապիա և ճառագայթային թերապիա
- Ճանաչողական առողջության գնահատումներ
- Համայնքային բուժաշխատողների ծառայություններ
- Ատամնաբուժական ծառայություններ՝ սահմանափակ (կատարվում է բժշկական ոլորտի մասնագետի/առաջնային խնամքի մատակարարի (PCP) կողմից բժշկի գրասենյակում)
- Դիալիզի / հեմոդիալիզի ծառայություններ
- Դուլայի ծառայություններ
- Երկարատև բժշկական սարքավորումներ (DME)*
- Դիադիկական ծառայություններ
- Այցելություններ շտապ օգնության սենյակ
- Էնտերալ և պարենտերալ սնուցում*
- Ընտանիքի պլանավորման ծառայություններ (կարող եք դիմել չանդամակցող մատակարարի)
- Կենսագործունեությունն ապահովող ծառայություններ և սարքեր*
- Լսողական սարքեր
- Տնային առողջապահություն*
- Հոսփիսի խնամք*
- Ստացիոնար բժշկական և վիրաբուժական օգնություն*
- Միջանկյալ խնամքի հաստատության ծառայություններ
- Լաբորատորիա և ռադիոլոգիա*
- Երկարատև տնային թերապիա և ծառայություններ*
- Սոր և նորածնի խնամք
- Կենսական օրգանի փոխպատվաստում*
- Մասնագիտական հիվանդությունների թերապիա*
- Օրթոպեդիկ պարագաներ/պրոթեզներ*
- Օստոմիա և ուրոլոգիական նյութեր
- Ամբուլատոր հիվանդանոցային ծառայություններ
- Ամբուլատոր հոգեբուժական ծառայություններ
- Ամբուլատոր վիրաբուժություն*
- Պալիատիվ խնամք*
- PCP-ի մոտ այցելություններ
- Մանկաբուժական ծառայություններ
- Ֆիզիկական թերապիա*
- Պոդիատրիայի ծառայություններ*
- Թոքային վերականգնում
- Ամբողջ գենոմի արագ հաջորդականացում
- Վերականգնողական ծառայություններ և սարքեր*
- Հմուտ բուժքույրական ծառայություններ, ներառյալ ենթասուր ծառայություններ
- Մասնագետների այցել
- Խոսքի թերապիա*
- Վիրաբուժական ծառայություններ
- Հեռաբժշկություն/Հեռաառողջապահություն
- Տրանսգենդերների ծառայություններ*
- Անհետաձգելի բուժօգնություն
- Տեսողության ծառայություններ*
- Կանանց առողջության ծառայություններ

Ապահովագրված ծառայությունների սահմանումները և նկարագրությունները ներկայացված են այս ձեռնարկի Գլուխ 8-ում՝ «Կարևոր թվեր և բառեր, որ պետք է իմանալ»:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
 Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
 Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Բժշկական առումով անհրաժեշտ ծառայությունները համարվում են ողջամիտ և անհրաժեշտ՝ Ձեր կյանքը պաշտպանելու, Ձեզ լուրջ հիվանդանալուց կամ հաշմանդամությունից զերծ պահելու կամ ախտորոշված հիվանդության կամ վնասվածքի հետևանքով սաստիկ ցավը մեղմելու համար:

Բժշկական առումով անհրաժեշտ ծառայությունները ներառում են այն ծառայությունները, որոնք անհրաժեշտ են տարիքին համապատասխան աճի և զարգացման կամ ֆունկցիոնալ կարողություններ ձեռք բերելու, պահպանելու կամ վերականգնելու համար:

21 տարեկանից ցածր անդամների համար ծառայությունը համարվում է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ, եթե հարկավոր է շտկել կամ բարելավել արատները, ֆիզիկական և մտավոր հիվանդությունները կամ առողջական խնդիրներ՝ համաձայն «Medi-Cal՝ երեխաների և դեռահասների արտոնության» (հայտնի է նաև որպես վաղ և պարբերական սքրինինգ, ախտորոշում և բուժում (EPSDT):) Սա ներառում է ինամբ, որն անհրաժեշտ է՝ շտկելու կամ օգնելու թեթևացնել ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ խնդիրը կամ կանխելու անձի առողջական վիճակի վատթարացումը:

Բժշկական առումով անհրաժեշտ ծառայությունները չեն ներառում.

- Բուժումներ, որոնք չեն փորձարկվել կամ դեռևս փորձարկման փուլում են:
- Ծառայություններ կամ ապրանքներ, որոնք որպես կանոն ընդունված չեն որպես արդյունավետ:
- Ծառայություններ, որոնք դուրս են նորմալ բուժման ընթացքից և տևողությունից, կամ ծառայություններ, որոնք չունեն կլինիկական ուղեցույցներ:
- Ծառայություններ՝ ըստ ինսամոդի կամ մատակարարի հարմարության:

Molina Healthcare-ը համագործակցում է այլ ծրագրերի հետ՝ համոզվելու համար, որ Դուք ստանում եք բժշկական տեսանկյունից բոլոր անհրաժեշտ ծառայությունները, նույնիսկ եթե այդ ծառայությունները ապահովագրված են մեկ այլ ծրագրով, այլ ոչ թե Molina Healthcare-ով:



Ձանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
 Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
 Ձանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Բժշկական առումով անհրաժեշտ ծառայությունները ներառում են ապահովագրված ծառայություններ, որոնք համարվում են ողջամիտ և անհրաժեշտ.

- Պաշտպանելու կյանքը,
- Կանխելու լուրջ հիվանդության կամ հաշմանդամության առաջացումը,
- Թեթևացնելու սաստիկ ցավը,
- Հասնելու տարիքին համապատասխան աճի և զարգացման, կամ,
- Ձեռք բերելու, պահպանելու և վերականգնելու ֆունկցիոնալ կարողությունները:

21 տարեկանից փոքր անձանց՝ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ներառում են վերը թվարկված բոլոր ապահովագրված ծառայությունները, ինչպես նաև ցանկացած այլ անհրաժեշտ խնամք, զննում, պատվաստումներ, ախտորոշիչ ծառայություններ, բուժում և այլ միջոցներ՝ թերությունները, ֆիզիկական և հոգեկան հիվանդություններն ու խնդիրները շտկելու կամ բարելավելու համար, ինչպես պահանջվում է երեխաների և երիտասարդների Medi-Cal արտոնությամբ: Այս արտոնությունը դաշնային օրենքով հայտնի է որպես վաղ և պարբերական զննման, ախտորոշման և բուժման (EPSDT) արտոնություն:

Երեխաների և դեռահասների Medi-Cal-ը տրամադրում է կանխարգելման, ախտորոշման և բուժման ծառայություններ ցածր եկամուտ ունեցող ընտանիքների նորածինների, երեխաների և մինչև 21 տարեկան դեռահասների համար:

Երեխաների և դեռահասների Medi-Cal-ը ծածկում է ավելի շատ ծառայություններ, քան մեծահասակների համար նախատեսված արտոնություններն են թույլ տալիս: Այն նախատեսված է խնդիրների վաղ հայտնաբերման և խնամքի կազմակերպման համար՝ առողջական խնդիրները կանխելու կամ ախտորոշելու և բուժելու համար: Երեխաների և դեռահասների Medi-Cal-ի նպատակն է համոզվել, որ յուրաքանչյուր երեխա ստանում է այն առաջնային խնամքը, որն անհրաժեշտ է, երբ դրա կարիքը կա: Ճիշտ խնամք՝ ճիշտ երեխային, ճիշտ ժամանակին, ճիշտ միջավայրում:

Molina Healthcare-ը կհամագործակցի այլ ծրագրերի հետ՝ համոզվելու համար, որ Դուք ստանում եք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ բոլոր ծառայությունները, նույնիսկ եթե այդ ծառայությունները ծածկում է մեկ այլ ծրագիր, իսկ Molina Healthcare-ը՝ ոչ: Ավելի ուշ այս գլխում կարդացեք «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ»:

Medi-Cal արտոնություններ, որոնք ծածկվում են Molina Healthcare-ի կողմից

Հիվանդանոցային (ամբուլատոր) ծառայություններ

Չափահասների պատվաստումներ (ներարկումներ)

Դուք կարող եք մեծահասակների համար նախատեսված պատվաստումներ (ներարկումներ) ստանալ ներցանցային մատակարարի կողմից՝ առանց



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Նախնական հաստատման (նախնական թույլտվության), եթե դրանք կանխարգելիչ ծառայություններ են: Molina Healthcare-ը ծածկում է այն պատվաստումները (ներակումները), որոնք առաջարկվել են Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (CDC) Իմունականիսարգելման պրակտիկայի խորհրդատվական կոմիտեի (ACIP) կողմից՝ որպես կանխարգելիչ ծառայություններ, ներառյալ այն պատվաստումները (ներարկումները), որոնք Ձեզ անհրաժեշտ են ճանապարհորդելիս:

Դուք կարող եք նաև մեծահասակների համար նախատեսված պատվաստումների (ներարկումներ) ծառայություններ ստանալ դեղատնից՝ Medi-Cal Rx-ի միջոցով: Medi-Cal Rx-ի մասին ավելին իմանալու համար՝ ավելի ուշ այս գլխում կարդացեք «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ» բաժինը:

Ալերգիայի բուժում

Molina Healthcare-ը ծածկում է ալերգիայի ստուգման ու բուժման ծախսը, ներառյալ ալերգիայի դեսենսիտիզացումը, հիպոգգայունացումը և իմունոթերապիան:

Անեսթեզիոլոգի ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է անզգայացման ծառայությունները, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են, երբ Դուք ստանում եք ամբուլատոր ինսամբ: Սա կարող է ներառել անեսթեզիոլոգի կողմից արվող անզգայացումն ատամնաբուժական պրոցեդուրաների համար, ինչի համար կարող է պահանջվել նախնական հաստատում (նախնական թույլտվություն):

Կիրոպրակտիկ ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է կիրոպրակտիկ ծառայությունները՝ սահմանափակվելով ձեռքերի մանիպուլացիայի միջոցով ողնաշարի բուժմամբ: Կիրոպրակտիկ ծառայությունները սահմանափակվում են ամսական առավելագույնը 2 ծառայություններով կամ ամսական նշված ծառայություններից 2-ի համակցությամբ՝ ասեղնաբուժություն, աուդիոլոգիա, օկուպացիոն թերապիա և խոսքային թերապիա: Սահմանափակումները չեն տարածվում 21 տարեկանից ցածր երեխաների վրա: Molina Healthcare-ը կարող է նախապես հաստատել այլ ծառայություններ՝ ըստ բժշկական անհրաժեշտության:

Կիրոպրատիկ ծառայություններից օգտվելու իրավասություն ունեն հետևյալ անձինք.

- 21 տարեկանից փոքր երեխաները,
- Հղիները մինչև ամսվա վերջ, ներառյալ հղիության ավարտից 60 օր հետո
- Ինսամբի մասնագիտացված հաստատությունում, միջանկյալ ինսամբի հաստատությունում կամ ենթասուր ինսամբի հաստատությունում բնակվող անձինք,
- Բոլոր անդամները, եթե ծառայությունները մատուցվում են շրջանի հիվանդանոցի ամբուլատոր բաժանմունքներում, ամբուլատոր կլինիկաներում, դաշնային մակարդակով որակավորված առողջության կենտրոնում (FQHC) կամ առողջության գյուղական կլինիկաներում (RHC), որոնք ներառված են Molina Healthcare-ի ցանցում: Ոչ բոլոր FQHC-ները, RHC-ները կամ շրջանային հիվանդանոցներն են առաջարկում ամբուլատոր կիրոպրակտիկ ծառայություններ:



Ձանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Ձանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Ճանաչողական առողջության գնահատումներ

Molina Healthcare-ը ծածկում է ճանաչողական առողջության տարեկան գնահատումը 65 տարեկան և ավելի բարձր անձանց համար, ովքեր այլ կերպ իրավասուն չեն օգտվելու նմանատիպ գնահատումից՝ որպես Medicare ծրագրի տարեկան այցի մաս: Ծանաչողական առողջության գնահատման գործընթացում փորձում են հայտնաբերել Ալցհեյմերի հիվանդության կամ դեմենցիայի նշաններ:

Համայնքային բուժաշխատողների ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է համայնքային բուժաշխատողների (CHW) կողմից անհատների մատուցվող ծառայությունները, երբ դրանք խորհուրդ է տալիս բժիշկը կամ այլ արտոնագրված մասնագետը՝ կանխելու հիվանդությունները, հաշմանդամությունը և առողջական այլ վիճակները կամ դրանց զարգացումը, երկարացնելու անձի կյանքը և խթանելու ֆիզիկական և մտավոր առողջությունն ու արդյունավետությունը: Համայնքային բուժաշխատողների ծառայությունները չունեն ծառայության տեղակայման սահմանափակումներ, և պլանի անդամները կարող են ծառայություններ ստանալ այնպիսի հաստատություններում, ինչպիսին է, օրինակ, շտապ օգնության բաժանմունքը: Ծառայությունները կարող են ներառել՝

- Առողջապահական կրթություն և անհատական աջակցություն կամ շահերի պաշտպանություն, ներառյալ քրոնիկ կամ վարակիչ հիվանդությունների վերահսկում և կանխարգելում՝ վարքային, պերինատալ և բերանի խոռոչի խնդիրներ, ինչպես նաև բռնության կամ վնասվածքների կանխարգելում:
- Առողջության խթանում և ուսուցում, այդ թվում՝ նպատակների սահմանում և գործողությունների պլանների ստեղծում՝ ուղղված հիվանդությունների կանխարգելմանը և կառավարմանը:
- Կողմնորոշում առողջապահության ոլորտում, այդ թվում՝ տեղեկատվության տրամադրում, ուսուցումը և աջակցություն, որոնց շնորհիվ հնարավոր կլինի ստանալ առողջապահական և համայնքային ռեսուրսներ:
- Սքրինինգների և գնահատման ծառայություններ, որոնք օգնում են անձին կապվել ծառայությունների հետ՝ իր առողջությունը բարելավելու համար:

Համայնքային բուժաշխատողների ծառայությունների մեջ մտնող բռնության կանխարգելման ծառայությունները հասանելի են այն անդամների համար, ովքեր համապատասխանում են հետևյալ հանգամանքներից որևէ մեկին, ինչպես որոշվել է արտոնագրված մասնագետի կողմից՝

- Անձը ծանր վնասվածք է ստացել համայնքի կողմից բռնության հետևանքով:
- Անձն համայնքի կողմից բռնության հետևանքով ծանր վնասվածքներ ստանալու զգալի վտանգի տակ է:
- Անձը մշտապես ենթարկվել է համայնքային կողմից բռնության:

Համայնքային բուժաշխատողների ծառայությունների մեջ մտնող բռնության կանխարգելման ծառայությունները հարմարեցված են համայնքային բռնությանը (օրինակ՝ խմբակային բռնություն): Համայնքային բուժաշխատողների ծառայությունները կարող են տրամադրվել անձանց միջանձնային/ընտանեկան բռնության դեպքում այլ ուղիների միջոցով՝ ներառելով հատուկ կարիքների և համապատասխան ուսուցումով/փորձով:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Դիալիզի և հեմոդիալիզի ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է դիալիզի բուժումը: Molina Healthcare-ը ծածկում է նաև հեմոդիալիզի (քրոնիկ դիալիզի) ծառայությունները, եթե Ձեր բժիշկը հարցում է ներկայացնում և Molina Healthcare-ը հաստատում է այն:

Medi-Cal-ի ապահովագրությունը չի ներառում՝

- Հանգիստ, հարմարավետություն կամ շքեղ սարքավորումներ, պարագաներ և այլ հատուկ կարիքներ:
- Ոչ բժշկական իրեր, ինչպիսիք են գեներատորները կամ արտետուարները՝ տնային դիալիզի սարքավորումները շարժական դարձնելու համար:

Դուլայի ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է դուլայի ծառայությունները, որոնք տրամադրվում են դուլաների ներցանցային մատակարարների կողմից անձի հղիության ընթացքում՝ նախաձննդաբերության և ծննդաբերության ժամանակ, ներառյալ մահացած պտղով ծնունդի, վիժման, արբորտի դեպքում, ինչպես նաև հղիության ավարտից հետո մեկ տարվա ընթացքում: Medi-Cal-ը չի ծածկում դուլայի բոլոր ծառայությունները:

Դուլայի ծառայություններ ապահովող մատակարարները մանկաբարձության ոլորտի աշխատողներ են, որոնք ապահովում են առողջապահական կրթություն, շահերի պաշտպանություն, ֆիզիկական, հուզական և ոչ բժշկական աջակցություն հղիներին և ծննդաբերողներին ծննդաբերությունից առաջ, ընթացքում և ծննդաբերությունից հետո, ներառյալ մահացած պտղով ծննդաբերության, վիժման և արբորտի դեպքում:

Որպես կանխարգելիչ արտոնություն՝ դուլայի ծառայությունները պահանջում են գրավոր առաջարկություն բժշկի կամ իրենց պրակտիկայի շրջանակում բուժական արվեստի այլ լիցենզավորված այլ մասնագետի կողմից: Առողջապահական ծառայությունների վարչությունը (DHCS) երկարատև հանձնարարական է տվել դուլայի ծառայությունների համար, որը բավարարում է նախնական առաջարկության պահանջները: Դուլայի ծառայությունների նախնական առաջարկությունը ներառում է հետևյալ թույլտվությունները.

- Մեկ նախնական այց:
- Մինչև 8 լրացուցիչ այցեր, որոնք կարող են լինել նախաձննդյան և հետձննդյան խառը այցեր:
- Աջակցություն ծննդաբերության ժամանակ և ծննդաբերությունից հետո (այդ թվում՝ ծննդաբերական ցավերի և մահացած պտղով վաղաժամ ծննդաբերության դեպքում), արբորտի կամ վիժման դեպքում:
- Հղիության ավարտից հետո մինչև 2 3-ժամյա հետձննդյան այց:

Անդամները կարող են ստանալ մինչև ինը լրացուցիչ հետձննդյան այցի հնարավորություն՝ բժշկի կամ այլ արտոնագրված մասնագետի գրավոր առաջարկությամբ:

Molina Healthcare-ը պետք է համակարգի անդամների համար դուլայի ծառայություններից ցանցից դուրս օգտվելու հնարավորությունը, եթե դուլաների ներցանցային մատակարար հասանելի չէ:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Դիադիկական ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ դիադիկ վարքագծային առողջության (DBH) խնամքի ծառայությունները պլանի անդամների և նրանց խնամակալների համար: Դիադ կարող է լինել երեխան և նրա ծնողները կամ խնամակալները: Դիադիկ խնամքը ծառայում է ծնողներին կամ խնամակալներին և երեխային միասին: Այն ուղղված է ընտանիքի բարեկեցությանը՝ աջակցելու երեխայի առողջ զարգացմանը և հոգեկան առողջությանը:

Դիադիկ խնամքի ծառայությունները ներառում են.

- Դիադիկ վարքագծային առողջության ուղղված այցեր երեխաների կողմից
- Համայնքային աջակցության համապարփակ դիադիկ ծառայություններ
- Հոգե-կրթական դիադիկ ծառայություններ
- Ծնողների կամ խնամակալների դիադիկ ծառայություններ
- Ընտանիքի դիադիկ ուսուցում, և
- Խորհրդատվություն երեխաների զարգացման և մայրերի հոգեկան առողջության համար:

Ամբուլատոր վիրաբուժություն

Molina Healthcare-ը ծածկում է ամբուլատոր վիրաբուժական միջամտությունների ծախսերը: Որոշ պրոցեդուրաների համար Դուք պետք է ստանաք նախնական հաստատում (նախնական թույլտվություն)՝ նախքան այդ ծառայություններից օգտվելը: Ախտորոշիչ պրոցեդուրաները և որոշ ամբուլատոր բժշկական կամ ատամնաբուժական պրոցեդուրաները համարվում են ընտրովի: Դուք պետք է ստանաք նախնական հաստատում (նախնական թույլտվություն):

Բժշկի ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է բժշկի ծառայությունները, որոնք բժշկական առումով անհրաժեշտ են:

Պողոլոգիական (նոքերի)ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է պողոլոգիական ծառայությունները, որոնք բժշկական առումով անհրաժեշտ են անձի ոտնաթաթի ախտորոշման և բժշկական, վիրաբուժական, մեխանիկական, մանիպուլյատիվ և էլեկտրական բուժման համար: Սա ներառում է կոճի և նոքի հետ կապված ջիլերի բուժումը: Դա նաև ներառում է նոքի մկանների և ջլերի ոչ վիրաբուժական բուժումը, որը ապահովում է ոտնաթաթի գործառույթները:

Բուժման թերապիաներ

Molina Healthcare-ը ծածկում է բուժման տարբեր թերապիաներ, այդ թվում՝

- Զիմիաթերապիա
- Ճառագայթային թերապիա



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Մոր և նորածնի խնամք

Molina Healthcare-ը ծածկում է մայրերի և նորածինների խնամքի հետևյալ ծառայությունները՝

- Ծննդագնության կենտրոնի ծառայություններ
- Կրծքի պոմպեր և պարագաներ
- Կրծքով կերակրելու վերաբերյալ ուսուցում և օժանդակ սարքեր
- Խնամքի համակարգում
- Արտոնագրված բուժքույր-մանկաբարձ (CNM)
- Խորհրդատվություն
- Ծննդաբերական և հետծննդաբերական խնամք
- Պտղի գենետիկական խանգարումների ախտորոշում և խորհրդատվություն
- Դուլայի ծառայություններ
- Արտոնագրված մանկաբարձ (LM)
- Մայրական հոգեկան առողջության ծառայություններ
- Նորածինների խնամք
- Կերակրման վերաբերյալ ուսուցում
- Հղիության հարցերով ուսուցում
- Նախածննդյան խնամք
- Սոցիալական և հոգեկան առողջության գնահատումներ և ուղեգրեր
- Վիտամինային և հանքային հավելումներ

Հեռաբժշկական ծառայություններ

Հեռաբժշկությունը ծառայություններ ստանալու միջոց է՝ առանց Ձեր մատակարարի հետ նույն ֆիզիկական վայրում գտնվելու: Հեռաբժշկությունը կարող է ներառել Ձեր մատակարարի հետ ուղիղ հեռախոսագրույց, տեսազանգ կամ այլ միջոցներ: Հեռաբժշկությունը կարող է ներառել նաև տեղեկատվության փոխանակում Ձեր մատակարարի հետ՝ առանց կենդանի զրույցի: Հեռաբժշկության միջոցով Դուք կարող եք բազմաթիվ ծառայություններ ստանալ:

Հեռաբժշկության հնարավորությունը կարող է հասանելի չլինել բոլոր ապահովագրված ծառայությունների համար: Կարող եք կապ հաստատել Ձեր մատակարարի հետ՝ իմանալու, թե որ ծառայությունները կարող եք ստանալ հեռաբժշկության միջոցով: Կարևոր է, որ Դուք և Ձեր մատակարարը համաձայնեք, որ ծառայության համար հեռաբժշկության օգտագործումը տեղին է Ձեզ համար: Դուք իրավունք ունեք անձամբ օգտվելու ծառայություններից: Ձեզանից չի պահանջվում օգտվել հեռաբժշկությունից, նույնիսկ եթե, ըստ Ձեր մատակարարի, այն համապատասխանում է Ձեզ:

Հոգեկան առողջության ծառայություններ

Ամբուլատոր հոգեբուժական ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է հոգեկան առողջության նախնական գնահատումման ծառայությունները՝ առանց նախնական հաստատման (նախնական թույլտվության) անհրաժեշտության: Դուք կարող եք ցանկացած պահի առանց ուղեգրի ստանալ



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

հոգեկան առողջության գնահատում հոգեկան առողջության լիցենզավորված մատակարարի կողմից, որը գրանցված է Molina Healthcare-ի ցանցում:

Ձեր առաջնային խնամքի մատակարարը կամ հոգեկան առողջության մատակարարը կարող է ուղղորդել Ձեզ Molina Healthcare-ի ցանցի մասնագետի մոտ, որպեսզի նա որոշի Ձեզ անհրաժեշտ խնամքի մակարդակը: Եթե Ձեր հոգեկան առողջության սքրինինգի արդյունքներով պարզվում է, որ Դուք ունեք թեթև կամ չափավոր լարվածություն կամ մտավոր, հուզական կամ վարքային գործառույթների խանգարում, Molina Healthcare-ը կարող է հոգեկան առողջության ծառայություններ տրամադրել Ձեզ: Molina Healthcare-ը ծածկում է հոգեկան առողջության ծառայությունները, ինչպիսիք են, օրինակ.

- Անհատական և խմբակային հոգեկան առողջության գնահատում և բուժում (հոգեթերապիա)
- Հոգեբանական թեստավորում, երբ կլինիկորեն հաստատվել է հոգեկան առողջության վիճակը գնահատելու կարիքը
- Ուշադրության, հիշողության և խնդիրների լուծման համար ճանաչողական հմտությունների զարգացում
- Դեղորայքային թերապիայի մոնիտորինգի նպատակով ամբուլատոր ծառայություններ
- Ամբուլատոր լաբորատոր ծառայություններ
- Ամբուլատոր դեղամիջոցներ, որոնք արդեն ներառված չեն Medi-Cal Rx պայմանագրային դեղերի ցանկում (<https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>), պարագաներ և հավելումներ
- Հոգեբույժի խորհրդատվություն
- Ընտանեկան թերապիա, որը ներառում է ընտանիքի առնվազն 2 անդամի: Ընտանեկան թերապիայի օրինակները ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով.
 - Երեխա-ծնող հոգեթերապիա (0-ից 5 տարեկան)
 - Ծնող-երեխա ինտերակտիվ թերապիա (2-ից 12 տարեկան)
 - Ծանաչողական-վարքային զույգ թերապիա (մեծահասակներ)

Molina Healthcare-ի կողմից տրամադրվող հոգեկան առողջության ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ գտնելու հարցում օգնություն ստանալու համար՝ զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Դուք կարող եք տեղափոխվել վարքագծային առողջության հարցերով զբաղվող թիմի մոտ՝ համոզվելու համար, որ Դուք ժամանակին, համապատասխան ծառայություններ եք ստանալու:

Եթե հոգեկան առողջության խանգարման համար Ձեզ անհրաժեշտ բուժումը հասանելի չէ Molina Healthcare-ի ցանցում, կամ Ձեր առաջնային խնամքի մատակարարը կամ հոգեկան առողջության մատակարարը չեն կարող Ձեզ անհրաժեշտ օգնություն ցուցաբերել «խնամքի ժամանակին հասանելիություն» բաժնում վերը նշված ժամանակահատվածում, Molina Healthcare-ը կծածկի ծախսերը և կօգնի Ձեզ ստանալ ցանցում չներառված ծառայություններ:

Եթե Ձեր հոգեկան առողջության սքրինինգը ցույց է տալիս, որ հնարավոր է՝ Դուք ավելի բարձր մակարդակի խանգարում ունեք և կարիք ունեք հոգեկան



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

առողջության մասնագիտացված ծառայությունների (SMHS), Ձեր առաջնային ինսամբի մատակարարը կամ Ձեր հոգեկան առողջության մատակարարը կարող է Ձեզ ուղեգրել շրջանի հոգեկան առողջության պլանով Ձեզ անհրաժեշտ ինսամբը ստանալու համար: Molina Healthcare-ը կօգնի Ձեզ համակարգել Ձեր առաջին հանդիպումը շրջանի հոգեկան առողջության ծրագրի մատակարարի հետ՝ Ձեզ համար ճիշտ ինսամբը ընտրելու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար՝ կարդացեք այս ձեռնարկի Գլուխ 4-ը՝ «Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ» բաժինը «Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ» բաժնում:

Շտապ օգնության ծառայություններ

Շտապ բուժօգնության համար անհրաժեշտ ստացիոնար և ամբուլատոր ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է բոլոր ծառայությունները, որոնք անհրաժեշտ են ԱՄՆ-ում մատուցվող շտապ օգնության համար (ներառյալ այնպիսի տարածքներում, ինչպիսիք են Պուերտո Ռիկոն, Միացյալ Նահանգների Վիրջինյան կղզիները և այլն): Molina Healthcare-ը ծածկում է նաև այնպիսի շտապ օգնության ծախսերը, որը պահանջում է հոսպիտալացում Կանադայի կամ Մեքսիկայի տարածքում:

Անհետաձգելի վիճակի դեպքում առողջական վիճակն ուղեկցվում է սուր ցավով կամ լուրջ վնասվածքով: Առողջական վիճակն այնքան լուրջ է, որ եթե անձն անհապաղ բժշկական օգնություն չստանա, խելամիտ (ողջամիտ) ոչ մասնագետը (ոչ առողջապահական մասնագետ) կարող է ակնկալել, որ այն կհանգեցնի նշվածներից որևէ մեկին.

- Ձեր առողջության համար լուրջ վտանգ
- Լուրջ վնաս մարմնի գործառույթներին
- Մարմնի որևէ օրգանի կամ մասի լուրջ դիսֆունկցիա
- Լուրջ ռիսկ ակտիվ ծննդաբերական ցավերի մեջ գտնվող հղիի դեպքում, այսինքն՝ ծննդաբերական ցավեր այն ժամանակ, երբ տեղի կունենա հետևյալներից որևէ մեկը.
 - Մինչև ծննդաբերությունը բավարար ժամանակ չկա Ձեզ անվտանգ տեղափոխելու այլ հիվանդանոց:
 - Փոխադրումը կարող է վտանգ ներկայացնել Ձեր առողջությանը կամ անվտանգությանը կամ Ձեր չծնված երեխային:

Եթե հիվանդանոցի շտապ օգնության բաժանմունքի մատակարարը Ձեզ մինչև 72-ժամյա ամբուլատոր բուժման համար տրամադրում է դեղատոմսով դեղորայք՝ որպես Ձեր բուժման մաս, Molina Healthcare-ը կփոխհատուցի դեղատոմսով դուրս գրվող դեղորայքի ծախսը որպես Ձեր ապահովագրված շտապ օգնության ծառայությունների մաս: Եթե հիվանդանոցի շտապ օգնության բաժանմունքի մատակարարը Ձեզ դեղատոմս տա, որը Դուք պետք է տանեք ամբուլատոր դեղատուն՝ լրացնելու համար, Medi-Cal Rx-ը կփոխհատուցի այդ դեղատոմսը:

Եթե ճամփորդելիս դեղորայքի շտապ մատակարարման կարիք ունեք ամբուլատոր դեղատնից, դեղի ծախսը ծածկելու համար պատասխանատու կլինի Medi-Cal Rx-ը, այլ ոչ թե Molina Healthcare-ը: Եթե դեղատունն օգնության կարիք ունի Ձեզ շտապ



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

դեղեր մատակարարելու հարցում, խնդրեք նրանց զանգահարել Medi-Cal Rx 1-800-977-2273 հեռախոսահամարով:

Չրատապ փոխադրման ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է շտապ օգնության այն ծառայությունները, որոնք օգնում են Ձեզ շտապ օգնության տրամադրման մոտակա հաստատություն հասնել: Սա նշանակում է, որ Ձեր վիճակն այնքան լուրջ է, որ ինսամքի վայր հասնելու այլ եղանակները կարող են վտանգել Ձեր առողջությունը կամ կյանքը: Որևէ ծառայություն չի ծածկվում Միացյալ Նահանգներից դուրս, բացառությամբ շտապ օգնության, որի դեպքում Դուք պետք է լինեք Canada-ի կամ Mexico-ի տարածքի որևէ հիվանդանոցում: Եթե Դուք շտապ օգնության ծառայություններ եք ստանցել Canada-ում կամ Mexico-ում, սակայն չեք հոսպիտալացվել այդ ինսամքի փուլի ընթացքում, Molina Healthcare-ը չի ծածկի Ձեր շտապ օգնության ծառայությունները:

Յոսփիսային և պալիատիվ ինսամք

Molina Healthcare-ը ծածկում է երեխեխաների և մեծահասակների հոսփիսային ինսամքը և պալիատիվ ինսամքը, որոնք օգնում են նվազեցնել ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհարմարությունները: 21 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահաս անձինք չեն կարող միաժամանակ ստանալ հոսփիսային և բուժական (բուժիչ) ինսամքի ծառայություններ:

Յոսփիսային ինսամք

Յոսփիսային ինսամքի հնարավորությունն արտոնություն է մահացու հիվանդությամբ տառապող անձանց համար: Յոսփիսային ինսամքը հասանելի է այն անձանց համար, ում մնացել է ասրելու վեց ամիս կամ ավելի քիչ ժամանակ: Դա միջամտություն է, որը կենտրոնանում է հիմնականում ցավի և ախտանիշների կառավարման վրա, այլ ոչ թե կյանքը երկարացնելուն ուղղված բուժման վրա:

Յոսփիսային ինսամքը ներառում է՝

- Բուժքույրական ծառայություններ
- Ֆիզիկական, օկուպացիոն կամ խոսքային ծառայություններ
- Բժշկական սոցիալական ծառայություններ
- Առողջապահական օգնություն տնային պայմաններում և տնային տնտեսուհու ծառայություններ
- Բժշկական պարագաներ և գործիքներ
- Որոշ դեղեր և կենսաբանական ծառայություններ (որոշները կարող են հասանելի լինել Medi-Cal Rx-ի միջոցով)
- Խորհրդատվական ծառայություններ
- Շարունակական բուժքույրական ծառայություն 24 ժամյա հիմունքներով ճգնաժամի շրջանում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ընտանիքի անբուժելի հիվանդ անդամի տնային ինսամք
 - Մինչև հինգ օր տևողությամբ ստացիոնար անընդմեջ ինսամք հիվանդանոցում, ինսամքի մասնագիտացված հաստատությունում կամ հոսփիսային հաստատությունում



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

- Հիվանդանոցում, ինամքի մասնագիտացված հաստատությունում կամ հոսփիսային հաստատությունում ցավի կառավարման կամ ախտանիշների կառավարման համար կարճաժամկետ ստացիոնար ինամք

Molina Healthcare-ը կարող է պահանջել, որ Դուք հոսփիսային ինամք ստանաք ներցանցային մատակարարի կողմից, եթե բժշկական առումով անհրաժեշտ ծառայությունները հասանելի չեն ցանցում:

Պալիատիվ ինամք

Պալիատիվ ինամքը հիվանդակենտրոն և ընտանիքակենտրոն ինամք է, որը բարելավում է կյանքի որակը՝ կանխատեսելով, կանխելով և բուժելով տառապանքը: Պալիատիվ օգնությունից օգտվելու համար պարտադիր չէ, որ ընտանիքի անդամը կյանքի վեց ամսվա կամ ավելի կարճ տևողություն: Պալիատիվ օգնությունը կարող է իրականացվել բուժական օգնության հետ միաժամանակ:

Պալիատիվ ինամքը ներառում է՝

- Ինամքի նախնական պլանավորում
- Պալիատիվ ինամքի գնահատում և խորհրդատվություն
- Ինամքի պլան՝ ներառյալ թույլատրված պալիատիվ և բուժիչ ինամքի բոլոր ձևերը
- Պալիատիվ ինամքի թիմ, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով՝
 - Բժշկության կամ օստեոպաթիայի մասնագետ
 - Բժշկի օգնական
 - Գրանցված բուժքույր
 - Լիցենզավորված բուժքույր-մասնագետ կամ բուժքույր-պրակտիկանտ
 - Սոցիալական աշխատող
 - Հոգևորական
- Ինամքի համակարգում
- Ցավի և ախտանիշների կառավարում
- Հոգեկան առողջության և բժշկական սոցիալական ծառայություններ

21 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահաս անձինք չեն կարող միաժամանակ ստանալ և՛ պալիատիվ (բուժիչ), և՛ հոսպիսային ինամք: Եթե Դուք ստանում եք պալիատիվ ինամք և իրավասու եք հոսպիսային ինամքից, կարող եք ցանկացած պահի ինդրել անցնել հոսպիսային ինամքի:

Հոսպիտալացում

Անեսթեզիոլոգի ծառայություններ

Molina Healthcare-ը ծածում է բժշկական առումով անհրաժեշտ անեսթեզիոլոգի ծառայությունները հիվանդանոցում ծածկվող ժամկետով գտնվելու ընթացքում: Անեսթեզիոլոգը բժիշկ է, որը մասնագիտացած է հիվանդների անզգայացման ուղղությամբ: Անզգայացումը բժշկական գործընթաց է, որն օգտագործվում է որոշ բուժական և ատամնաբուժական պրոցեդուրաների ժամանակ:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է բժշկական առումով անհրաժեշտ ստացիոնար հիվանդանոցային խնամքի ծախսերը, երբ Դուք ընդունվում եք հիվանդանոց:

Ամբողջ գենոմի արագ հաջորդականացում

Ամբողջ գենոմի արագ սեքվենավորումը (RWGS) ապահովագրված ծառայություն է Medi-Cal-ի ցանկացած անդամի համար, ով 1 տարեկան կամ ավելի փոքր տարիքի է և ստանում է ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ վերակենդանացման բաժանմունքում: Այն ներառում է անհատական սեքվենավորում, եռակի սեքվենավորում ծնողի կամ ծնողների և նրանց երեխայի համար, ինչպես նաև գերարագ սեքվենավորում:

Ամբողջ գենոմի արագ սեքվենավորումը վաղ ախտորոշման նոր միջոց է, որն ազդում է Ինտենսիվ թերապիայի բաժանմունքում (ICU) 1 տարեկան և ավելի փոքր տարիքի երեխաների խնամքի վրա: Եթե Ձեր երեխան իրավասու է օգտվելու California-ի երեխաների ծառայությունների (CCS) ծրագրից, CCS-ը կարող է ծածկել հիվանդանոցային խնամքի և ամբողջ գենոմի արագ սեքվենավորման ծախսերը:

Վիրաբուժական ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է հիվանդանոցում կատարված այն վիրահատությունների ծախսերը, որոնք համարվում են բժշկական տեսանկյունից անհրաժեշտ:

Յետծննդյան ծառայությունների լայն ծածկույթ

Molina Healthcare-ը ծածկում է ծառայությունները հղիության ավարտից հետո մինչև 12 ամիս՝ անկախ քաղաքացիությունից, ներգաղթային կարգավիճակից, եկամտի փոփոխություններից կամ հղիության ավարտից մինչև մեկ տարի:

Վերականգնողական և զարգացնող (թերապևտիկ) ծառայություններ և սարքեր

Այս արտոնությունը ներառում է ծառայություններ և սարքեր, որոնք կօգնեն վնասվածքներ, հաշմանդամություն կամ քրոնիկական խնդիրներ ունեցող մարդկանց ձեռք բերել կամ վերականգնել մտավոր և ֆիզիկական հմտությունները:

Molina Healthcare-ը ծածկում է այս բաժնում նկարագրված վերականգնողական և զարգացնող ծառայությունները, եթե բավարարվում են հետևյալ բոլոր պահանջները.

- Ծառայությունները բժշկական առումով անհրաժեշտ են:
- Ծառայությունները նախատեսված են առողջական խնդիրը բուժելու համար:
- Ծառայությունները պետք է օգնեն Ձեզ պահպանել, ձեռք բերել կամ բարելավել հմտություններ և ֆունկցիոնալություն առօրյա կյանքում:
- Դուք ծառայությունները ստանում եք ներցանցային հաստատությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ ներցանցային բժշկը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չի համարում, որ Դուք ծառայություններ ստանաք այլ



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

վայրում, կամ ներցանցային հաստատություն հասանելի չէ Ձեր առողջական խնդիրը բուժելու համար:

Molina Healthcare-ը ծածկում է հետևյալ վերականգնողական/զարգացնող ծառայությունները՝

Ասեղնաբուժություն

Molina Healthcare-ը ծածկում է ասեղնաբուժության ծառայությունները՝ կանխելու, փոխելու կամ թեթևացնելու ծանր, շարունակական քրոնիկական ցավի ընկալումը, որն առաջանում է ճանաչված առողջական խնդրի պատճառով:

Ասեղնաբուժության ամբուլատոր ծառայությունները, ասեղների էլեկտրական խթանմամբ կամ առանց դրա, սահմանափակվում են ամսական 2 ծառայությամբ՝ զուգորդված աուդիոլոգիայի, կիրոպրակտիկայի, օկուպացիոն թերապիայի և խոսքային թերապիայի ծառայությունների հետ, եթե դրանք տրամադրվում են բժշկի, ատամնաբույժի, պոդոլոգի կամ ասեղնաբուժության մասնագետի կողմից:

Սահմանափակումները չեն տարածվում 21 տարեկանից ցածր երեխաների վրա: Molina Healthcare-ը կարող է նախապես հաստատել (նախապես թույլատրել) ավելի շատ ծառայություններից օգտվելու իրավասությունը՝ ըստ բժշկական անհրաժեշտության:

Աուդիոլոգիա (լսողություն)

Molina Healthcare-ը ծածկում է աուդիոլոգիական ծառայությունները: Ամբուլատոր աուդիոլոգիան սահմանափակվում է ամսական երկու ծառայությամբ՝ ասեղնաբուժության, կիրոպրակտիկայի, մասնագիտական թերապիայի և խոսքային թերապիայի ծառայությունների հետ համատեղ (սահմանափակումները չեն տարածվում 21 տարեկանից ցածր երեխաների վրա): Molina Healthcare-ը կարող է նախապես հաստատել (նախապես թույլատրել) ավելի շատ ծառայություններից օգտվելու իրավասությունը՝ ըստ բժշկական անհրաժեշտության:

Վարքագծային առողջության բուժում

Molina Healthcare-ը ծածկում է մինչև 21 տարեկան անձանց վարքագծային առողջության բուժման (BHT) ծառայությունները՝ «Medi-Cal երեխաների և դեռահասների համար» արտոնության միջոցով: Վարքագծային առողջության բուժումը (BHT) ներառում է ծառայություններ և բուժման ծրագրեր, ինչպիսիք են, օրինակ, վարքագծի կիրառական վերլուծությունը և ապացուցահեն միջամտության ծրագրերը, որոնք զարգացնում կամ վերականգնում են մինչև 21 տարեկան անձի գործունեությունն հնարավոր առավելագույն չափով:

Վարքագծային առողջության բուժման ծառայությունների միջոցով մասնագետները հմտություններ են սովորեցնում վարքի դիտարկման և խթանման միջոցով, ինչպես նաև ուղղորդված վարքի յուրաքանչյուր քայլը սովորեցնելու հուշումների միջոցով: Վարքագծային առողջության բուժման ծառայությունները հիմնված են հուսալի ապացույցների վրա: Դրանք փորձարարական ծառայություններ չեն: Վարքագծային առողջության բուժման ծառայությունների օրինակները ներառում են՝ վարքագծային



Ձանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Ձանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

միջամտություններ, ճանաչողական վարքագծային միջամտության փաթեթներ, վարքագծային համապարփակ բուժում և վարքագծի կիրառական վերլուծություն:

Վարքագծային առողջության բուժման ծառայությունները պետք է լինեն բժշկական առումով անհրաժեշտ և նշանակված լինեն լիցենզավորված բժշկի կամ հոգեբանի կողմից: Ծառայությունները պետք է հաստատվեն Molina Healthcare-ի կողմից և տրամադրվեն բուժման հաստատված պլանին համապատասխանող ձևով:

Սրտանոթային համակարգի վերականգնում

Molina Healthcare-ը ծածկում է սրտի վերականգնողական ստացիոնար և ամբուլատոր ծառայությունները:

Երկարատև բժշկական սարքավորումներ (DME)

Molina -ը ծածկում է DME պարագաների, սարքավորումների և այլ ծառայությունների գնումը կամ վարձույթը բժշկի, բժշկի օգնականի, բուժքույրի կամ կլինիկական բուժքույր-մասնագետի ղեղաորոշմամբ: Նշանակված DME պարագաները ծածկվում են՝ որպես բժշկական տեսանկյունից անհրաժեշտ՝ պահպանելու համար մարմնի գործառնությունները, որոնք էական նշանակություն ունեն առօրյա գործունեության համար, ինչպես նաև կանխելու լուրջ ֆիզիկական հաշմանդամությունը:

Ընդհանուր առմամբ, Molina Healthcare-ը չի ծածկում.

- Հանգստի, հարմարավետության կամ շքեղ սարքավորումների, հատուկ կարիքների և պարագաների ծախսերը, բացառությամբ կրծքերի մանրածախ պոմպերի, որոնք ավելի վաղ նկարագրված են այս գլխի «Կրծքի պոմպեր և պարագաներ» «Մայրերի և նորածինների ինսամբ» բաժնում:
- Պարագաներ, որոնք նախատեսված չեն ամենօրյա կյանքի բնականոն գործունեությունը պահպանելու համար, օրինակ՝ մարզասարքեր, այդ թվում՝ այն սարքերը, որոնք նախատեսված են հանգստի կամ սպորտային գործունեության օժանդակելու համար:
- Հիգիենայի պարագաներ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են մինչև 21 տարեկան անձին:
- Ոչ բժշկական պարագաներ, ինչպիսիք են սաունայի լուգարանները կամ վերելակները:
- Ձեր տան կամ մեքենայի փոփոխությունները:
- Արյան կամ մարմնի այլ նյութերի փորձարկման սարքեր (շաքարային դիաբետոսի հիվանդի արյան մեջ գլյուկոզայի մոնիտորներ, մշտապես աշխատող գլյուկոզայի մոնիտորներ, թեստային ժապավեններ և նշտաներ, որոնց ծախսերը ծածկում է Medi-Cal Rx-ը)
- Սրտի կամ թոքերի էլեկտրոնային մոնիտորներ, բացառությամբ մանկական ապնոէի մոնիտորների:
- Սարքավորումների վերանորոգում կամ փոխարինում կորստի, գողության կամ չարաշահման հետևանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ ծառայությունը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է մինչև 21 տարեկան անձին:



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

- Այլ իրեր, որոնք որպես կանոն չեն օգտագործվում առողջության պահպանման համար:
Որոշ դեպքերում այս կետերը կարող են հաստատվել, եթե Ձեր բժիշկը դիմում ներկայացնի նախնական հաստատման (նախնական թույլտվության) համար:

Ներքին և պարենտերալ սնուցում

Մարմնին սնուցում ապահովող այս մեթոդներն օգտագործվում են, երբ որևէ հիվանդություն խանգարում է Ձեզ նորմալ ուտել: Ներքին սնուցման բանաձևերը և պարենտերալ սնուցման արտադրանքները կարող են ծածկել Medi-Cal Rx-ի միջոցով, երբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են համարվում: Molina Healthcare-ը ծածկում է էնտերալ և պարանտերալ պոմպերի և խողովակների ծախսը, երբ դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են:

Լսողական սարքեր

Molina Healthcare-ը ծածկում է լսողական սարքերի ծախսը, եթե լսողության կորստի թեստ եք անցնում, պարզվում է, որ լսողական սարքերը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են Ձեզ, և Դուք ունեք նշանակում Ձեր բժշկի կողմից:

Ապահովագրության ծածկույթը սահմանափակվում է ամենամատչելի լսողական սարքով, որը բավարարում է Ձեր բժշկական կարիքները: Molina Healthcare-ը կծածկի մեկ լսողական սարքի գումարը, եթե յուրաքանչյուր ականջի համար լսողական ապարատ չի պահանջվում ավելի լավ արդյունքների համար, քան այն դեպքում, երբ օգտվեք մեկ լսողական սարքից:

Լսողական սարքեր 21 տարեկանից ցածր անձանց համար՝

Լուս Անջելեսի շրջանում նահանգային օրենքը պահանջում է, որ մինչև 21 տարեկան երեխաները, ովքեր լսողական սարքերի կարիք ունեն, պետք է ուղղորդվեն California-ի մանկական ծառայությունների (CCS) ծրագրին, որպեսզի որոշեն, թե արդյոք երեխան համապատասխանում է CCS-ին: Եթե երեխան համապատասխանում է CCS-ին, CCS-ը կհոգա բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լսողական սարքերի ծախսերը: Եթե երեխան չի համապատասխանում CCS-ին, Molina Healthcare-ը, որպես Medi-Cal ապահովագրական ծածկույթի մի մաս, կծածկի բուժման համար անհրաժեշտ լսողական սարքերի գումարը:

Լսողական սարքեր 21 և ավելի բարձր տարիքի անձանց համար:

Medi-Cal-ի ներքո Molina Healthcare-ը ապահովագրված յուրաքանչյուր լսողական սարքի համար կծածկի նշված ծախսերը.

- Ականջի կաղապարներ, որոնք անհրաժեշտ են տեղադրման համար:
- Մեկ ստանդարտ մարտկոցի փաթեթ:
- Այցեր՝ համոզվելու, որ լսողական սարքը ճիշտ է աշխատում:
- Այցեր՝ Ձեր լսողական սարքը մաքրելու և տեղադրելու համար:
- Ձեր լսողական սարքի վերանորոգում:
- Լսողական սարքի պարագաներ և վարձույթ:

Medi-Cal-ի ներքո Molina Healthcare-ը ծածկում է փոխարինող լսողական սարքի ծախսը, եթե.



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

- Ձեր լսողության կորուստն այնպիսին է, որ Ձեր ներկայիս լսողական սարքը չի կարող շտկել այն:
- Ձեր լսողական սարքը կորել է, գողացվել կամ կոտրվել է և հնարավոր չէ այն վերանորոգել, և դա Ձեր մեղքով չի եղել: Դուք պետք է մեզ գրություն ներկայացնեք, որում կպատմեք, թե ինչպես է դա տեղի ունեցել:

21 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահաս անձանց համար Medi-Cal-ը չի ծածկում՝

- Լսողական ապարատի մարտկոցների փոխարինումը:

Առողջապահական ծառայություններ տանը

Molina Healthcare-ը ծածկում է տանը Ձեզ մատուցվող առողջապահական ծառայությունները, երբ դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և նշանակված են Ձեր բժշկի կամ բժշկի օգնականի, բուժքրոջ կամ կլինիկական բուժքրոջ կողմից:

Տանը մատուցվող առողջապահական ծառայությունները սահմանափակվում են միայն այն ծառայություններով, որոնք Medi-Cal-ը ծածկում է, այդ թվում.

- Կես դրույքով հմուտ մասնագիտացված ինսամք
- Կես դրույքով տնային ինսամք
- Ֆիզիկական, մասնագիտական և խոսքային մասնագիտացված թերապիա
- Բժշկական սոցիալական ծառայություններ
- Բժշկական պարագաներ

Բժշկական պարագաներ, սարքավորումներ և տեխնիկա

Molina Healthcare-ը ծածկում է բժիշկների, բժշկի օգնականների, բուժքույրերի և կլինիկական բուժքույրերի կողմից նշանակված բժշկական պարագաների ծախսերը: Որոշ բժշկական պարագաներ ապահովագրվում են Medi-Cal Rx-ի միջոցով, որը հանդիսանում է Medi-Cal-ի վճարովի ծառայության(FFS), այլ ոչ թե Molina Healthcare-ի: Երբ Medi-Cal Rx-ը ծածկում է պարագաների ծախսերը, մատակարարը գումարը գանձում է Medi-Cal-ից:

Medi-Cal-ը չի ծածկում՝

- Ընդհանուր կենցաղային իրեր, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով՝
 - Կաշուն ժապավեն (բոլոր տեսակի)
 - Սպիրտ
 - Կոսմետիկա
 - Բամբակյա գնդիկներ և շվաբրեր
 - Դեղափոշի
 - Անձեռոցիկներ
 - Վիթչ հիզել (Witch hazel)
- Ընդհանուր կենցաղային միջոցներ, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով՝
 - Սպիտակ բենզին
 - Չոր մաշկի յուղեր և լոսյոններ



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

- Տալի և տալի համակցված արտադրանք
- Օքսիդացնող կյուբեր, ինչպիսիք են ջրածնի պերօքսիդը
- Կարբամիդի պերօքսիդ և նատրիումի պերբորատ
- Առանց դեղատոմսի շամպուններ
- Տեղական պատրաստուկներ, որոնք պարունակում են բենզոյան և սալիցիլաթթու քսուր, սալիցիլաթթվի կրեմ, քսուր կամ հեղուկ և ցինկի օքսիդի մածուկ
- Այլ իրեր, որոնք որպես կանոն չեն օգտագործվում ընդհանուր բժշկական օգնություն ցուցաբերելու համար, և որոնք պարբերաբար և հիմնականում օգտագործվում են այն անձանց կողմից, որոնք դրանցից օգտվելու հատուկ բժշկական կարիք չունեն

Օկուլպացիոն թերապիա

Molina Healthcare-ը ծածկում է օկուլպացիոն թերապիայի ծառայությունները, ներառյալ օկուլպացիոն թերապիայի գնահատումը, բուժման պլանավորումը, բուժումը, ցուցումները և խորհրդատվական ծառայությունները: Օկուլպացիոն թերապիայի ծառայությունները սահմանափակվում են ամսական 2 ծառայությունով՝ ասեղնաբուժության, աուդիոլոգիայի, կիրոպրակտիկայի և խոսքային թերապիայի ծառայությունների հետ համատեղ (սահմանափակումները չեն տարածվում 21 տարեկանից ցածր երեխաների վրա): Molina Healthcare-ը կարող է նախապես հաստատել (նախապես թույլատրել) ավելի շատ ծառայություններից օգտվելու իրավասությունը՝ ըստ բժշկական անհրաժեշտության:

Օրթոզներ/պրոթեզներ

Molina Healthcare-ը ծածկում է օրթոզային և պրոթեզային սարքերի ու ծառայությունների ծախսերը, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և նշանակված են Ձեր բժշկի, պոդոլոգի, ատամնաբույժի կամ ոչ բժիշկ մատակարարի կողմից: Դրանք ներառում են լսողական ինսպլանտներ, կրծքի պրոթեզներ/մաստէկտոմիա կրծկալներ, կոմպրեսիոն այրվածքների դեպքում օգտագործվող հագուստ և պրոթեզավորում՝ ֆունկցիան վերականգնելու կամ մարմնի մի մասը փոխարինելու կամ մարմնի թուլացած կամ դեֆորմացված հատվածին աջակցելու համար:

Օստոմիա և ուրոլոգիական կյուբեր

Molina Healthcare-ը ծածկում է օստոմիայի պարկերի, միզուղիների կաթետրերի, դրենաժային պարկերի, իռիգացիոն պարագաների և կաչուն ժապավենների ծախսերը: Սա չի ներառում հանգստի կամ հարմարավետության համար նախատեսված պարագաների, շքեղ սարքավորումների կամ առանձնահատուկ կարիքների ծախսերը:

Ֆիզիկական թերապիա

Molina Healthcare-ը ծածկում է բժշկական առումով անհրաժեշտ ֆիզիկական թերապիայի ծառայությունները, ներառյալ ֆիզիկական թերապիայի գնահատումը, բուժման պլանավորումը, բուժումը, ուսուցումը, խորհրդատվական ծառայությունները և տեղային դեղամիջոցների կիրառումը:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Թորային վերականգնում

Molina Healthcare-ը ծածկում է թորքերի վերականգնման ծախս, որը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է և նշանակվում է բժշկի կողմից:

Ծառայություններ խնամքի մասնագիտացված հաստատություններում

Molina Healthcare-ը ծածկում է մասնագիտացված հաստատության ծառայությունները, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են, եթե Դուք հաշմանդամ եք և կարիք ունեք բարձր մակարդակի խնամքի: Այս ծառայությունները ներառում են սենյակ և մնունդ լիցենզավորված հաստատությունում՝ օրական 24-ժամյա որակավորված մասնագիտացված խնամքով:

Խոսքային թերապիա

Molina Healthcare-ը ներառում է խոսքային թերապիա, որը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է: Խոսքային թերապիայի ծառայությունները սահմանափակվում են ամսական 2 ծառայությունով՝ ասեղնաբուժության, աուդիոլոգիայի, կիրոպրակտիկայի և օկուպացիոն թերապիայի ծառայությունների հետ համատեղ: Սահմանափակումները չեն տարածվում 21 տարեկանից ցածր երեխաների վրա: Molina Healthcare-ը կարող է նախապես հաստատել (նախապես թույլատրել) ավելի շատ ծառայություններից օգտվելու իրավասությունը՝ ըստ բժշկական անհրաժեշտության:

Տրանսգենդերների ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է տրանսգենդերների ծառայությունների (գենդերային հաստատման ծառայություններ) ծախսերը, երբ դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են, կամ երբ ծառայությունները համապատասխանում են վերականգնողական վիրահատության կանոններին:

Կլինիկական փորձարկումներ

Molina Healthcare-ը ծածկում է կլինիկական փորձարկումներում ընդունված հիվանդների ընթացիկ խնամքի ծախսերը, ներառյալ քաղցկեղի կլինիկական փորձարկումները, որոնք նշված են Միացյալ Նահանգների համար՝ <https://clinicaltrials.gov> կայքում:

Medi-Cal Rx-ը, որպես FFS Medi-Cal-ի մաս, ծածկում է ամբուլատոր դեղատոմսով դեղերի մեծ մասի ծախսը: Ավելին իմանալու համար՝ ավելի ուշ այս գլխում կարդացեք «Ամբուլատոր դեղատոմսով դեղեր» բաժինը:

Լաբորատոր և ռադիոլոգիական ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է ամբուլատոր և ստացիոնար լաբորատոր և ռենտգեն ծառայությունները, երբ բժշկական անհրաժեշտություն կա: Վիզուալիզացման առաջադեմ ընթացակարգերը, ինչպիսիք են CT սկանավորումները, MRI հետազոտությունները և PET սկանավորումները, ծածկվում են՝ ելնելով բժշկական անհրաժեշտությունից:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Կանխարգելիչ և առողջապահական ծառայություններ և քրոնիկ հիվանդությունների կառավարում

Molina Healthcare-ը ծածկում է.

- Իմունականխարգելման պրակտիկայի խորհրդատվական կոմիտեի (ACIP) կողմից առաջարկվող պատվաստանյութեր
- Ընտանիքի պլանավորման ծառայություններ
- «Ամերիկյան մանկաբուժության ակադեմիայի պայծառ ապագա»-ի կողմից արված առաջարկություններ (https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf)
- Մանկության անբարենպաստ փորձառությունների (ACE) սքրինինգ
- Ասթմայի կանխարգելման ծառայություններ
- Կանանց համար կանխարգելիչ ծառայություններ, որոնք առաջարկվում են Մանկաբարձների և գինեկոլոգների ամերիկյան քոլեջի կողմից
- Օգնություն՝ թողնելու ծխելը, որը նաև կոչվում է ծխելը դադարեցնելու ծառայություն
- Միացյալ Նահանգների Կանխարգելիչ ծառայությունների A և B կարգի աշխատանքային խմբի կողմից առաջարկվող կանխարգելիչ ծառայություններ

Ընտանիքի պլանավորման ծառայություններ

Ընտանիքի պլանավորման ծառայությունները տրամադրվում են վերարտադրողական տարիքի անձանց, որպեսզի նրանք կարողանան ընտրել երեխաների թիվը և նրանց տարիքային տարբերությունը: Այս ծառայությունները ներառում են ծնելիության վերահսկման բոլոր մեթոդները, որոնք հաստատված են Սննդի և դեղերի վարչության (FDA) կողմից: Molina Healthcare-ում ընտանիքի պլանավորման ծառայությունների համար հասանելի են առաջնային խնամքի մատակարարներ և մանկավարձ/գինեկոլոգ մասնագետներ:

Ընտանիքի պլանավորման ծառայությունների համար Դուք կարող եք ընտրել Medi-Cal-ի ցանկացած բժշկ կամ կլինիկա, որը Molina Healthcare-ի ցանցում ներառված չէ, առանց նախնական հաստատման (նախնական թույլտվության) ստանալու Molina Healthcare-ի կողմից: Եթե Դուք ստանում եք ծառայություններ, որոնք կապված չեն ցանցում չներառված մատակարարի կողմից մատուցվող ընտանիքի պլանավորման հետ, այդ ծառայությունները կարող են չծածկվել: Ավելին իմանալու համար՝ զանգահարե՛ք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711):

Քրոնիկ հիվանդությունների կառավարում

Molina Healthcare-ը ծածկում է նաև քրոնիկ հիվանդությունների կառավարման ծրագրերը՝ ուղղված հետևյալ առողջական խնդիրներին.

- Շաքարային դիաբետ
- Սրտանոթային հիվանդություն
- Ասթմա

21 տարեկանից ցածր անձանց կանխարգելիչ խնամքի մասին տեղեկությունների համար՝ կարդացե՛ք այս ձեռնարկի Գլուխ 5-ը՝ «Երեխայի և երիտասարդության լավ խնամք»:



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելե՛ք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Շաքարային դիաբետի կանխարգելման ծրագիր

Շաքարային դիաբետի կանխարգելման ծրագիրը (DPP) կենսակերպի՝ փոփոխության գիտականորեն հիմնավորված ծրագիր է: Այս 12-ամսյա ծրագիրը կենտրոնացած է ապրելակերպի փոփոխության վրա: Այն նախատեսված է կանխարգելելու կամ հետաձգելու համար 2-րդ տիպի շաքարային դիաբետի առաջացումը նախադիաբետով ախտորոշված անձանց մոտ: Այն անդամները, ովքեր համապատասխանում են չափանիշներին, կարող են իրավասություն ստանալ երկրորդ տարում: Ծրագիրը տրամադրում է կրթություն և խմբային աջակցություն: Տեխնիկաները ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

- Գործընկեր մարզչի տրամադրում
- Ինքնադիտարկման և խնդիրների լուծման ուսուցում
- Խրախուսման և հետադարձ կապի ապահովում
- Տեղեկատվական նյութերի տրամադրում՝ նպատակներին աջակցելու համար
- Ընթացիկ կշռումների հետևում՝ սահմանված նպատակներին հասնելու համար

Անդամները պետք է համապատասխանեն որոշակի կանոնների՝ DPP-ին միանալու համար: Չանգահարեք Molina Healthcare՝ իմանալու համար, արդյոք Դուք իրավասու եք օգտվելու ծրագրից:

Վերականգնողական ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է վիրահատության ծախսերը՝ մարմնի ոչ նորմալ կառուցվածքը շտկելու կամ վերականգնելու համար՝ հնարավորինս բարելավելու կամ նորմալ արտաքին տեսք ապահովելու համար: Մարմնի ոչ նորմալ կառուցվածքն այն կառուցվածքն է, որն առաջանում է բնածին արատների, զարգացման անոմալիաների, վնասվածքի, վարակի, ուռուցքների, հիվանդությունների կամ հիվանդությունների բուժման հետևանքով, որոնք հանգեցրել են մարմնի կառուցվածքի կորստի, օրինակ՝ մաստէկտոմիա: Կարող են կիրառվել որոշ սահմանափակումներ և բացառություններ:

Նյութերի օգտագործման խանգարումների սրինինգային ծառայություններ

Molina Healthcare-ը ծածկում է.

- Ալկոհոլի և թմրամիջոցների, ներառյալ ծխախոտի, ալկոհոլի, ապօրինի թմրամիջոցների օգտագործման ստուգում, գնահատում, համառոտ միջամտություններ և բուժման ուղղորդում (SABIRT) առաջնային խնամքի հաստատություններում՝ 11 և ավելի բարձր տարիքի անձանց, ներառյալ հղիների համար:

Բացի այդ, Molina Healthcare-ը տրամադրում է հետևյալ ծառայությունները՝

- Կախվածության բուժման համար նախատեսված դեղամիջոցներ (MAT, որը նաև հայտնի է որպես դեղորայքային բուժում), որոնք տրամադրվում են առաջնային բուժօգնության, ստացիոնար հիվանդանոցներում, շտապ օգնության բաժանմունքներում և այլ պայմանագրային բուժհաստատություններում:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

- Անձի վիճակի կայունացման համար անհրաժեշտ շտապ օգնության ծառայություններ:
- Molina Healthcare-ը կտրամադրի կամ կկազմակերպի բժշկական առումով անհրաժեշտ հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունների (SMHS) տրամադրումը իրենց շրջաններում գտնվող այն անձանց համար, ովքեր համապատասխանում են SMHS-ից օգտվելու չափանիշներին:

Շրջանի միջոցով բուժման ապահովագրմանը ծանոթանալու համար՝ ավելի ուշ այս գլխում կարդացեք «Թմրանյութերի օգտագործման խանգարումների բուժման ծառայությունները»:

Արտոնություններ՝ տեսողության հետ կապված ծառայությունների համար

Molina Healthcare-ը ծածկում է.

- Աչքի սովորական հետազոտության ծախսը՝ 24 ամիսը մեկ անգամ: Ծածկվում են նաև աչքի ավելի հաճախակի հետազոտությունները, եթե բժշկական տեսանկյունից դա անհրաժեշտ է այնպիսի անձանց, ինչպիսիք են, օրինակ, շաքարաային դիաբետով հիվանդները:
- Վավեր դեղատոմսով ակնոցի (շրջանակներ և ոսպնյակներ) ծախսը՝ 24 ամիսը մեկ անգամ:
- Փոխարինեք ակնոցը 24 ամսվա ընթացքում, եթե Ձեր դեղատոմսը փոխվում է, կամ Ձեր ակնոցը կորել է, գողացվել կամ կոտրվել է և չի կարող վերանորոգվել, և դա Ձեր մեղքով չի եղել: Դուք պետք է մեզ գրություն ներակայցնեք, որով կպատմեք, թե ինչպես է Ձեր ակնոցը կորել, գողացվել կամ կոտրվել:
- Ցածր տեսողության դեպքում օգտագործվող սարքերի ծախսը, եթե Դուք ունեք տեսողության խանգարում, որը ազդում է ամենօրյա գործողություններ կատարելու Ձեր ունակության վրա (օրինակ՝ տարիքային մակուլյար դեգեներացիա), և ստանդարտ ակնոցի, կոնտակտային ոսպնյակները, դեղամիջոցները կամ վիրահատությունը չեն կարող շտկել Ձեր տեսողության խանգարումը:
- Բժշկական առումով անհրաժեշտ կոնտակտային ոսպնյակներ: Կոնտակտային ոսպնյակների փորձարկման և կոնտակտային ոսպնյակների ծախսերը կարող են ծածկվել, եթե ակնոցի օգտագործումը հնարավոր չէ աչքերի հիվանդության կամ խնդրի պատճառով (օրինակ՝ ականջի բացակայություն): Առողջական խնդիրները, որոնց դեպքում անձն իրավասուն է օգտվելու հատուկ կոնտակտային ոսպնյակներից, ներառում են, բայց չեն սահմանափակվում, անհրիդիայով, աֆակիայով և կերատոկոնուսով:
- Մինչև 21 տարեկան երեխաների և երիտասարդների ակնաբուժական զննումները և ակնոցի տրամադրումը չեն սահմանափակվում 24 ամիս պարբերականությամբ: Ըստ «Medi-Cal երեխաների և դեռահասների համար» ծրագրի՝ դրանք տրամադրվում են այն ժամանակ, երբ մատակարարը ցույց է տալիս, որ դա բժշկական անհրաժեշտություն է:
- Մինչև 21 տարեկան երեխաները և երիտասարդները, որոնք ունեն առողջական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կերատոկոնուսը և աֆակիան, պետք է ուղեգրվեն CCS-ի մոտ՝ հետագա խնամք ստանալու համար:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Արտոնություններ՝ փոխադրման հնարավորություն ստանալու այն իրավիճակներում, որոնք արտակարգ իրավիճակներ չեն համարվում

Դուք կարող եք բժշկական նպատակներով փոխադրման հնարավորություն ստանալ, եթե ունեք բժշկական կարիքներ, որոնք թույլ չեն տալիս օգտագործել մեքենա, ավտոբուս, գնացք կամ տաքսի՝ բժշկական օգնություն ստանալու Ձեր այցերին հասնելու համար: Դուք կարող եք փոխադրման հնարավորություն ստանալ՝ օգտվելու ապահովագրված ծառայություններից և Medi-Cal-ի ապահովագրված դեղատանային այցերից: Դուք կարող եք բժշկական նպատակներով փոխադրման հնարավորություն ստանալ՝ խնդրելով Ձեր բժշկին, ատամնաբույժին, պոդոլոգին, հոգեկան առողջության կամ թմրամիջոցների օգտագործման խանգարումներով զբաղվող մատակարարին: Ձեր մատակարարը կորոշի փոխադրման ճիշտ տեսակը՝ ըստ Ձեր կարիքների:

Եթե մատակարարը համարի, որ Ձեզ անհրաժեշտ է բժշկական փոխադրում, կնշանակի Ձեզ համար այդ ծառայությունը՝ լրացնելով ձևաթուղթ և ներկայացնելով այն Molina Healthcare-ին: Հաստատում ստանալուց հետո հաստատումը գործում է մինչև 12 ամիս՝ կախված բժշկական կարիքից: Հաստատվելուց հետո Դուք կարող եք ստանալ փոխադրման այնքան ծառայություն, որքան անհրաժեշտ է: Ձեր բժիշկը պետք է վերագնահատի բժշկական փոխադրման Ձերանհրաժեշտությունը Ձեզ համար և ժամկետը լրանալուց հետո, անհրաժեշտության դեպքում, նորից հաստատի բժշկական փոխադրման Ձեր նշանակումը, եթե Դուք դեռևս իրավասու եք օգտվելու այդ ծառայությունից: Ձեր բժիշկը կարող է վերահաստատել բժշկական փոխադրման անհրաժեշտությունը մինչև 12 ամիս կամ ավելի քիչ ժամանակահատվածի համար:

Բժշկական փոխադրումը շտապօգնության մեքենայով, պատգարակ-ֆուրգոնով, սայլակ-ֆուրգոնով կամ օդային փոխադրամիջոցով անձի փոխադրումն է: Molina Healthcare-ը թույլ է տալիս Ձեր բժշկական կարիքներ համար օգտվել ամենամատչելի բժշկական փոխադրումից՝ Ձեր այցի վայրը հասնելու համար: Դուք Սա նշանակում է, օրինակ, որ եթե Դուք ֆիզիկապես կամ բժշկական տեսանկյունից կարող եք տեղափոխվել անվասայլակով, Molina Healthcare-ը չի վճարի շտապ օգնության ծառայությունների համար: Դուք իրավունք ունեք օգտվելու օդային փոխադրումից միայն այն դեպքում, եթե Ձեր առողջական վիճակը բացառում է ցամաքային որևէ փոխադրամիջոցից:

Դուք կստանաք բժշկական փոխադրման ծառայություն, եթե՝

- Դա ֆիզիկապես կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է բժշկի կամ այլ մատակարարի գրավոր թույլտվությամբ, քանի որ Դուք ֆիզիկապես կամ բժշկական տեսանկյունից ի վիճակի չեք օգտագործել մեքենա, ավտոբուս, գնացք կամ տաքսի Ձեր հանդիպման վայրը հասնելու համար:
- Ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամության պատճառով Դուք վարորդի օգնության կարիք ունեք Ձեր տուն, դեպի մեքենա կամ բուժման վայր գնալու և վերադառնալու համար:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Որպեսզի խնդրեք բժշկական փոխադրման ծառայություն, որը Ձեր բժիշկը նշանակել է ոչ անհետաձգելի (ընթացիկ) տեսակցությունների համար, զանգահարեք Molina Healthcare՝ 1-888-665-4621 կամ Ամերիկյան լոգիստիկ ծառայություն՝ 1-844-292-2688 հեռախոսահամարով՝ նախքան Ձեր հանդիպումն առնվազն 2 աշխատանքային օր առաջ ծանուցելով (երկուշաբթիից ուրբաթ): Ձեր: Անհետաձգելի այցերի համար խնդրում ենք զանգահարել որքան հնարավոր է շուտ: Ձեր Molina Healthcare-ի Ձեր ID քարտը պատրաստ պահեք, երբ զանգահարեք:

Բժշկական փոխադրման սահմանափակումները

Molina Healthcare-ը տրամադրում է ամենամատչելի բժշկական փոխադրումը, որը բավարարում է Ձեր բժշկական կարիքները, որպեսզի Ձեր տևից հասնեք մոտակա մատակարարին: Դուք չեք կարող բժշկական փոխադրման ծառայություն ստանալ, եթե Medi-Cal-ը չի ծածկում Ձեր ստացած ծառայությունը, կամ դա Medi-Cal-ով ծածկվող այց չեղեղատուն: Ապահովագրված ծառայությունների ցանկը ներկայացված է սույն ձեռնարկի Գլուխ 4-ի «Արտոնություններն և ծառայություններ» բաժնում:

Եթե Medi-Cal-ը ծածկում է նշանակված ծառայության տվյալ տեսակը, բայց ոչ առողջապահական պլանի միջոցով, Molina Healthcare-ը չի ծածկի Ձեր բժշկական փոխադրման ծախսերը, սակայն կարող է օգնել Ձեզ պլանավորել Ձեր փոխադրումը Medi-Cal-ի միջոցով: Փոխադրումը չի ծածկվում Molina Healthcare-ի ցանցից կամ սպասարկման տարածքից դուրս, եթե նախապես լիազորված չէ Molina Healthcare-ի կողմից: Ավելին իմանալու կամ բժշկական փոխադրում խնդրելու համար՝ զանգահարեք Molina Healthcare՝ 1-888-665-4621 հեռախոսահամարով կամ Ամերիկյան լոգիստիկ ծառայություն՝ 1-844-292-2688 հեռախոսահամարով:

Արժեքը պլանի անդամի համար

Երբ Molina Healthcare-ը կազմակերպում է փոխադրում, անդամի կողմից վճարում չի արվում:

Ինչպես ստանալ ոչ բժշկական փոխադրման ծառայություն

Ձեր արտոնությունները ներառում են Ձեզ համար նշանակված այցերին հասնելու փոխադրումը, երբ նշանակված էր այց՝ Medi-Cal-ի կողմից ծածկվող ծառայություն ստանալու համար, և Դ-Դուք չունեք փոխադրման հնարավորություն: Դուք կարող եք անվճար երթևեկել, երբ փորձել եք փոխադրման հնարավորություն եռք բերելու բոլոր մյուս ուղիները և Դուք պետք է՝

- Գնաք և վերադառնաք Ձեզ նշանակված այցի վայր՝ ստանալու Medi-Cal-ի ծառայություն, որը լիազորված է Ձեր մատակարարի կողմից, կամ
- Վերցնեք նշանակված դեղեր և բժշկական պարագաներ:

Molina Healthcare-ը թույլ է տալիս Ձեզ օգտվել ավտոմեքենայից, տաքսիից, ավտոբուսից կամ այլ հանրային կամ մասնավոր միջոցից՝ Ձեր այցի վայրը հասնելու համար և Medi-Cal-ի կողմից ծածկվող ծառայություններից օգտվելու համար: Molina Healthcare-ը կծածկի Ձեր կարիքները բավարարող ոչ բժշկական փոխադրման ամենացածր արժեքը: Երբեմն Molina Healthcare-ը կարող է Ձեզ փոխհատուցել (հել վճարել Ձեզ) անձնական ավտոմեքենայով Ձեր կողմից կազմակերպված



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

ուղևորությունների համար: Molina Healthcare-ը պետք է հաստատի սա նախքան ուղևորությունը:

Դուք պետք է տեղեկացնեք մեզ, թե ինչու չեք կարող փոխադրվել այլ եղանակով, օրինակ՝ ավտոբուսով: Կարող եք զանգահարել 1-888-665-4621 հեռախոսահամարով: Եթե ԴԴուք ունեք փոխադրման հնարավորություն կամ կարող եք ինքներդ Ձեր մեքենայով գնալ հանդիպման վայր, Molina Healthcare-ը Ձեզ չի փոխհատուցի: Այս արտոնությունը միայն այն անդամների համար է, ովքեր չունեն փոխադրման հնարավորություն:

Ճանապարհածախսի համար փոխհատուցում ստանալու համար՝ ԴԴուք պետք է ներկայացնեք վարորդի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝

- Վարորդական իրավունք,
- Տրանսպորտային միջոցների գրանցման փաստաթուղթ և
- Ավտոմեքենայի ապահովագրության ապացույց

Լիազորված ծառայությունների համար փոխադրման հնարավորություն խնդրելու համար՝ զանգահարեք Ամերիկյան լոգիստիկ ծառայություն՝ 1-844-292-2688 հեռախոսահամարով Ձեր հանդիպումից առնվազն 2 աշխատանքային օր առաջ (երկուշաբթիից ուրբաթ), կամ որքան հնարավոր է շուտ, երբ անհետաձգելի այց ունեք: ՁերMolina Healthcare-ի Ձեր ID քարտը պատրաստ պահեք, երբ զանգահարեք:

Նշում՝ Ամերիկյան հնդկացիները կարող են նաև կապ հաստատել իրենց հնդկացիական առողջապահական մատակարարի հետ՝ ոչ բժշկական փոխադրում խնդրելու համար:

Ոչ բժշկական փոխադրումների սահմանափակումները

Molina Healthcare-ը ապահովում է ամենամատչելի ոչ բժշկական փոխադրմամբ, որը բավարարում է Ձեր կարիքները՝ Ձեր տևից մոտակա մատակարարին հասնելու համար, որտեղ հնարավոր է այց գրանցել: Պլանի անդամները չեն կարող ինքնուրույն փոխադրամիջոց վարել կամ անմիջական փոխհատուցում ստանալ ոչ բժշկական փոխադրումների համար: Ավելին իմանալու համար՝ զանգահարեք Molina Healthcare ` 1-888-665-4621 հեռախոսահամարով կամ Ամերիկյան լոգիստիկ ծառայություն՝ 1-844-292-2688 հեռախոսահամարով:

Ոչ բժշկական փոխադրումը չի կիրառվում, եթե՝

- Medi-Cal-ի կողմից ծածկվող ծառայության վայր հասնելու համար բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է շտապօգնության մեքենա, պատգարակ, սայլակով ֆուրգոն կամ բժշկական փոխադրման այլ ձև:
- Ֆիզիկական կամ առողջական խնդրի պատճառով Դուք վարորդի օգնության կարիք ունեք՝ Ձեր բնակության վայր, փոխադրամիջոցի մոտ կամ բուժման վայր հասնելու և վերադառնալու համար:
- Դուք հաշմանդամի սայլակով եք տեղաշարժվում և չեք կարողանում մեքենա մտնել և դուրս գալ առանց վարորդի օգնության:
- Medi-Cal-ը չի ծածկում ծառայությունը



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Արժեքը պլանի անդամի համար

Երբ Molina Healthcare-ը կազմակերպում է ոչ բժշկական փոխադրում, ծառայության համար վճար չի գանձվում:

Ճամփորդական ծախսեր

Որոշ դեպքերում, եթե Դուք պետք է այցելեք բժշկի, որի գտնվելու վայրը Ձեր տնից հեռու է, Molina Healthcare-ը կարող է ծածկել ճանապարհածախսը, օրինակ՝ սնունդի, հյուրանոցում մնալու և այլ հարակից ծախսերը, ինչպիսիք են, օրինակ, կայանատեղների ծախսերը, ճանապարհային վճարները և այլն: Այս ճանապարհածախսերը կարող են ծածկվել նաև այն անձանց համար, ովքեր ճամփորդում են Ձեզ հետ, որպեսզի օգնեն Ձեզ, ինչպես նաև այն անձի համար, որը Ձեզ օրգան է նվիրաբերում օրգանի փոխպատվաստման համար: Դուք պետք է ինդրեք նախնական հաստատում (նախնական թույլտվություն) այս ծառայությունների համար՝ կապվելով Molina Healthcare-ի հետ՝ 1-888-665-4621 հեռախոսահամարով կամ Ամերիկյան լոգիստիկ ծառայության հետ՝ 1-844-292-2688 հեռախոսահամարով:

Ատամնաբուժական ծառայություններ

Medi-Cal-ն օգտագործում է կառավարվող ինսամքի ծրագրեր՝ Ձեր ատամնաբուժական ծառայություններ տրամադրելու համար: Դուք կարող եք մնալ Fee-for-Service Dental-ում կամ կարող եք ընտրել ատամնաբուժական կառավարվող ինսամք: Ձեր ատամնաբուժական ծրագիրը ընտրելու կամ փոխելու համար՝ զանգահարեք «Health Care Options»՝ 1-800-430-4263 հեռախոսահամարով: Հնարավոր է, որ Դուք միաժամանակ գրանցված չլինեք և՛ PACE կամ SCAN պլանում, և՛ ատամնաբուժական կառավարվող ինսամքի պլանում:

Medi-Cal-ը ծածկում է ատամնաբուժական ծառայությունները, ներառյալ.

- Ախտորոշիչ և կանխարգելիչ ատամնաբուժական ծառայությունները, ինչպիսիք են հետազոտությունները, ռենտգենյան հետազոտությունները և ատամների մաքրումը
- Անհետաձգելի օգնության ծառայություններ ցավի վերահսկման համար
- Ատամի հեռացում
- Պլոմբավորում
- Արմատախողովակների բուժում
- (առջևի/հետևի ատամների)
- Շապիկներ (հավաքովի/լաբորատոր)
- Սքեյլինգ և արմատների հարթեցում
- Ամբողջական և մասնակի պրոթեզներ
- Օրթոդոնտիա երեխաների համար, ովքեր համապատասխանում են ծառայության պահանջներին
- Տեղային ֆտորիդ

Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք ավելի իմանալ ատամնաբուժական ծառայությունների մասին և գրանցված եք Ատամնաբուժական կառավարվող ինսամքի պլանում, զանգահարեք Ձեր Ատամնաբուժական կառավարվող ինսամքի պլանին:



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Molina Healthcare-ի կողմից ապահովագրական արտոնություններ և ծրագրեր

Երկարատև խնամքի ծառայություններ և աջակցություն

Molina Healthcare-ը ծածկում է իրավասու անդամների երկարաժամկետ խնամքի ծառայությունները և աջակցությունը հետևյալ տեսակի երկարաժամկետ խնամքի հաստատություններում կամ տներում.

- Մասնագիտացված հաստատության ծառայություններ՝ հաստատված Molina Healthcare-ի կողմից
- Ենթասուր խնամքի ծառայություններ հաստատությունում (ներառյալ մեծահասակների և մանկական)՝ հաստատված Molina Healthcare-ի կողմից
- Միջանկյալ խնամքի ծառայություններ հաստատությունում՝ հաստատված Molina Healthcare-ի կողմից, ներառյալ՝
 - Միջանկյալ խնամքի հաստատություն/գարգացման խանգարումներ ունեցող անձանց համար (ICF/DD)
 - Միջանկյալ խնամքի հաստատություն/գարգացման խանգարումներ ունեցող անձանց համար, աբիլիտացիոն (ICF/DD-H)
 - Միջանկյալ խնամքի հաստատություն/գարգացման խանգարումներ ունեցող անձանց համար, մասնագիտացված (ICF/DD-N)

Եթե Դուք իրավասու եք օգտվելու երկարաժամկետ խնամքի ծառայություններից, Molina Healthcare-ը կկազմակերպի, որ Դուք տեղավորվեք այնպիսի առողջապահական հաստատությունում կամ տանը, որն ապահովում է Ձեր բժշկական կարիքներին առավել համապատասխան խնամքի մակարդակը:

Եթե երկարաժամկետ խնամքի ծառայությունների վերաբերյալ հարցեր ունեք, զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 հեռախոսահամարով (TTY/TDD կամ 711):

Մեծահասակների համայնքային ծառայություններ (CBAS)

Մեծահասակների համայնքային ծառայությունները (CBAS) ցերեկային առողջապահական ծառայություններ են մատուցում վատառողջ տարեցների և հաշմանդամություն ունեցող մեծահասակների համար, որոնք վերականգնում կամ պահպանում են իրենց մասին հոգ տանելու կարողությունը: Այս ծառայությունները տրամադրվում են լիցենզավորված առողջապահական կենտրոնում և ներառում են մասնագիտացված խնամք, թերապիա և սոցիալական ծառայություններ: CBAS ծրագիրը հասանելի է այն անդամների համար, ովքեր համապատասխանում են չափանիշներին և ունեն ծառայությունների կարիքը:

CBAS-ից օգտվելու համար Դուք պետք է լինեք 18 տարեկան կամ ավելի բարձր տարիքի, ունենաք առնվազն մեկ քրոնիկ կամ երկարատև բժշկական, ճանաչողական կամ վարքագծային խնդիր և օգնության կարիք ունենաք ամենօրյա գործողություններում:

Եթե հարցեր ունեք CBAS ծառայությունների վերաբերյալ, զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Տնային աջակցության ծառայություններ (IHSS)

Տնային աջակցության ծառայությունների (IHSS) ծրագիրը տրամադրում է տնային անձնական խնամքի հարցերում օգնություն՝ որպես այլընտրանք տնից դուրս խնամքի ստանալու համար իրավասու անձանց համար, այդ թվում՝ տարեցների, կույր և/կամ հաշմանդամ անձանց: IHSS-ը թույլ է տալիս ստացողներին ապահով մնալ իրենց տներում: Ձեր առողջապահական խնամքի մատակարարը պետք է համաձայնի, որ Դուք ունեք անձնական խնամքի օգնության կարիք տան պայմաններում, և որ Դուք կհայտնվեք տնից դուրս խնամքի տակ գտնվելու վտանգի տակ, եթե չստանաք IHSS ծառայություններ: IHSS ծրագիրը իրականացնում է նաև կարիքների գնահատում:

Ձեր շրջանում հասանելի IHSS-ի մասին ավելին իմանալու համար՝ այցելեք <https://www.cdss.ca.gov/inforesources/ihss> կամ զանգահարեք Ձեր շրջանի սոցիալական ծառայությունների տեղական գործակալություն:

Տարեցների բազմաֆունկցիոնալ ծրագիր

Տարեցների բազմաֆունկցիոնալ ծառայությունների ծրագիրը (MSSP) պետության կողմից տրամադրվող հրաժարման ծրագիր է, որը նախատեսված է համայնքի վատառողջ, տարեց անձանց աջակցելու համար: Այն ներառում է տնային պայմաններում սոցիալական և առողջապահական խնամքի կառավարման ծառայություններ, որոնք տրամադրվում են տեղական լիցենզավորված մատակարարների կողմից: Այս ծրագրից օգտվելու իրավասություն ունենալու համար Դուք պետք է լինեք 65 տարեկան կամ ավելի բարձր տարիքի, ունենք խնամքի կարիք, որը կտրամադրվի ծերանոցում, և պատրաստ լինեք թույլ տալու, որ ծառայությունը մատուցվի Ձեր տանը:

MSSP-ի մասին ավելին իմանալու համար՝ այցելեք <https://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/MSSPMedi-CalWaiver.aspx> կամ զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711):

Հիմնական խնամքի կառավարում

Բազմաթիվ տարբեր մատակարարների կողմից կամ տարբեր առողջապահական համակարգերում խնամք ստանալը դժվար է: Molina Healthcare-ը ցանկանում է համոզվել, որ պլանի անդամները ստանում են բժշկական տեսանկյունից անհրաժեշտ բոլոր ծառայությունները, դեղատոմսով դեղերը և վարքագծային առողջության ծառայությունները: Molina Healthcare-ը կարող է անվճար համակարգել և կառավարել Ձեր առողջական կարիքները: Այս օգնությունը հասանելի է նույնիսկ այն դեպքում, երբ ծառայությունը ծածկվում է մեկ այլ ծրագրի կողմից:

Դժվար է պարզել, թե ինչպես կարելի է բավարարել Ձեր առողջապահական կարիքները հիվանդանոցից դուրս գալուց հետո, կամ եթե խնամք եք ստանում տարբեր համակարգերում: Ահա մի քանի եղանակներ, որոնց միջոցով Molina Healthcare-ը կարող է օգնել Ձեզ:

- Եթե հիվանդանոցից դուրս գրվելուց հետո Դուք դժվարանում եք այց նշանակել կամ դեղեր ստանալ, Molina Healthcare-ը կարող է օգնել Ձեզ:
- Եթե Դուք օգնության կարիք ունեք անձամբ այցին ներկայանալու, Molina Healthcare-ը կարող է օգնել Ձեզ ստանալ անվճար փոխադրման հնարավորություն:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Եթե հարցեր կամ մտահոգություններ ունեք Ձեր կամ Ձեր երեխայի առողջության հետ կապված, զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին՝ 1-888-665-4621 հեռախոսահամարով (TTY/TDD կամ 711):

Խնամքի համալիր կառավարում (CCM)

Առողջապահական ավելի բարդ կարիքներ ունեցող անդամները կարող են օգտվել խնամքի համակարգման վրա կենտրոնացած լրացուցիչ ծառայություններից: Molina Healthcare-ն առաջարկում է խնամքի համալիր կառավարման (CCM) ծառայություններ այն անդամների համար, ովքեր ունեցել են լուրջ առողջական խնդիր կամ ախտորոշում, որը կարիք ունի լրացուցիչ աջակցության և առողջապահական և սոցիալական ռեսուրսների ավելի շատ օգտագործման:

Եթե Դուք գրանցված եք խնամքի համալիր կառավարման կամ խնամքի ընդլայնված կառավարման ծառայություններում, (կարդացեք ստորև) Molina Healthcare-ը կհամոզվի, որ Դուք ունեք Ձեզ համար նշանակված խնամքի կառավարիչ, որը կարող է օգնել ստանալ վերը նկարագրված հիմնական խնամքի կառավարման և անցումային խնամքի այլ հարցերում աջակցություն, որը հասանելի է, եթե Դուք դուրս եք գրվել հիվանդանոցից, մասնագիտացված խնամքի հաստատությունից, հոգեբուժարանից կամ ստացիոնար բուժհաստատությունից:

Եթե հետաքրքրված եք կամ հարցեր ունեք Molina-ի խնամքի կառավարման ծրագրի վերաբերյալ, խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 հեռախոսահամարով (TTY/TDD կամ 711):

Խնամքի ընդլայնված կառավարում (ECM)

Molina Healthcare-ը ծածկում է խնամքի ընդլայնված կառավարման ծրագրի (ESM) ծառայությունները խիստ բարդ կարիքներ ունեցող անդամների համար: ECM-ն ունի լրացուցիչ ծառայություններ, որոնք կօգնեն Ձեզ ստանալ այն խնամքը, որն անհրաժեշտ է առողջ մնալու համար: Այն համակարգում է Ձեր խնամքը, որը ստանում եք բժիշկների և այլ մատակարարների կողմից: ECM-ն օգնում է համակարգել առաջնային և կանխարգելիչ խնամքը, սուր խնամքը, վարքային առողջության բուժումը, զարգացման խնդիրների բուժումը, բերանի խոռոչի առողջության ապահովումը, համայնքային երկարաժամկետ ծառայություններն ու աջակցությունը (LTSS), ինչպես նաև ուղեգրումները՝ օգտվելու համայնքային ռեսուրսներից:

Եթե Դուք իրավասու եք, Ձեզ կարող են ներկայացնել ECM ծառայությունների մասին: Կարող եք նաև զանգահարել Molina Healthcare՝ պարզելու, թե արդյոք կարող եք ստանալ և երբ կարող եք ստանալ ECM ծառայություններ կամ խոսել Ձեր առողջապահական մատակարարի հետ: Նրանք կարող են պարզել, թե արդյոք Դուք իրավասու եք օգտվելու ECM-ից, կամ կուղեգրեն Ձեզ՝ խնամքի կառավարման ծառայություններից օգտվելու:

Ծածկվող ECM ծառայություններ

Եթե Դուք իրավասու եք օգտվելու ECM-ից, Դուք կունենաք Ձեր սեփական խնամքի թիմը խնամքի առաջատար կառավարչի հետ: Նրանք կխոսեն Ձեր և Ձեր բժիշկների,



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

մասնագետների, դեղագործների, դեպքերի կառավարիչների, սոցիալական ծառայությունների մատակարարների և այլոց հետ: Նրանք համոզվում են, որ բոլորն աշխատում են միասին՝ Ձեզ անհրաժեշտ խնամքը մատուցելու համար: Ձեր խնամքի առաջատար կառավարիչը կարող է նաև օգնել Ձեզ գտնել և դիմել Ձեր համայնքում առաջարկվող այլ ծառայություններին: ECM-ը ներառում է՝

- Կապ և ներգրավվածություն
- Համապարփակ գնահատում և խնամքի կառավարում
- Խնամքի ուժեղացված համակարգում
- Առողջության խթանում
- Համալիր անցումային խնամք
- Անդամների և ընտանիքի աջակցության ծառայություններ
- Համակարգում և ուղղորդում դեպի համայնքային և սոցիալական աջակցություն

Պարզելու համար, թե արդյոք ECM-ը կարող է համապատասխանել Ձեր կարիքներին, խոսեք Ձեր Molina Healthcare ներկայացուցչի կամ առողջապահական ծառայությունների մատակարարի հետ:

Արժեքը պլանի անդամի համար

ECM ծառայությունների համար անդամից որևէ վճար չի գանձվում:

Եթե Դուք գրանցվեք ECM-ում, Ձեր նշանակված ECM-ի խնամքի առաջատար կառավարիչը կկապվի Ձեզ հետ (հիմնվելով Ձեր նախընտրած շփման եղանակի վրա)՝ սկսելու ECM ծառայությունների մատուցումը: Դուք պետք է ստանաք ECM ծառայություններ ամեն ամիս՝ գրանցվելուց հետո: Ձեր ECM խնամքի առաջատար կառավարիչը կաշխատի Ձեզ հետ, մինչև Դուք պատրաստ լինեք ավարտել ծրագիրը: Եթե ինչ-որ պահի ցանկանում եք դուրս գալ ծրագրից, խնդրում ենք տեղեկացնել Ձեզ համար նշանակված ECM խնամքի առաջատար կառավարչին: Դուք կարող եք ինքնըստիներքյան դուրս գրվել ծրագրից, եթե այլևս իրավասու չեք Medi-Cal-ի արտոնություններից Molina Healthcare-ի միջոցով օգտվելու, կամ եթե մտահոգություններ ունեք ECM մատակարարի վարքագծի կամ անապահով միջավայրի վերաբերյալ:

Համայնքային աջակցություն

Դուք կարող եք իրավասու լինել օգտվելու Համայնքային աջակցության որոշակի ծառայություններից, եթե դրանք կիրառելի են: Համայնքային աջակցությունները բժշկական առումով համապատասխան և ծախսարդյունավետ այլընտրանքային ծառայություններ կամ կարգավորումներ են, որոնք ծածկվում են Medi-Cal State Plan-ի կողմից: Այս ծառայությունները պարտադիր են չեն բոլոր անդամների համար: Եթե Դուք իրավասու եք օգտվելու և համաձայնում եք ստանալ այս ծառայությունները, դրանք կարող են օգնել Ձեզ ավելի անկախ ապրել: Դրանք չեն փոխարինում այն արտոնություններին, որոնք Դուք արդեն ստանում եք Medi-Cal-ի շրջանակներում:

Molina Medi-Cal-ի միայն անդամները և Medicare Duals-ի անդամները, ովքեր ունեն Molina for Medi-Cal, իրավասու են օգտվելու Համայնքային աջակցությունից (CS):



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Բնակարանային անցման նապիգացիոն ծառայություններ` Օգնում է անօթևան ընտանիքների անդամներին բնակատեղի ձեռք բերելու հարցում` աջակցություն ցուցաբերելով այնպիսի հարցերում, ինչպիսիք են բնակության վայրի համար դիմելը, արտոնություններից օգտվելու հարցում շահերի պաշտպանությունը, մատչելի ռեսուրսների ապահովումը և տանտերերին տեղափոխվելու գործընթացում օգնելը:

Իրավասությունն`

- Անդամներ, որոնք առաջնահերթություն են ստացել որպես աջակցություն` մշտական բնակության վայրի կամ բնակության վայրի վարձակալման համար սուբսիդավորման ռեսուրս ստանալու համար` համակարգված մուտքի տեղական համակարգի (CES) կամ նմանատիպ այլ համակարգի միջոցով, կամ

- Անդամներ, որոնք համապատասխանում են անօթևանների` Բնակարանային և քաղաքաշինության զարգացման բաժնի (HUD) կողմից մշակված սահմանմանը, ստանում են ինամբի ընդլայնված կառավարման ծառայություններ (ECM), կամ որոնք ունեն մեկ կամ մի քանի լուրջ քրոնիկ խնդիր և/կամ լուրջ հոգեկան հիվանդություն և/կամ թմրամիջոցների օգտագործման խանգարման հետևանքով գտնվում են հաստատությունում տեղավորման կամ ստացիոնար ծառայությունների անհրաժեշտության վտանգի տակ, կամ

- Անդամներ, որոնք համապատասխանում են HUD-ի սահմանմանը որպես անօթևանության վտանգի տակ գտնվող անձինք, ինչպես սահմանված է դաշնային կանոնակարգերի օրենսգրքի 24-րդ բաժնի 91.5-րդ բաժնում, կամ

- Անօթևան մնալու վտանգի տակ գտնվող անդամներ, որոնք ունեն մեկ կամ մի քանի լուրջ քրոնիկական հիվանդություններ, լուրջ հոգեկան հիվանդություն, գտնվում են հաստատությունում տեղավորման կամ չափազանց մեծ վտանգի տակ, կարիք ունեն բնակարանային ծառայությունների` թմրամիջոցների օգտագործման խանգարումների պատճառով կամ ունեն լուրջ հուզական խանգարումներ (երեխաներ և դեռահասներ), ստանում են ECM, կամ անցումային տարիքի երիտասարդներ են, որոնք բնակարանային կայունության համար զգալի խոչընդոտներ ունեն, օրինակ` ունեցել են մեկ կամ մի քանի դատվածություն, ինամատարության պատմություն, ներգրավվածություն անչափահասների արդարադատության կամ քրեական արդարադատության համակարգում և/կամ ունեն լուրջ հոգեկան հիվանդություն և/կամ երեխա կամ լուրջ հուզական խանգարումներ ունեցող դեռահաս, որ դարձել է թրաֆիքինգի կամ ընտանեկան բռնության զոհ:

Բնակարանային ավանդներ` Օգնում է անօթևան անդամներին նույնականացնել, համակարգել, ապահովել կամ ֆինանսավորել միանվագ ծառայություններն ու փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են անձին ընդհանուր տնային տնտեսություն ստեղծելու համար, որը չի ենթադրում միայն ապրելու տեղն ու սնունդը: Այս ծառայությունները պետք է ճանաչվեն որպես ողջամիտ և անհրաժեշտ անհատի բնակարանային աջակցության անհատական ծրագրում և հասանելի են միայն այն դեպքում, երբ անդամն ի վիճակի չէ վճարելու նման ծախսեր: Անդամները պետք է ստանան կամ ուղեգրվեն` ստանալու Բնակարանային անցման նապիգացիոն ծառայություններ:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին` 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ` ժամը` 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց` հետևյալ հասցեով` www.MolinaHealthcare.com:

Իրավասություն՝

- Անդամներ, որոնք ստացել են Բնակարանային անցման նավիգացիոն ծառայություններ, կամ
- Անդամներ, որոնք առաջնահերթություն են ստացել՝ օգտվելու մշտական բնակության վայրի կամ վարձակալության սուբսիդավորման ռեսուրսից՝ր անօթևանների տեղական CES-ի կամ նմանատիպ համակարգի միջոցով, կամ
- Անդամներ, որոնք համապատասխանում են անօթևանների HUD սահմանմանը և ստանում են ECM, կամ որոնք ունեն մեկ կամ մի քանի լուրջ քրոնիկ խնդիր և/կամ լուրջ հոգեկան հիվանդություն և/կամ թմրամիջոցների օգտագործման խանգարման հետևանքով գտնվում են հաստատությունում տեղավորման կամ ստացիոնար ծառայությունների անհրաժեշտության վտանգի տակ:
- Սահմանափակում/թերություններ՝ Հասանելի է անդամի կյանքի ընթացքում մեկ անգամ: Բնակարանային ավանդները կարող են հաստատվել միայն մեկ լրացուցիչ անգամ: Ուղեգրողը պետք է փաստաթղթեր ներկայացնի այն մասին, թե ինչ պայմաններ են փոխվել՝ ցույց տալու համար, թե ինչու բնակարանային ավանդի տրամադրումն ավելի հաջող կարող է լինել երկրորդ փորձից:

Բնակարանների վարձակալության և պահպանման ծառայություններ՝ Ապահովում է վարձակալության և պահպանման ծառայություններով՝ ապահով և կայուն բնակության վայր պահպանելու համար, երբ բնակության վայր են ստանում այն անդամները, որոնք անօթևան են եղել և նոր են բնակեցվել: Մատուցվող ծառայությունները պետք է հիմնված լինեն կարիքների անհատական գնահատման վրա և փաստաթղթավորվեն անհատական բնակարանային աջակցության պլանում:

Իրավասություն՝

- Անդամներ, որոնք ստացել են բնակարանային անցման/նավիգացիոն ծառայություններ, կամ
- Անդամներ, որոնք առաջնահերթություն են ստացել՝ օգտվելու մշտական բնակության վայրի կամ վարձակալության սուբսիդավորման ռեսուրսից՝ր անօթևանների տեղական CES-ի կամ նմանատիպ համակարգի միջոցով, կամ
- Անդամներ, որոնք համապատասխանում են անօթևանների HUD սահմանմանը և ստանում են ECM, կամ ուրբեր ունեն մեկ կամ մի քանի լուրջ քրոնիկ խնդիրներ և/կամ լուրջ հոգեկան հիվանդություն և/կամ թմրամիջոցների օգտագործման խանգարման հետևանքով գտնվում են հաստատությունում տեղավորման կամ բնակության վայրում ծառայություններ ստանալու անհրաժեշտության վտանգի տակ, կամ
- Անդամներ, որոնք համապատասխանում են HUD-ի սահմանմանը որպես անօթևանության վտանգի տակ գտնվող անձինք, ինչպես սահմանված է դաշնային կանոնակարգերի օրենսգրքի 24-րդ բաժնի 91.5-րդ բաժնում, կամ



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

• Անօթևան մնալու վտանգի տակ գտնվող անդամներ, որոնք ունեն մեկ կամ մի քանի լուրջ քրոնիկական հիվանդություններ, լուրջ հոգեկան հիվանդություն, գտնվում են հաստատությունում տեղավորման կամ չափազանց մեծ վտանգի տակ, կարիք ունեն բնակարանային ծառայությունների՝ թմրամիջոցների օգտագործման խանգարումների պատճառով կամ ունեն լուրջ հուզական խանգարումներ (երեխաներ և դեռահասներ), ստանում են ECM, կամ անցումային տարիքի երիտասարդներ են, որոնք բնակարանային կայունության համար զգալի խոչընդոտներ ունեն, օրինակ՝ ունեցել են մեկ կամ մի քանի դատվածություն, ինամատարության պատմություն, ներգրավվածություն անչափահասների արդարադատության կամ քրեական արդարադատության համակարգում և/կամ ունեն լուրջ հոգեկան հիվանդություն և/կամ երեխա կամ լուրջ հուզական խանգարումներ ունեցող դեռահաս, որ դարձել է թրաֆիքինգի կամ ընտանեկան բռնության զոհ:

• Սահմանափակում/թերություններ՝ Բնակարանների վարձակալության և պահպանման ծառայությունները հասանելի են անհատի կյանքի ընթացքում միայն մեկ անգամ և կարող են հաստատվել մեկ լրացուցիչ անգամ: Ուղեգրողը պետք է փաստաթղթեր ներկայացնի այն մասին, թե ինչ պայմաններ են փոխվել՝ ցույց տալու համար, թե ինչու Բնակարանային վարձակալության և կենսապահովման ծառայությունների տրամադրումն ավելի հաջող կլինի երկրորդ փորձից:

Չեռհոսպիտալացումից հետո կարճաժամկետ բնակության վայր՝ Այն անդամները, որոնք չունեն բնակվելու տեղ և ունեն բժշկական կամ վարքագծային առողջության բարձր կարիքներ, հնարավորություն ունեն շարունակելու իրենց բժշկական/հոգեբուժական/թմրանյութերի օգտագործման խանգարումների բուժումն անմիջապես ստացիոնար հիվանդանոցից, թմրամիջոցների օգտագործման խանգարումների բուժման կամ վերականգնման հաստատությունում, հոգեկան առողջության բուժման ստացիոնար հաստատությունում, ուղղիչ հաստատությունից, մասնագիտացված խնամքի հաստատությունից կամ վերականգնողական խնամքի հաստատությունից դուրս գրվելուց հետո, ինպես նաև խուսափելու պետական պլանի ծառայությունների հետագա օգտագործումից:

Իրավասություն՝

• Այն անդամները, որոնք ունեն այնպիսի բժշկական/վարքագծային առողջության կարիքներ, որոնք հիվանդանոցից, թմրամիջոցների օգտագործման խանգարումների կամ հոգեկան առողջության բուժման հաստատությունից, ուղղիչ հիմնարկից, մասնագիտացված խնամքի հաստատությունից կամ վերականգնողական խնամքի հաստատությունից դուրս գրվելուց հետո կարող են հանգեցնել հոսպիտալացման, կրկնակի հոսպիտալացման կամ հաստատություն հետընդունման, և

- Անդամներ, որոնք դուրս են գալիս վերականգնողական խնամքից, կամ
- Անդամներ, որոնք դուրս են գալիս ստացիոնար հիվանդանոցային խնամքից (սուր, հոգեբուժական կամ քիմիական կախվածության և վերականգնման հիվանդանոց), թմրամիջոցների օգտագործման խանգարումների բուժման/վերականգնողական հաստատությունից, հոգեկան առողջության բուժման



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

հաստատությունից, ուղղիչ հաստատությունից կամ մասնագիտացված ինսամքի հաստատությունից ԵՎ որոնք համապատասխանում են հետևյալներից երեք (3) չափանիշներից որևէ մեկին.

o Անդամներ, որոնք համապատասխանում են անօթևանների HUD սահմանմանը և ստանում են ECM, կամ ովքեր ունեն մեկ կամ մի քանի լուրջ քրոնիկ խնդիրներ և/կամ լուրջ հոգեկան հիվանդություն և/կամ թմրամիջոցների օգտագործման խանգարման հետևանքով գտնվում են հաստատությունում տեղավորման կամ բնակության վայրում ծառայություններ ստանալու անհրաժեշտության վտանգի տակ, կամ

o Անդամներ, որոնք համապատասխանում են HUD-ի սահմանմանը՝ որպես անօթևանության վտանգի տակ գտնվող անձինք, ինչպես սահմանված է դաշնային կանոնակարգերի օրենսգրքի 24-րդ բաժնի 91.5-րդ բաժնում, կամ

o Անօթևան մնալու վտանգի տակ գտնվող անդամներ, որոնք ունեն մեկ կամ մի քանի լուրջ քրոնիկական հիվանդություններ, լուրջ հոգեկան հիվանդություն, գտնվում են հաստատությունում տեղավորման կամ չափազանց մեծ վտանգի տակ, կարիք ունեն բնակարանային ծառայությունների՝ թմրամիջոցների օգտագործման խանգարումների պատճառով կամ ունեն լուրջ հուզական խանգարումներ (երեխաներ և դեռահասներ), ստանում են ECM, կամ անցումային տարիքի երիտասարդներ են, որոնք բնակարանային կայունության համար զգալի խոչընդոտներ ունեն, օրինակ՝ ունեցել են մեկ կամ մի քանի դատվածություն, ինսամատարության պատմություն, ներգրավվածություն անչափահասների արդարադատության կամ քրեական արդարադատության համակարգում և/կամ ունեն լուրջ հոգեկան հիվանդություն և/կամ երեխա կամ լուրջ հուզական խանգարումներ ունեցող դեռահաս, որ դարձել է թրաֆիքինգի կամ ընտանեկան բռնության զոհ:

• Սահմանափակում/թերություններ՝ Հետհիվանդանոցային փուլում կարճաժամկետ տրամադրվող բնակարանը հասանելի է անդամի կյանքի ընթացքում մեկ անգամ և չի կարող գերազանցել վեց (6) ամիսը (սակայն ըստ անձի կարիքների՝ կարող է լիազորվել ավելի կարճ ժամկետով):

Վերականգնողական ինսամք (կարճատև դադար)՝ Անդամներ, որոնք ունեն կարճաժամկետ ստացիոնար ինսամքի կարիք, այլևս հոսպիտալացման կարիք չունեն, բայց դեռ պետք է ապաքինվեն վնասվածքից կամ հիվանդությունից (ներառյալ վարքագծային խնդիրներից), և որոնց վիճակը կարող է սրվել անկայուն կենսամիջավայրի պատճառով: Պետք է տրամադրվի կլինիկական տեղեկատվություն:

Իրավասություն՝

• Անդամներ, որոնք գտնվում են հոսպիտալացման վտանգի տակ կամ գտնվում են հետհոսպիտալացման փուլում և ապրում են մենակ առանց պաշտոնական աջակցության, կամ բախվում են բնակարանային անապահովության խնդրին կամ ունեն բնակարաններ, որոնք, առանց փոփոխության ենթարկվելու, կվտանգեն նրա առողջությունն ու անվտանգությունը, կամ



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

• Անդամներ, որոնք համապատասխանում են անօթևանների՝ Բնակարանային և քաղաքաշինության զարգացման բաժնի (HUD) կողմից մշակված սահմանմանը, ստանում են ECM, կամ որոնք ունեն մեկ կամ մի քանի լուրջ քրոնիկ խնդիր և/կամ լուրջ հոգեկան հիվանդություն և/կամ թմրամիջոցների օգտագործման խանգարման հետևանքով գտնվում են հաստատությունում տեղավորման կամ ստացիոնար ծառայությունների անհրաժեշտության վտանգի տակ, կամ

• Անդամներ, որոնք համապատասխանում են անօթևանության վտանգի տակ գտնվող անձանց՝ HUD սահմանմանը, կամ

• Անօթևան մնալու վտանգի տակ գտնվող անդամներ, որոնք ունեն մեկ կամ մի քանի լուրջ քրոնիկական հիվանդություններ, լուրջ հոգեկան հիվանդություն, գտնվում են հաստատությունում տեղավորման կամ չափազանց մեծ վտանգի տակ, կարիք ունեն բնակարանային ծառայությունների՝ թմրամիջոցների օգտագործման խանգարումների պատճառով կամ ունեն լուրջ հուզական խանգարումներ (երեխաներ և դեռահասներ), ստանում են ECM, կամ անցումային տարիքի երիտասարդներ են, որոնք բնակարանային կայունության համար զգալի խոչընդոտներ ունեն, օրինակ՝ ունեցել են մեկ կամ մի քանի դատվածություն, ինամատարության պատմություն, ներգրավվածություն անչափահասների արդարադատության կամ քրեական արդարադատության համակարգում և/կամ ունեն լուրջ հոգեկան հիվանդություն և/կամ երեխա կամ լուրջ հուզական խանգարումներ ունեցող դեռահաս, որ դարձել է թրաֆիքինգի կամ ընտանեկան բռնության զոհ:

• Սահմանափակում/թերություններ՝ Վերականգնողական ինամքի շարունակական տևողությունը չի կարող գերազանցել իննսուն (90) օրը: Իննսուն (90) օրվա վերականգնողական ինամքի շրջանը կարող է վերսկսվել, եթե անդամը կրկին հոսպիտալացվել է այլ ախտորոշմամբ՝ նախնական իննսուն (90) օրվա թույլտվության ընթացքում և/կամ դրանից հետո՝ պայմանով, որ վերականգնողական ինամքի չափանիշները բավարարվեն: Անհրաժեշտ է հասնել առողջական վիճակի կայունության կամ պահպանել այն, ինչպես նաև կանխել հիվանդանոց ընդունումը կամ հետընդունումը, որի դեպքում կարող են պահանջվել վարքագծային առողջության միջամտություններ, իսկ շենքի փոփոխությունները կամ շենքի վերականգնումը չեն ֆինանսավորվում:

Կարճատև դադարի ծառայություններ՝ Տրամադրվում է ինամողներին, երբ օգտակար և անհրաժեշտ է անձին իր սեփական տանը պահել և կանխել ինամողի հուզական այրումը՝ ինստիտուցիոնալ ծառայություններից խուսափելու համար: Ծառայությունները տրամադրվում են կարճաժամկետ հիմունքներով, քանի որ ինամողը ներկա չէ կամ դադարի կարիք ունի: Այս ծառայությունները բժշկական բնույթ չունեն: Այս ծառայությունը նախատեսված է միայն ինամողի համար և միայն երկարատև ինամքի տեղակայման վայրերից խուսափելու համար:

Իրավասություն՝

• Անդամները, որոնք ապրում են համայնքում և դժվարությունների են բախվում իրենց առօրյա կենսագործունեության մեջ (ADL), որակավորված ինամակալի կարիք ունեն, իսկ որակավորված ինամակալին, որն ապահովում է



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

անձին ցուցաբերվող աջակցության մեծ մասը, անհրաժեշտ է կարճատև դադար՝ հաստատությունում անձի տեղավորումից խուսափելու համար, կամ

- Անդամը երեխա է, ով նախկինում ստացել է կարճաժամկետ դադարի ծառայություններ Մանկաբուժական պալիատիվ ինսամբից հրաժարվելու պատճառով, ինսամատարության ծրագրի շահառուներ, California-ի Երեխաների ծառայությունների կամ գենետիկ հաշմանդամություն ունեցող անձանց ծրագրի (GHPP) անդամներ, ինչպես նաև բարդ ինսամբի կարիք ունեցող անդամներ:

- Սահմանափակում/թերություններ՝ Այս ծառայությունները, անմիջական ինսամբի ցանկացած ծառայության հետ միասին, չեն կարող գերազանցել օրական 24 ժամը: Կարճատև դադարի ծառայությունները առավելագույնը կազմում են օրացուցային տարվա 336 ժամ: Օրացուցային տարվա 336 ժամվա սահմանափակման մեջ կարող են բացառություններ արվել, երբ ինսամակալը ունենում է դրվագ, ներառյալ բժշկական բուժումը և հոսպիտալացումը, ինչի պատճառով Medicaid-ի անդամը մնում է առանց ինսամակալ: Այսպիսի դրվագների ընթացքում տրամադրվող կարճատև դադարի աջակցությունը կարող է բացառվել 336-ժամյա տարեկան սահմանաչափից: Բացի դրանից, կարճատև դադարի ծառայությունները չեն կարող մատուցվել վիրտուալ կերպով կամ հեռաբժշկության միջոցով:

Ցերեկային աբիլիտացիոն ծրագրեր՝ Տրամադրվում է անդամի տանը կամ տնից և հաստատությունից դուրս միջավայրում, որպեսզի օգնի անդամներին ձեռք բերել, պահպանել և կատարելագործել ինքնօգնության, սոցիալականացման և հարմարվողականության հմտություններ, որոնք անհրաժեշտ են նրան բնական միջավայրում պատշաճ կերպով ապրելու համար:

Իրավասություն՝

- Անօթևան անդամներ, կամ
- Անդամներ, որոնք դուրս են եկել անօթևանի կարգավիճակից և մուտք են գործել բնակարան վերջին 24 ամիսների ընթացքում, կամ

Անօթևանության կամ հաստատությունում տեղավորման անհրաժեշտության վտանգի տակ գտնվող անդամներ, որոնց բնակարանային պայմանների կայունությունը կարող է բարելավվել վերականգնողական ցերեկային ծրագրին մասնակցելու միջոցով:

Տեղափոխում ինսամբի հաստատություն/Տեղափոխում օժանդակ բնակելի հաստատություններ, ինչպիսիք են տարեցների համար նախատեսված բնակելի հաստատությունները և չափահասների համար նախատեսված բնակելի հաստատությունները. Օգնում է անդամներին ապրել համայնքում և/կամ հնարավորության դեպքում խուսափել հաստատությունում տեղավորվելուց: Հեշտացնում է ինսամբի հաստատությունից անցումը դեպի ավելի «տնային», համայնքային միջավայր և/կամ կանխում է տեղավորումը մասնագիտացված ինսամբի հաստատությունում՝ մասնագիտացված մակարդակի ինսամբի (LOC) անմիջական կարիք ունեցող անդամների համար: Անդամներն ընտրության հնարավորություն ունեն բնակվելու օժանդակ բնակելի հաստատություններում որպես այլընտրանք մասնագիտացված ինսամբի հաստատությունում



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

երկարաժամկետ տեղավորմանը, եթե նա համապատասխանում է ծառայությունից օգտվելու պահանջներին: Նախքան համայնքային աջակցության տրամադրումն անհրաժեշտ է ուսումնասիրել Կալիֆոռնիայում գործող՝ համայնքում բնակության անցնելու ծրագիրը (CCT):

Իրավասություն՝

- Անցում խնամքի հաստատության.
- 60+ օր ապրել է խնամքի հաստատությունում և պատրաստ է ապրել օժանդակ բնակելի հաստատությունում՝ որպես այլընտրանք խնամքի հաստատությանը, և կարող է ապահով բնակվել օժանդակ բնակելի հաստատությունում՝ ստանալով համապատասխան և ծախսարդյունավետ օժանդակության:
- Խուսափում խնամքի հաստատություններից՝
- Հետաքրքրված է մնալու համայնքում, և ցանկանում է և կարող է ապահով բնակվել օժանդակ բնակելի հաստատությունում՝ ստանալով համապատասխան և ծախսարդյունավետ օժանդակություն և ծառայություններ, և ներկա պահին պետք է ստանա բժշկական տեսանկյունից անհրաժեշտ LOC խնամքի հաստատությունում կամ բավարարի խնամքի հաստատությունում LOC ստանալու նվազագույն չափանիշները, և հաստատություն գնալու փոխարեն, ընտրում է մնալ համայնքում և շարունակել ստանալ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ և խնամքի հաստատությունում տրամադրվող LOC ծառայություններն օժանդակ բնակելի հաստատությունում:
- Սահմանափակումներ/թերություններ Անդամներն ուղղակիորեն պատասխանատու են իրենց կեցության ծախսերի վճարման համար:

Համայնքային անցումային ծառայություններ/բուժքույրական հաստատությունների անցում դեպի տուն՝ Այն անդամներին, ովքեր ապրում են խնամքի հաստատությունում, օգնում է ապրել համայնքում և խուսափել հաստատությունում հետագա տեղավորումից՝ մասնավոր բնակարանում տեղափոխվելու և տեղավորվելու մեկանգամյա ծախսերը հոգալու միջոցով:

Իրավասություն՝

- Անդամները, ովքեր ներկայումս ստանում են բժշկական առումով անհրաժեշտ ծառայություններ խնամքի հաստատության մակարդակով, և խնամքի հաստատությունում կամ կարճատև դադարի պայմաններում մնալու փոխարեն ընտրում են տեղափոխվել տուն և շարունակել ստանալ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ LOC ծառայություններ խնամքի հաստատության մակարդակով, և
 - o 60+ օր ապրել է ծերանոցում և/կամ կարճատև դադարի պայմաններում, և
 - o Հետաքրքրված է համայնք վերադառնալով, և



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

o Կարող է ապահով բնակվել համայնքում՝ ստանալով համապատասխան և ծախսարդյունավետ աջակցություն և ծառայություններ:

• Սահմանափակում/թերություններ՝ Համայնքային կյանքի անցնելու ծառայությունները/խնամքի հաստատությունից անցումը տնային խնամքի հասանելի է ողջ կյանքի ընթացքում առավելագույնը 7,500 ԱՄՆ դոլարի դիմաց: Համայնքային կյանքի անցնելու ծառայությունները/խնամքի հաստատությունից անցումը տնային խնամքի կարող է հաստատվել միայն մեկ անգամ: Ուղեգրողը պետք է փաստաթղթեր ներկայացնի այն մասին, որ անդամը հարկադրված է եղել տեղափոխվել մատակարարի կողմից կառավարվող բնակելի միջավայրից մասնավոր բնակության վայր՝ իրենց վերահսկողությունից դուրս հանգամանքների պատճառով:

- o Համայնքային կյանքի անցնելու ծառայությունները պետք է անհրաժեշտ լինեն անդամի առողջությունը, բարեկեցությունը և անվտանգությունն ապահովելու համար, և առանց դրաց անդամը չի կարողանա տեղափոխվել մասնավոր բնակավայր, և այդ դեպքում անհրաժեշտություն կառաջանա հաստատությունում անձի շարունակական կամ կրկնվող տեղավորման:
- o Համայնքային կյանքի անցնելու ծառայությունները չեն ներառում ամսական վարձակալության կամ հիփոթեքի ծախսերը, սննդի, սովորական կոմունալ վճարները և/կամ կենցաղային տեխնիկան կամ իրերը, որոնք նախատեսված են զուտ զվարճանքի/հանգստի նպատակներով:

Անձնական խնամք և տնային տնտեսության վարման ծառայություններ՝ Ապահովում է խնամք այն անդամների համար, ովքեր օգնության կարիք ունեն առօրյա կենցաղային հարցերում (ADLs) և առօրյա կյանքում ինստրումենտալ գործողությունների (IADLs) հետ կապված:

Իրավասություն՝

• Հոսպիտալացման կամ հաստատությունում տեղավորման անհրաժեշտության վտանգի տակ գտնվող կամ ֆունկցիոնալ թերություններ ունեցող և օգնության որևէ այլ համարժեք միջոց չունեցող անձինք՝

o Կարիքներ, որոնք դուրս են շրջանի կողմից տնային աջակցության ծառայությունների (IHSS) հաստատված ժամերից, երբ լրացուցիչ ժամերի անհրաժեշտություն կա (սպասում են վերազնահատման), կամ

o Ի սկզբանե ուղեգրվել է IHSS-ին, և IHSS-ի սպասման ժամանակահատվածում, երբ պետք է հաստատվի խնամակալ վարձելու անհրաժեշտությունը և խնամակալ վարձվի (Անդամն արդեն պետք է ուղեգրված լինի՝ օգտվելու տնային աջակցության ծառայություններից), կամ

o Անդամները, որոնք իրավասու չեն ստանալու տնային աջակցության ծառայություններ և օգնության կարիք ունեն՝ խուսափելու խնամքի



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

մասնագիտացված հաստատությունում կարճաժամկետ տեղավորումից, որը չի կարող գերազանցել 60 օրը:

• Սահմանափակում/թերություններ՝ Չի կարելի օգտագործել այս CS-ն՝ տնային աջակցության ծառայությունների ծրագրից օգտվելու ուղեգիր տալու փոխարեն: Անդամները պետք է ուղեգրվեն տնային աջակցության ծառայությունների ծրագրին, երբ նրանք համապատասխանում են ուղեգրման չափանիշներին, կամ եթե որևէ փոփոխություն ունեն իրենց ընթացիկ վիճակում:

Շրջապատող միջավայրի մատչելիության հարմարեցումներ (տնային փոփոխություններ)՝ Տանը Ֆիզիկական հարմարեցում, որն անհրաժեշտ է անդամի առողջությունը, բարեկեցությունն ու անվտանգությունն ապահովելու համար, կամ թույլ է տալիս նրան ավելի մեծ անկախությամբ գործել տան մեջ, հակառակ դեպքում հնարավոր է՝ առաջանա անդամին որևէ հաստատությունում տեղավորելու անհրաժեշտություն:

Իրավասություն՝

- Խնամքի հաստատությունում տեղավորման անհրաժեշտության վտանգի տակ գտնվող անդամներ:
- Սահմանափակումներ/թերություններ EAA-ները կարող են վճարվել մինչև \$7500-ի չափով՝ անձի ողջ կյանքի ընթացքում: 7500 ԱՄՆ դոլար ընդհանուր առավելագույն չափի բացառություն արվում է միայն այն դեպքում, երբ անդամի բնակության վայրը փոխվել է, կամ եթե անդամի վիճակն այնքան է փոխվել, որ այդ լրացուցիչ փոփոխություններն անհրաժեշտ են անդամի առողջությունը, բարեկեցությունն ու անվտանգությունն ապահովելու համար, կամ անհրաժեշտ են նրան հնարավորություն տալու ավելի մեծ անկախությամբ գործել տանը և խուսափել որևէ հաստատություն կամ հիվանդանոց տեղափոխումից:

Բժշկական օժանդակ սնունդ/մթերք/բժշկական կարիքներին հարմարեցված սնունդ՝ Տրամադրում է սնունդ այն անդամների համար, ովքեր վերջերս դուրս են գրվել հիվանդանոցից կամ խնամքի մասնագիտացված հաստատությունից կամ բավարարելու քրոնիկական հիվանդություններ ունեցող անդամների առանձնահատուկ սննդային կարիքները:

Իրավասություն՝

- Հիվանդները, որոնք դուրս են գրվել հիվանդանոցից կամ խնամքի մասնագիտացված հաստատությունից, որոնք հիվանդանոցում կամ ծերանոցում տեղավորման անհրաժեշտության մեծ վտանգի տակ են, որոնք ուղեգրված են և համապատասխանում են չափանիշներին, կստանան օրական մինչև երկու (2) անգամ սնունդ և/կամ օժանդակ սնունդ՝ յուրաքանչյուր հոսպիտալացման ընթացքում չորս (4) շաբաթ, օրացուցային տարվա ընթացքում՝ տասներկու (12) շաբաթից ոչ ավելի:



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

- Անձինք, ովքեր ունեն քրոնիկ հիվանդություններ, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով՝ շաքարախտ, սրտանոթային խանգարումներ, սրտանոթային անբավարարություն, ինսուլտ, թոքերի քրոնիկ խանգարումներ, մարդու իմունային անբավարարության վիրուս (ՄԻԱՎ), քաղցկեղ, հղիության դիաբետ կամ պերինատալ այլ բարձր ռիսկայնությամբ խնդիրներ, խրոնիկ կամ հաշմանդամության հանգեցնող հոգեկան/վարքագծային առողջության խանգարումներ:

Սթափեցման կենտրոններ՝ Ապահովում է այլընտրանքային ուղղություններ այն անդամների համար, ովքեր ավելի քան և/կամ այլ թմրամիջոցների ազդեցության տակ են հանրային վայրերում և հակառակ դեպքում պետք է տեղափոխվեին շտապօգնության բաժանմունք կամ բանտ: Ծառայությունը ծածկվում է մինչև 24 ժամ տևողության համար:

Իրավասություն՝

- 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անդամներ, ովքեր հարբած են, բայց գիտակից, համագործակցում են, կարող են քայլել, անբռնազբոս են և զերծ են որևէ տեսակի բժշկական լարվածությունից (ներառյալ կյանքին սպառնացող ախտանիշները կամ ակնհայտ թաքնված ախտանիշները) և ովքեր հակառակ դեպքում պետք է տեղափոխվեին շտապօգնության բաժանմունք կամ բանտ, կամ ովքեր ներկայացել են շտապօգնության բաժանմունք, և պարզվել է, որ նպատակահարմար է նրանց սթափեցման կենտրոն ուղարկել:

Բողոքարկումը տարբերվում է բողոքից: Բողոքարկումը Molina Healthcare-ին ուղղված հայցն է՝ վերանայելու և փոխելու Ձեր ծառայությունների վերաբերյալ մեր կայացրած որոշումը: Եթե մենք Ձեզ ուղարկել ենք Գործողությունների ծանուցում (NOA) պարունակող նամակ, որտեղ ասվում է, որ մենք մերժում ենք, հետաձգում, փոխում կամ դադարեցնում ենք ծառայությունը, և Դուք համաձայն չեք մեր որոշման հետ, Դուք կարող եք բողոքարկել: Ձեր լիազորված ներկայացուցիչը կամ մատակարարը Նույնպես կարող է մեզ բողոքարկում ներկայացնել Ձեր փոխարեն՝ Ձեր գրավոր թույլտվությամբ:

Դուք պետք է բողոքարկեք Molina Healthcare-ից ստացված NOA-ի օրվանից 60 օրվա ընթացքում: Եթե մենք որոշել ենք նվազեցնել, կասեցնել կամ դադարեցնել ծառայությունը, որը Դուք այժմ ստանում եք, Դուք կարող եք շարունակել ստանալ



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

6 | Խնդիրների մասին հաղորդում և դրանց լուծում

այդ ծառայությունը, մինչ սպասում եք Ձեր բողոքարկման շուրջ որոշմանը: Սա կոչվում է Aid Paid Pending: «Aid Paid Pending» ստանալու համար Դուք պետք է մեզ բողոքարկում ներկայացնեք 10 օրվա ընթացքում՝ սկսած NOA-ի ամսաթվից կամ մինչև այն ամսաթիվը, երբ մենք հայտնել ենք Ձեզ, որ Ձեր ծառայությունը կդադարեցվի, որն ավելի ուշ է: Երբ հետևյալ հանգամանքներում բողոքարկում եք ներկայացնում, Ձեր ծառայությունը կշարունակվի մինչ Դուք սպասում եք Ձեր բողոքարկման որոշմանը:

Դուք կարող եք բողոքարկել հեռախոսով, գրավոր կերպով՝ փոստով կամ առցանց՝

- **Հեռախոսով**՝ Չանգահարեք Molina Healthcare՝ 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711) երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 7:00-ից 19:00-ն ընկած ժամանակահատվածում:
- **Փոստով**՝ Չանգահարեք Molina Healthcare՝ 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711) հեռախոսահամարով և խնդրեք ուղարկել Ձեզ ձևաթուղթ: Երբ ստանաք ձևաթուղթը, լրացրեք այն: Համոզվեք, որ ներառել եք Ձեր անունը, առողջապահական ծրագրի ID համարը և այն ծառայությունը, որը Դուք բողոքարկում եք:
Ուղարկեք ձևաթուղթը հետևյալ հասցեով՝
Attention: Member Appeals & Grievances
200 Oceangate, Suite 100
Long Beach, CA 90802

Ձեր բժշկի գրասենյակում հասանելի կլինեն բողոքարկման ձևաթղթերը:

- **Առցանց**՝ Այցելեք Molina Healthcare կայք: Մտեք www.MolinaHealthcare.com:

Եթե Դուք օգնության կարիք ունեք բողոքարկելու կամ Aid Paid Pending ստանալու հարցում, մենք կարող ենք օգնել Ձեզ: Մենք կարող ենք Ձեզ տրամադրել անվճար թարգմանչական ծառայություններ: Չանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711):

Ձեր բողոքարկումը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում Molina Healthcare-ը Ձեզ նամակ կուղարկի՝ տեղեկացնելով, որ մենք ստացել ենք այն: 30 օրվա ընթացքում մենք Ձեզ կհայտնենք Ձեր բողոքարկման շուրջ մեր որոշումը և կուղարկենք բողոքարկման մասին ծանուցում (NAR) պարունակող նամակ: Եթե մենք Ձեզ չտրամադրենք մեր բողոքարկման որոշումը 30 օրվա ընթացքում, Դուք կարող եք նահանգային լուծման պահանջել California-ի Սոցիալական ծառայությունների վարչությունից (CDSS) և Անկախ բժշկական վերանայում (IMR)՝ DMHC-ից:

Բայց եթե նախ նահանգային լուծման եք խնդրում, և Ձեր կոնկրետ խնդիրները լուծելու համար լուծման արդեն տեղի է ունեցել, Դուք չեք կարող նույն հարցերի շուրջ անկախ բժշկական վերանայում խնդրել DMHC-ից: Այդ դեպքում վերջնական խոսքը մնում է պետական լուծմանը: Դուք, այնուամենայնիվ, կարող եք բողոք ներկայացնել DMHC-ին, եթե Ձեր խնդիրները ենթակա չեն անկախ բժշկական վերանայման, նույնիսկ եթե նահանգային լուծման արդեն տեղի է ունեցել:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Եթե Դուք կամ Ձեր բժիշկը ցանկանում եք, որ մենք արագ որոշում կայացնենք, քանի որ Ձեր բողոքարկումը որոշելու համար անհրաժեշտ ժամանակը վտանգի տակ կղևի Ձեր կյանքը, առողջությունը կամ գործելու ունակությունը, կարող եք արագացված (արագ) վերանայում խնդրել: Արագացված վերանայում խնդրելու համար՝ զանգահարեք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Մենք որոշում կկայացնենք Ձեր բողոքարկումը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում:

Ինչ անել, եթե համաձայն չեք բողոքարկման որոշման հետ

Եթե Դուք բողոքարկում եք ներկայացրել և ստացել եք բողոքարկման մասին ծանուցում պարունակող նամակ, որում ասվում է, որ մենք չենք փոխել մեր որոշումը, կամ Դուք երբեք չեք ստացել բողոքարկման մասին ծանուցում պարունակող նամակ, և դրանից անցել է 30 օր, կարող եք՝

- **Նահանգային լուծման խնդրել** California-ի Սոցիալական ծառայությունների վարչությունից (CDSS), և դատավորը կքննի Ձեր գործը: CDSS-ի անվճար հեռախոսահամարն է՝ 1-800-743-8525 (TTY 1-800-952-8349): Դուք նաև կարող եք նահանգային լուծման խնդրել առցանց՝ հետևյալ հասցեով՝ <https://www.cdss.ca.gov>: Նահանգային լուծման խնդրելու ավելի շատ եղանակներ կարելի է գտնել այս գլխի «Նահանգային լուծման» բաժնում:
- Անկախ բժշկական վերանայման/բողոքի ձև ներկայացրեք Կառավարվող Առողջապահության Բաժանմունք (DMHC)՝ Molina Healthcare-ի որոշման վերանայման համար: Եթե Ձեր բողոքը համապատասխանում է DMHC-ի անկախ բժշկական վերանայման (IMR) գործընթացի պահանջներին, անկախ բժիշկը, որը Molina Healthcare-ի անդամ չէ, կվերանայի Ձեր գործը և որոշում կկայացնի, որին Molina Healthcare-ը պետք է հետևի:

DMHC-ի անվճար հեռախոսահամարն է՝ 1-888-466-2219 (TTY 1-877-688-9891): Դուք կարող եք գտնել անկախ բժշկական վերանայման/բողոքի ձևը և հրահանգները առցանց՝ DMHC-ի կայքում՝ <https://www.dmhc.ca.gov>:

Դուք ստիպված չեք լինի վճարել պետական լուծման կամ անկախ բժշկական վերանայման համար:

Դուք ունեք ինչպես պետական լուծման, այնպես էլ անկախ բժշկական վերանայում խնդրելու իրավունք: Բայց եթե նախ նահանգային լուծման եք խնդրում, և Ձեր կոնկրետ խնդիրների լուծման համար լուծում արդեն տեղի է ունեցել, Դուք չեք կարող նույն հարցերի վերաբերյալ DMHC-ից պահանջել անկախ բժշկական վերանայում: Այդ դեպքում վերջնական խոսքը մնում է պետական լուծմանը: Դուք, այնուամենայնիվ, կարող եք բողոք ներկայացնել DMHC-ին, եթե խնդիրները չեն համապատասխանում անկախ բժշկական վերանայման (IMR) պահանջներին, նույնիսկ եթե նահանգային լուծում արդեն տեղի է ունեցել:

Ստորև բերված բաժինները ժամ ավելի շատ տեղեկատվություն կտրամդրվի այն մասին, թե ինչպես խնդրել նահանգային լուծման-ի և անկախ IMR:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Medi-Cal Rx դեղատների արտոնությունների հետ կապված բողոքները և բողոքարկումները չեն դիտարկվում Molina Healthcare-ի կողմից: Medi-Cal Rx դեղատների արտոնությունների հետ կապված բողոքներ և բողոքարկումներ ներկայացնելու համար՝ զանգահարեք 1-800-977-2273 (TTY 1-800-977-2273) և սեղմեք 7 կամ 711. Դեղատների արտոնությունների հետ կապված բողոքները և բողոքարկումները, որոնք ենթակա չեն Medi-Cal Rx-ին, կարող են իրավասու լինել անկախ բժշկական վերանայման (IMR) համար DMHC-ում:

Եթե Դուք համաձայն չեք Ձեր Medi-Cal Rx դեղատների արտոնության հետ կապված որոշման հետ, կարող եք նահանգային լուծումներ խնդրել: Դուք չեք կարող DMHC-ից խնդրել անկախ բժշկական վերանայում՝ Medi-Cal Rx դեղատների արտոնությունների հետ կապված որոշումների համար:

Բողոքներ և անկախ բժշկական վերանայումներ (IMR) Կառավարվող խնամքի վարչությունում (DMHC)

Անկախ բժշկական վերանայման ժամանակ «արտաքին» բժիշկը, որը կապված չէ Molina Healthcare-ի հետ, վերանայում է Ձեր գործը: Եթե ցանկանում եք IMR-ի հնարավորություն, նախ պետք է բողոքարկեք Molina Healthcare-ին՝ ոչ հրատապ խնդիրների համար: Եթե Molina Healthcare-ից 30 օրացուցային օրվա ընթացքում պատասխան չստանաք, կամ եթե դժգոհ լինեք Molina Healthcare-ի որոշումից, ապա կարող եք պահանջել IMR: Դուք պետք է IMR խնդրեք բողոքարկման որոշման մասին ծանուցում ստանալու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում, սակայն Դուք ունեք ընդամենը 120 օր՝ նահանգային լուծումներ պահանջելու համար: Այսպիսով, եթե ցանկանում եք IMR և նահանգային հանրային լուծումներ, ներկայացրեք Ձեր բողոքը որքան հնարավոր է շուտ:

Հիշեք, եթե նախ նահանգային լուծումներ եք պահանջում, և Ձեր կոնկրետ խնդիրների լուծման համար լուծում արդեն տեղի է ունեցել, Դուք չեք կարող նույն հարցերի շուրջ DMHC-ից խնդրել IMR-ի հնարավորություն: Այդ դեպքում վերջնական խոսքը մնում է պետական լսմանը: Դուք, այնուամենայնիվ, կարող եք բողոք ներկայացնել DMHC-ին, եթե խնդիրները չեն համապատասխանում անկախ բժշկական վերանայման (IMR) պահանջներին, նույնիսկ եթե նահանգային լուծում արդեն տեղի է ունեցել:

Դուք կարող եք անմիջապես ստանալ IMR՝ առանց Molina Healthcare-ին նախապես բողոքարկում ներկայացնելու: Սա տեղի է ունենում այն դեպքերում, երբ Ձեր առողջական մտահոգությունը հրատապ է, օրինակ՝ Ձեր առողջության համար լուրջ վտանգ ներկայացնող դեպքերում:

Եթե Ձեր բողոքը DMHC-ին չի համապատասխանում IMR պահանջելու համար, DMHC-ն, այնուամենայնիվ, կվերանայի Ձեր բողոքը՝ համոզվելու համար, որ Molina Healthcare-ը ճիշտ որոշում է կայացրել, երբ Դուք բողոքարկել եք Molina Healthcare-կողմից ծառայությունների մերժումը:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Californiaյի Կառավարվող ինսամբի վարչությունը պատասխանատու է առողջապահական ծառայությունների պլանների կարգավորման համար: Եթե Ձեր առողջական ծրագրի դեմ բողոք ունեք, նախ պետք է զանգահարեք Ձեր առողջապահական պլանին **1-888-665-4621 (TTY/TDD կամ 711)** և օգտվեք Ձեր առողջապահական պլանի բողոքարկման գործընթացից՝ նախքան վարչության հետ կապ հաստատելը: Բողոքարկման այս գործընթացի կիրառումը Ձեզ չի գրկում որևէ հավանական իրավունքից կամ դատական պաշտպանության միջոցներից, որոնք կարող են հասանելի լինել Ձեզ համար: Եթե օգնության կարիք ունեք՝ կապված այնպիսի բողոքի հետ, որը ներառում է արտակարգ իրավիճակ, այնպիսի բողոքի հետ, որը բավարար կերպով չի լուծվել Ձեր առողջապահական պլանով, կամ այնպիսի բողոքի, որը չլուծված է մնացել ավելի քան 30 օրվա ընթացքում, կարող եք զանգահարել վարչություն՝ օգնություն ստանալու համար: Յնարավոր է՝ Դուք իրավասու լինեք օգտվելու նաև անկախ բժշկական վերանայման (IMR) հնարավորությունից: Եթե Դուք իրավասու եք օգտվելու IMR-ից, IMR գործընթացը կապահովի առողջապահական պլանով կայացված բժշկական որոշումների անաչառ վերանայում, որոնք վերաբերում են առաջարկվող ծառայության կամ բուժման բժշկական անհրաժեշտությանը, բուժման հետ կապված որոշումներին, որոնք ունեն փորձարարական կամ հետազոտական բնույթ, ինչպես նաև անհետաձգելի կամ շտապ բժշկական ծառայությունների վճարումների հետ կապված վեճերի վերանայում: Վարչությունն ունի նաև անվճար հեռախոսահամար՝ **(1-888-466-2219)**, և TDD գիծ՝ **(1-877-688-9891)**՝ լսողության և խոսքի խնդիրներ ունեցողների համար: Վարչության ինտերնետային կայքում www.dmhca.gov, հասանելի են բողոքի ձևեր, IMR դիմումի ձևեր և առցանց ցուցումներ:

Հանրային լուծումներ

Հանրային լուծումները հանդիպումներ են Molina Healthcare-ի և Californiaյի սոցիալական ծառայությունների վարչության (CDSS) դատավորի հետ: Դատավորը կօգնի լուծել Ձեր խնդիրը և որոշել, թե արդյոք Molina Healthcare-ը ճիշտ որոշում է կայացրել, թե ոչ: Դուք իրավունք ունեք նահանգային լուծումներ խնդրելու, եթե արդեն բողոքարկել եք Molina Healthcare-ին և, այնուամենայնից, գոհ չեք մեր որոշումից, կամ եթե Ձեր բողոքարկման վերաբերյալ որոշում չեք ստացել 30 օր հետո:

Դուք պետք է նահանգային լուծումներ խնդրեք մեր NAR նամակը ստանալու օրվանից 120 օրվա ընթացքում: Եթե մենք Ձեզ տրամադրել ենք Aid Paid Pending, և Դուք ցանկանում եք, որ դրա տրամադրումը շարունակվի, մինչև հանրային լուծումների վերաբերյալ որոշման կայացումը, Դուք պետք է պահանջեք հանրային լուծումներ անցկացնել մեր NAR նամակը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում կամ մինչև այն ամսաթիվը, երբ մենք հայտնել ենք, որ Ձեր ծառայությունները կդադարեցվեն՝ կախված նրանից, թե որն է ավելի ուշ:

Եթե օգնության կարիք ունեք՝ համոզվելու, որ Aid Paid Pending-ը կշարունակվի, մինչև նահանգային լուծումների վերաբերյալ վերջնական որոշում կայացվի, դիմեք Molina Healthcare-ին՝ երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 7: 00-19:00՝ զանգահարելով



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել Californiaյի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

6 | Խնդիրների մասին հաղորդում և դրանց լուծում

1-888-665-4621 հեռախոսահամարով: Եթե չեք կարողանում լավ լսել կամ խոսել, զանգահարեք TTY/TDD կամ 711: Ձեր լիազորված ներկայացուցիչը կամ մատակարարը կարող է Ձեզ փոխարեն հանրային լսումներ խնդրել՝ Ձեր գրավոր թույլտվությամբ:

Երբեմն Դուք կարող եք խնդրել Նահանգային լսումներ՝ առանց մեր բողոքարկման գործընթացով անցնելու:

Օրինակ՝ եթե Molina Healthcare-ը Ձեզ ճիշտ կամ ժամանակին չի տեղեկացրել Ձեր ծառայությունների մասին, Դուք կարող եք պահանջել նահանգային լսումներ՝ առանց մեր բողոքարկման գործընթացով անցնելու: Սա կոչվում է «Deemed Exhaustion»: Ահա «Deemed Exhaustion»-ի որոշ օրինակներ՝

- Մենք Ձեզ NOA կամ NAR նամակը հասանելի չենք դարձրել Ձեր նախընտրած լեզվով
- Մենք սխալ ենք թույլ տվել, որն անդրադառնում է Ձեր իրավունքներից որևէ մեկի վրա
- Մենք Ձեզ NOA նամակ չենք տվել
- Մենք Ձեզ NAR նամակ չենք տվել
- Մենք սխալվել ենք մեր NAR նամակում
- Մենք 30 օրվա ընթացքում որոշում չենք կայացրել Ձեր բողոքի վերաբերյալ
- Մենք որոշել ենք, որ Ձեր գործը հրատապ է, բայց չենք պատասխանել Ձեր բողոքին 72 ժամվա ընթացքում

Դուք կարող եք նահանգային լսումներ խնդրել հետևյալ եղանակներով՝

- **Հեռախոսով՝** Չանգահարեք CDSS-ի նահանգային լսումների բաժին՝ 1-800-743-8525 հեռախոսահամարով (TTY 1-800-952-8349 կամ 711)
- **Փոստով՝** Լրացրեք Ձեր բողոքարկման ծանուցման հետ տրամադրված ձևը և ուղարկեք այն՝

California Department of Social Services
State Hearings Division
P.O. Box 944243, MS 09-17-433
Sacramento, CA 94244-2430

- **Առցանց՝** Լսումներ պահանջեք առցանց՝ հետևյալ հասցեում՝ www.cdss.ca.gov
- **Էլ փոստով՝** Լրացրեք ձևաթուղթը, որը եկել է Ձեր բողոքարկման ծանուցման հետ և էլեկտրոնային փոստով ուղարկեք այն հետևյալ հասցեին՝ Scopeofbenefits@dss.ca.gov
 - Նշում՝ Եթե Դուք ուղարկում եք այն էլեկտրոնային փոստով, վտանգ կա, որ ինչ-որ մեկը, որը հանրային լսումների բաժնից չէ, կարող է խոչընդոտել Ձեր էլեկտրոնային նամակին: Ձեր հարցումն ուղարկելու համար օգտվեք ավելի անվտանգ մեթոդից:
- **Ֆաքսով՝** Լրացրեք ձևաթուղթը, որը եկել է Ձեր բողոքարկման որոշման ծանուցման հետ և ֆաքսով ուղարկեք այն Նահանգային լսումների բաժին՝ 916-309-3487 կամ անվճար՝ 1-833-281-0903

Եթե Դուք օգնության կարիք ունեք հանրային դատարանում լսումներ պահանջելու համար, մենք կարող ենք օգնել Ձեզ: Մենք կարող ենք Ձեզ տրամադրել անվճար



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

թարգմանչական ծառայություններ: Չանգահարե՛ք 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711):

Լսումի ընթացքում Դուք դատավորին կպատմեք, թե ինչու համաձայն չեք Molina Healthcare-ի որոշման հետ: Molina Healthcare-ը դատավորին կհայտնի, թե ինչպես ենք մենք կայացրել մեր որոշումը: Գործի լուծումը դատարանում կարող է տևել մինչև 90 օր: Molina Healthcare-ը պետք է ենթարկվի դատավորի որոշմանը:

Եթե ցանկանում եք, որ CDSS-ն արագ որոշում կայացնի, քանի որ նահանգային լսումներ անցկացնելու համար անհրաժեշտ ժամանակը վտանգի տակ կղնի Ձեր կյանքը, առողջությունը կամ լիարժեք գործելու ունակությունը, Դուք, Ձեր լիազոր ներկայացուցիչը կամ Ձեր մատակարարը կարող եք կապվել CDSS-ի հետ և խնդրել արագացված (արագ) հանրային լսում: CDSS-ը պետք է որոշում կայացնի ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում այն բանից հետո, երբ այն կստանա Ձեր ամբողջական գործը Molina Healthcare:

Խարդախություն, վատնում և չարաշահում

Եթե կասկածում եք, որ մատակարարը կամ Medi-Cal ստացող անձը կատարել է խարդախություն, վատնում կամ չարաշահում, ապա Ձեր պարտականությունն է հայտնել այդ մասին՝ զանգահարելով 1-800-822-6222 անվճար հեռախոսահամարով կամ առցանց բողոք ներկայացնելով՝ <https://www.dhcs.ca.gov/>:

Մատակարարի կողմից խարդախությունը, վատնումն ու չարաշահումը ներառում են՝

- Բժշկական փաստաթղթերի կեղծում
- Ավելի շատ դեղորայքի նշանակում, քան բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է
- Ավելի շատ առողջապահական ծառայությունների մատուցում, քան բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է
- Հաշիվների ներկայացում այնպիսի ծառայությունների համար, որոնք չեն տրամադրվել
- Հաշիվների ներկայացում մասնագիտական ծառայությունների համար այն դեպքում, երբ մասնագետը չի կատարել ծառայությունը
- Անդամներին անվճար կամ զեղչված ապրանքների և ծառայությունների առաջարկում՝ անդամի կողմից ընտրված մատակարարի վրա ազդելու համար
- Անդամի առաջնային խնամքի մատակարարի փոփոխություն՝ առանց անդամի իմացության

Արտոնություններ ստացող անձի կողմից խարդախությունը, վատնումն ու չարաշահումը ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

- Առողջապահական պլանի ID քարտը կամ Medi-Cal արտոնությունների նույնականացման քարտը (BIC) մեկ այլ անձի պարտքով տալ, վաճառել կամ հանձնել
- Մի քանի մատակարարների կողմից նմանատիպ կամ նույն բուժման մեթոդների կամ դեղերի ստացում
- Շտապ օգնության բաժանմունք այցելելը, երբ արտակարգ իրավիճակ չկա



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

6 | Խնդիրների մասին հաղորդում և դրանց լուծում

- Ուրիշի սոցիալական ապահովության համարը կամ առողջապահական պլանի ID համարը օգտագործելը
- Բժշկական և ոչ բժշկական փոխադրումից օգտվելը ոչ առողջապահական ծառայությունների համար, Medi-Cal-ով չճանաչվող ծառայությունների համար, կամ երբ չկա նշանակված բժշկական այց կամ դեղատոմս վերցնելու անհրաժեշտություն

Խարդախության, վատնման կամ չարաշահման մասին հայտնելու համար գրեք խարդախություն, վատնում կամ չարաշահում կատարած անձի անունը, հասցեն և ID համարը: Անձի մասին տրամադրեք հնարավորինս շատ տեղեկատվություն, օրինակ՝ հեռախոսահամար կամ մասնագիտությունը, եթե խոսքը մատակարարի մասին է: Ներկայացրեք իրադարձությունների ամսաթվերը և կատարվածի համառոտ ու ճշգրիտ շարադրանքը:

Ուղարկեք Ձեր հաղորդագրությունը հետևյալ հասցեով՝

Compliance Director
Molina Healthcare of California
200 Oceangate, Ste. 100
Long Beach, CA 90802
Անվճար հեռախոսահամար՝ (866) 606-3889
Ֆաքս՝ (562) 499-6150
Էլ. փոստ՝ MHC_Compliance@Molinahealthcare.com
Չանգահարեք Molina Healthcare թեժ գիծ՝ 866-606-3889 հեռախոսահամարով:
Լրացրեք խարդախության, վատնման և չարաշահման մասին հաղորդման ձևն առցանց՝ <https://www.molinahealthcare.alertline>:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

7. Իրավունքներ և պարտականություններ

Որպես Molina Healthcare-ի անդամ՝ Դուք ունեք որոշակի իրավունքներ և պարտականություններ: Այս գլխում բացատրվում են այդ իրավունքներն ու պարտականությունները: Այս գլուխը ներառում է նաև իրավական ծանուցումներ, որոնց իրավունքն ունեք՝ որպես Molina Healthcare-ի անդամ:

Ձեր իրավունքները

Սրանք Ձեր իրավունքներն են որպես Molina Healthcare-ի անդամ.

- Հարգալից և արժանապատիվ վերաբերմունքի՝ պատշաճ կերպով հաշվի առնելով Ձեր գաղտնիության իրավունքը և Ձեր բժշկական տեղեկատվության, օրինակ՝ Ձեր բժշկական պատմության, հոգեկան և ֆիզիկական վիճակի կամ բուժման, ինչպես նաև վերարտադրողական կամ սեռական առողջության մասին տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտությունը:
- Տեղեկատվություն ստանալ առողջապահական պլանի և դրա ծառայությունների, ներառյալ ապահովագրված ծառայությունների, մատակարարների, պրակտիկ բժիշկների, ինչպես նաև անդամների իրավունքների և պարտականությունների մասին
- Ձեր նախընտրած լեզվով լիարժեք թարգմանված տեղեկատվություն ստանալ, ներառյալ բողոքների և բողոքարկումների բոլորը ծանուցումների մասին
- Առաջարկություններ անել Molina Healthcare-ի անդամների իրավունքների և պարտականությունների քաղաքականության վերաբերյալ
- Կարողանալ ընտրել առաջնային ինսամբի մատակարար Molina Healthcare-ի ցանցում
- Ցանցային մատակարարներին ժամանակին հասանելիություն ունենալ
- Մասնակցել մատակարարների հետ որոշումների կայացմանը՝ կապված Ձեր սեփական առողջապահական ինսամբի հետ, ներառյալ բուժումից հրաժարվելու իրավունք ունենալ
- Բողոքներ հնչեցնել՝ բանավոր կամ գրավոր, կազմակերպության կամ Ձեր ստացած ինսամբի վերաբերյալ
- Molina Healthcare-ի՝ մերժելու, հետաձգելու, դադարեցնելու (ավարտելու) կամ փոխելու որոշման բժշկական պատճառն իմանալ



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

7 | Իրավունքներ և պարտականություններ

- Ինսամբի համակարգում ստանալ
- Ծառայությունները կամ արտոնությունները մերժելու, հետաձգելու կամ սահմանափակելու որոշումները բողոքարկել
- Ձեր լեզվով անվճար բանավոր և գրավոր թարգմանչական ծառայություններ ստանալ
- Անվճար իրավաբանական օգնություն ստանալ իրավաբանական օգնության տեղական գրասենյակում կամ այլ խմբերում
- Նախնական կարգադրություններ ձևակերպել
- Նահանգային լուսններ խնդրել, եթե ծառայությունը կամ արտոնությունը մերժվել է, Դուք արդեն բողոք եք ներկայացրել Molina Healthcare-ում և, այնուամենայնիվ, գոհ չեք որոշումից, կամ եթե Ձեր բողոքարկման վերաբերյալ որոշում չեք ստացել 30 օր հետո, այդ թվում՝ ստանալ տեղեկատվություն այն հանգամանքների մասին, որոնց դեպքում հնարավոր է արագացված լուսն պահանջել
- Գրանցումից դուրս գալ Molina Healthcare-ից և անցնել շրջանի մեկ այլ առողջապահական պլանի՝ ըստ պահանջի
- Օգտվել անչափահասների համաձայնությամբ տրամադրվող ծառայություններից
- Ստանալ անվճար գրավոր տեղեկատվություն այլ ձևաչափերով (օրինակ՝ բրայլյան տառատեսակով, խոշոր տպագիր տառատեսակով, ձայնային եղանակով և մատչելի էլեկտրոնային ձևաչափերով)՝ ըստ պահանջի և ժամանակին՝ ըստ պահանջվող ձևաչափի և համաձայն սոցիալական ապահովության և հաստատությունների օրենսգրքի (W&I) 14182(b)(12) բաժնի:
- Ձեր լինել զսպման կամ մեկուսացման ցանկացած ձևից, որն օգտագործվում է որպես հարկադրանքի, կարգապահության, հարմարության կամ վրեժխնդրության միջոց
- Անկեղծ քննարկել առկա բուժման տարբերակների և այլընտրանքների մասին տեղեկատվությունը, որը ներկայացված է Ձեր վիճակին և հասկանալու ունակությանը համապատասխան ձևով՝ անկախ ծախսերից կամ ծածկույթից
- Ունենալ հասանելիություն Ձեր բժշկական գրառումներին և դրանց պատճենը ստանալ, ինչպես նաև պահանջել փոփոխություններ կատարել, ինչպես նշված է 45 դաշնային կանոնակարգերի օրենսգրքի (CFR) 164.524 և 164.526 բաժիններում:
- Այս իրավունքներն իրացնելու ազատություն՝ առանց մտահոգվելու, որ դա կարող է ազդել Molina Healthcare-ի, Ձեր առողջապահական ծառայությունների մատակարարների կամ նահանգի՝ Ձեր նկատմամբ վերաբերմունքի վրա
- Ունենալ հասանելիություն՝ ըստ դաշնային օրենքի՝ օգվելու ընտանիքի պլանավորման ծառայություններից, անկախ ծննդյան կենտրոններից, դաշնային մակարդակով որակավորված առողջության կենտրոններից, Հնդկացիական առողջապահական ծառայությունների մատակարարներից, մանկաբարձական ծառայություններից, գյուղական առողջապահական կենտրոններից, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների ծառայություններից և շտապ օգնության ծառայություններից, որոնք ներառված չեն Molina Healthcare-ի ցանցում:
- Ներկայացնել բողոքարկում արտոնությունների հետ կապված անբարենպաստ որոշումների դեպքում 60 օրացուցային օրվա ընթացքում՝ սկսած արտոնության անբարենպաստ որոշման ծանուցման (NABD) ամսաթվից, իմանալ, թեինչպես շարունակել արտոնություններից օգտվել նահանգային անառաչ լուսնների միջոցով պլանի շրջանակում բողոքարկման գործընթացի ընթացքում, երբ դա կիրառելի է:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Ձեր պարտականությունները

Molina Healthcare-ի անդամներն ունեն հետևյալ պարտականությունները՝

- Տրամադրել տեղեկատվություն (հնարավորության սահմաններում), որն անհրաժեշտ է կազմակերպությանը և նրա մասնագետներին ու մատակարարներին՝ բուժօգնություն մատուցելու համար:
- Չետևել խնամքի պլաններին և ցուցումներին, որոնց շուրջ պայմանավորվել են իրենց պրակտիկ բժիշկների հետ:
- Չասկանալ իրենց առողջական խնդիրները և հնարավորինս մասնակցել բուժման՝ փոխադարձ համաձայնեցված նպատակների մշակմանը
- Չայտնել մեր պլանին, եթե ունեք լրացուցիչ բժշկական ապահովագրություն
- Գործել այնպես, որ աջակցեք այլ հիվանդներին մատուցվող խնամքին և օգնեք Ձեր բժշկի գրասենյակի, հիվանդանոցների և այլ գրասենյակների անխափան աշխատանքին
- Տեղափոխվելու դեպքում մեզ տեղյակ պահել: Եթե Դուք տեղափոխվում եք մեր սպասարկման տարածքի ներսում, մենք պետք է թարմացնենք Ձեր անդամակցության գրառումները: Եթե Դուք տեղափոխվում եք մեր պլանի սպասարկման տարածքից դուրս, Դուք չեք կարող մնալ մեր պլանի անդամ, բայց մենք կարող ենք Ձեզ տեղեկացնել, եթե ունենք պլան տվյալ տարածքում:
- Տեղեկացրեք մեզ, եթե ունեք հարցեր, մտահոգություններ, խնդիրներ կամ առաջարկություններ:

Ծանուցում խտրականության բացակայության մասին

Խտրականությունն անօրինական է: Molina Healthcare-ը հետևում է քաղաքացիական իրավունքների մասին նահանգային և դաշնային օրենքներին: Molina Healthcare-ն ապօրինի խտրականություն չի դնում, չի բացառում մարդկանց կամ այլ վերաբերմունք չի դրսևորում նրանց նկատմամբ նրանց սեռի, ռասայի, գույնի, կրոնի, ծագման, ազգային ծագման, էթնիկ նույնականացման, տարիքի, մտավոր հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, առողջական վիճակի, գենետիկական տեղեկատվության, ամուսնական կարգավիճակի, սեռի, գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման պատճառով:

Molina Healthcare-ը ապահովում է՝

- Անվճար օժանդակ միջոցներ և ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար, որոնք կօգնեն նրանց ավելի լավ շփվել, օրինակ՝
 - Նշանային լեզվի որակյալ թարգմանիչներ
 - Գրավոր տեղեկատվություն այլ ձևաչափերով (մեծ տպագիր տառաչափ, ձայնային, մատչելի էլեկտրոնային ձևաչափեր և այլ ձևաչափեր)



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
 Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
 Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

- Անվճար լեզվական ծառայություններ այն մարդկանց համար, ում հիմնական լեզուն անգլերենը չէ, օրինակ՝
 - Որակավորված թարգմանիչներ
 - Այլ լեզուներով գրված տեղեկատվություն

Եթե Ձեզ անհրաժեշտ են այս ծառայությունները, դիմեք Molina Healthcare՝ երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 7:00-ից 19:00-ը՝ զանգահարելով 1-888-665-4621 հեռախոսահամարով: Եթե չեք կարողանում լավ լսել կամ խոսել, զանգահարեք TTY/TDD կամ 711 կամ 711՝ California-ի «Relay» ծառայությունից օգտվելու համար:

Ինչպես բողոք ներկայացնել

Եթե Դուք կարծում եք, որ Molina Healthcare-ը չի մատուցել այդ ծառայությունները կամ ապօրինի կերպով խտրականություն է դրսևորել՝ սեռի, ռասայի, գույնի, կրոնի, ծագման, ազգային ծագման, էթնիկ նույնականացման, տարիքի, մտավոր հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, բժշկական վիճակի, գենետիկական տեղեկատվության, ամուսնական կարգավիճակի, սեռի, գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման պատճառով, կարող եք բողոք ներկայացնել Molina Healthcare-ի քաղաքացիական իրավունքների համակարգողին: Դուք կարող եք բողոք ներկայացնել հեռախոսով, փոստով, անձամբ կամ առցանց՝

- **Հեռախոսով՝** Կապվեք Molina Healthcare-ի քաղաքացիական իրավունքների համակարգողի հետ՝ երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 7:00-ից 19:00-ն ընկած ժամանակահատվածում՝ զանգահարելով 1-888-665-4621: Եթե չեք կարողանում լավ լսել կամ խոսել, զանգահարեք TTY/TDD կամ 711՝ California-ի «Relay» ծառայությունից օգտվելու համար:
- **Փոստով՝** Լրացրեք բողոքի ձևը կամ գրեք նամակ և ուղարկեք այն՝
Attention: Molina Healthcare Civil Rights Coordinator
200 Oceangate, Suite 100
Long Beach, CA 90802
- **Անձամբ՝** Այցելեք Ձեր բժշկի գրասենյակ կամ Molina Healthcare և ասեք, որ ցանկանում եք բողոք ներկայացնել:
- **Առցանց՝** Այցելեք Molina Healthcare-ի կայքը՝ հետևյալ հասցեով՝ <https://molinahealthcare.Alertline.com> կամ ուղարկեք Ձեր բողոքը civil.rights@molinahealthcare.com հասցեին:

Եթե չլուծված խնդրի հետ կապված լրացուցիչ օգնության կարիք ունեք, կարող եք նաև կապվել Health Net-ի հետ՝ 1-800-675-6110 հեռախոսահամարով:

Քաղաքացիական իրավունքների գրասենյակ – California-ի առողջապահության վարչություն

Դուք կարող եք նաև քաղաքացիական իրավունքների վերաբերյալ բողոք ներկայացնել California-ի Առողջապահության ծառայությունների վարչություն (DHCS)՝ քաղաքացիական իրավունքների գրասենյակի հեռախոսահամարով, փոստով կամ առցանց՝



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

- **Հեռախոսով**՝ Չանգահարեք 1-916-440-7370 հեռախոսահամարով: Եթե չեք կարողանում լավ խոսել կամ լսել, զանգահարեք 711 (Հեռահաղորդակցության «Relay» ծառայություն):
- **Փոստով**՝ Լրացրեք բողոքի ձևը կամ նամակ ուղարկեք՝
Deputy Director, Office of Civil Rights
Department of Health Care Services
Office of Civil Rights
P.O. Box 997413, MS 0009
Sacramento, CA 95899-7413

Բողոքի ձևերը հասանելի են https://www.dhcs.ca.gov/Pages/Language_Access.aspx հասցեում:

- **Առցանց**՝ Էլ. նամակ ուղարկեք CivilRights@dhcs.ca.gov հասցեին:

Քաղաքացիական իրավունքների գրասենյակ – Միացյալ Նահանգների Առողջապահության և մարդկային ծառայությունների վարչություն

Եթե կարծում եք, որ խտրականության եք ենթարկվել ռասայի, մաշկի գույնի, ազգային պատկանելության, տարիքի, հաշմանդամության կամ սեռի հիման վրա, կարող եք նաև քաղաքացիական իրավունքների վերավերյալ բողոք ներկայացնել Միացյալ Նահանգների Առողջապահության և մարդկային ծառայությունների վարչություն, Քաղաքացիական իրավունքների գրասենյակ՝ հեռախոսով, փոստով կամ առցանց՝

- **Հեռախոսով**՝ Չանգահարեք 1-800-368-1019 հեռախոսահամարով: Եթե չեք կարողանում լավ խոսել կամ լսել, զանգահարեք TTY 1-800-537-7697 կամ 711՝ California-ի «Relay» ծառայությունից օգտվելու համար:
- **Փոստով**՝ Լրացրեք բողոքի ձևը կամ նամակ ուղարկեք՝
U.S. Department of Health and Human Services
200 Independence Avenue, SW
Room 509F, HHH Building
Washington, D.C. 20201

Բողոքի ձևերը հասանելի են <https://www.hhs.gov/ocr/complaints/index.html> հասցեով:

- **Առցանց**՝ Այցելեք Քաղաքացիական իրավունքների գրասենյակի բողոքարկման պորտալ՝ հետևյալ հասցեով <https://ocrportal.hhs.gov/ocr/cp>:

Որպես անդամ ներգրավվելու ուղիներ

Molina Healthcare-ը ցանկանում է լսել Ձեր ձայնը: Յուրաքանչյուր քառամսյակ Molina Healthcare-ը հանդիպումներ է ունենում՝ խոսելու այն մասին, թե ինչն է լավ աշխատում և ինչպես կարելի է բարելավել Molina Healthcare-ի աշխատանքը: Պլանի անդամները հրավիրվում են՝ մասնակցելու հանդիպումներին: Եկեք հանդիպման:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Համայնքային խորհրդատվական կոմիտե

Molina Healthcare-ն ունի խումբ, որը կոչվում է Համայնքային խորհրդատվական կոմիտե : Այս խումբը կազմված է Molina Healthcare-ի անդամներից, նրանց ինսամակալներից, ընտանիքներից, համայնքի փաստաբաններից, ավանդական և անվտանգության ցանցի մատակարարներից : Ցանկության դեպքում Դուք կարող եք միանալ այս խմբին: Խումբը քննարկում է, թե ինչպես կատարելագործել Molina Healthcare քաղաքականությունը և պատասխանատու է՝

- Խորհրդատվություն Molina Healthcare-ին նորարարական ծրագրերի մշակման վերաբերյալ՝ ուղղված այն մարդկանց կարիքներին, ովքեր բախվում են առողջապահական ծառայություններից օգտվելու խոչընդոտների հետ
- Գործող ծրագրերի և ծառայությունների վերանայում
- Տեղեկատվության և առաջարկությունների տրամադրում, ներառյալ, բայց չսահմանափակվելով կարիքների հաղորդմամբ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ցանցերի զարգացումը և գնահատումը, որակը և առողջապահական ծառայությունների համակարգերի բարեփոխումները, որոնք կօգնեն բարելավել առողջապահական ոլորտի արդյունքները

Եթե ցանկանում եք դառնալ այս խմբի մասը, զանգահարեք Molina Healthcare-ի առողջապահության զարգացման և համայնքի ներգրավվածության բաժին՝ 1-855-665-4621 (TTY/TDD կամ 711) կամ էլ. նամակ ուղարկեք՝ MHCCommunityEngagement@Molinahealthcare.com՝ տեղեկանալու համայնքի ներգրավվածության մասին: Կարող եք նաև այցելել www.MolinaHealthcare.com կամ www.MyMolina.com:

Ծանուցում գաղտնիության քաղաքականության մասին

Հայտարարություն է, որը ներկայացնում է Molina Healthcare-ի Բժշկական գրառումների գաղտնիությունը պահպանելու քաղաքականությունն ու ընթացակարգերը հասանելի են և կտրամադրվեն Ձեզ ըստ պահանջի:

Եթե Դուք համապատասխան տարիքում եք ու կարող եք համաձայնություն տալ զգայուն ծառայություններից օգտվելու համար, Ձեզնից չի պահանջվում ստանալ որևէ այլ անդամի թույլտվությունը՝ զգայուն ծառայություններ ստանալու կամ զգայուն ծառայություններից օգտվելու հայց ներկայացնելու համար: Չզայուն ծառայությունների մասին ավելին կարող եք կարդալ այս ձեռնարկի «Չզայուն ինսամբ» բաժնում:

Դուք կարող եք Molina Healthcare-ին խնդրել զգայուն ծառայությունների մասին հաղորդագրություններ ուղարկել Ձեր նախընտրած այլ փոստային հասցեին, էլ. հասցեին կամ հեռախոսահամարին: Սա կոչվում է «գաղտնի հաղորդակցության հարցում»: Եթե Դուք համաձայնում եք ինսամբից օգտվելուն, Molina Healthcare-ը որևէ մեկին չի տրամադրի Ձեր զգայուն ինսամբի ծառայությունների մասին տեղեկատվություն՝ առանց Ձեր գրավոր թույլտվության: Եթե Դուք փոստային հասցե, էլ.փոստի հասցե կամ հեռախոսահամար չեք տալիս, Molina Healthcare-ը Ձեր



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

անունով հաղորդագրություններ կուղարկի նշված հասցեին կամ հեռախոսահամարին:

Molina Healthcare-ը կկատարի Ձեր խնդրանքը՝ ստանալու գաղտնի հաղորդակցություններ Ձեր խնդրած ձևով և ձևաչափով: Մենք այնպես կանենք, որ Ձեր հաղորդակցությունները հեշտությամբ տեղադրվեն Ձեր խնդրած ձևով և ձևաչափով: Մենք դրանք կուղարկենք Ձեր նախընտրած մեկ այլ վայր: Գաղտնի հաղորդակցությունների Ձեր հայր կշարունակվի, մինչև չեղարկեք այն կամ գաղտնի հաղորդակցության նոր հայր ներկայացնեք:

Դուք կարող եք խնդրել ստանալ Ձեր զգայուն ծառայությունները որոշակի ձևով և ձևաչափով: Միայն պաշտպանված անդամը կարող է հարցում կատարել: Մենք կկատարենք Ձեր խնդրանքը, եթե հնարավոր լինի զգայուն ծառայություններն ուղարկել պահանջվող ձևով և ձևաչափով: Գաղտնի հաղորդակցությունների Ձեր հայր կշարունակվի, մինչև չեղարկեք այն կամ գաղտնի հաղորդակցության նոր հայր ներկայացնեք:

Այն անդամները, ովքեր կարող են համաձայնություն տալ՝ ստանալու զգայուն ծառայություններ, կարիք չունեն որևէ անդամի թույլտվության՝ զգայուն ծառայություններ ստանալու կամ զգայուն ծառայություններից օգտվելու հայցներկայացնելու համար: Molina Healthcare-ը զգայուն ծառայությունների վերաբերյալ հաղորդակցությունները կուղղորդի անդամի այլընտրանքային փոստային հասցեին, էլ. փոստի հասցեին կամ հեռախոսահամարին, կամ, դրանց բացակայության դեպքում, անդամի անունով նշված հասցեով կամ հեռախոսահամարով: Molina Healthcare-ը որևէ այլ անդամի չի բացահայտի զգայուն ծառայությունների հետ կապված բժշկական տեղեկատվությունը՝ առանց ինքնուրույն ստացող անդամի գրավոր թույլտվության: Molina Healthcare-ը կկատարի գաղտնի հաղորդակցության հարցումները պահանջվող ձևով և ձևաչափով, եթե հնարավոր լինի կատարել դա պահանջվող ձևով և ձևաչափով կամ այլընտրանքային վայրերում: Գաղտնի ծառայությունների հետ կապված գաղտնի հաղորդակցությունների վերաբերյալ անդամի հայցը վավեր կլինի այնքան ժամանակ, մինչև անդամը չեղարկի հարցումը կամ ներկայացնի գաղտնի հաղորդակցության նոր հա: Գաղտնի հաղորդակցության հայցեր պահանջելու և ներկայացնելու համար՝ կարող եք զանգահարել Molina Անդամների ծառայությունների բաժին՝ 1-888-665-4621 կամ այցելել Molina կայքը՝ հետևյալ հասցեով՝ www.molinahealthcare.com/members:

Molina Healthcare-ի հայտարարությունը Ձեր բժշկական տեղեկատվության պաշտպանության քաղաքականության և ընթացակարգերի մասին (կոչվում է «Գաղտնիության քաղաքականության մասին ծանուցում») ներառված է ստորև՝

ԱՅՍ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾԿԵԼ ԵՎ ԲԱՑԱՅԱՅՏԿԵԼ ՁԵՐ ՄԱՍԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ ԱՅՍ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԱՅՆ ՈՒՇԱԴԻՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ:

Molina Healthcare of California-ը («Molina Healthcare», «Molina», «մենք» կամ «մեր») առողջապահական արտոնություններ է տրամադրում Ձեզ Medi-Cal ծրագրի միջոցով: Molina-ն օգտագործում և կիսվում է Ձեր մասին գաղտնի բժշկականական տեղեկատվությամբ՝ Ձեզ բժշկական արտոնություններ տրամադրելու նպատակով:



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Մենք օգտագործում և կիսում ենք ձեր տեղեկատվությունը բուժման, վճարման և առողջապահական գործողություններ իրականացնելու համար: Մենք նաև օգտագործում և կիսում ենք ձեր տեղեկատվությունն օրենքով թույլատրված և պահանջվող այլ պատճառներով: Մենք պարտավոր ենք գաղտնի պահել Ձեր առողջական տեղեկատվությունը և հետևել սույն Շանուցման պայմաններին: Սույն Շանուցումն ուժի մեջ է մտնում 2022 թ. հոկտեմբերի 1-ից:

Գաղտնի բժշկական տեղեկատվությունը նշանակում է գաղտնի բժշկական տեղեկատվություն: Գաղտնի բժշկական տեղեկատվությունը նշանակում է առողջական տեղեկատվություն, որը ներառում է Ձեր անունը, Անդամի համարը կամ այլ նույնացուցիչներ և օգտագործվում կամ համօգտագործվում է Molina-ի կողմից:

Ինչ՞ է Molina-ն օգտագործում կամ կիսվում Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությամբ (PHI):

Մենք օգտագործում կամ համօգտագործվում ենք ձեր PHI-ը՝ ձեզ առողջապահական նպաստներ տրամադրելու համար: Ձեր PHI-ն օգտագործվում կամ համօգտագործվում է բուժման, վճարման և առողջապահական գործառնությունների համար:

Բուժման համար

Molina-ն կարող է օգտագործել կամ համօգտագործել ձեր PHI-ը՝ ձեր բժշկական օգնությունը ձեզ տրամադրելու կամ այն կազմակերպելու համար: Այս բուժումը ներառում է նաև ուղեգրեր ձեր բժիշկներին կամ այլ առողջապահական ծառայություններ մատուցողներին: Օրինակ՝ մենք կարող ենք մասնագետի հետ կիսվել ձեր առողջական վիճակի մասին տեղեկություններով: Սա օգնում է մասնագետին ձեր բժշկի հետ խոսել ձեր բուժման մասին:

Վճարման համար

Molina-ն կարող է օգտագործել կամ համօգտագործել ձեր PHI-ը վճարումների վերաբերյալ որոշումներ կայացնելու համար: Սա կարող է ներառել հայցեր, բուժման հաստատումներ և բժշկական կարիքների վերաբերյալ որոշումներ: Ձեր անունը, ձեր վիճակը, ձեր բուժումը և տրված պարագաները կարող են գրված լինել հաշվի մեջ: Օրինակ՝ մենք կարող ենք բժշկին տեղեկացնել, որ դուք ունեք մեր նպաստները: Մենք բժշկին կասենք նաև, թե որքան գումար ենք վճարելու:

Առողջապահական գործառնությունների համար

Molina-ն կարող է օգտագործել կամ համօգտագործել ձեր PHI-ը ձեր մասին՝ մեր առողջապահական ծրագիրը վարելու համար: Օրինակ՝ մենք կարող ենք Ձեր հայցում ներառված տեղեկություններն օգտագործել՝ ձեզ ներկայացնելու այնպիսի առողջապահական ծրագրի մասին, որը կարող է օգնել Ձեզ: Մենք կարող ենք նաև օգտագործել կամ կիսվել Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությամբ՝ Գաղտնի բժշկական տեղեկատվությունը Ձեր մտահոգություններին լուծում տալու համար: Մենք կարող ենք նաև Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությունն Գաղտնի բժշկական տեղեկատվությունը օգտագործել՝ տեսնելու, որ վճարումները ճիշտ են արվում:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Առողջապահական գործառնությունները ներառում են բազմաթիվ առօրյա գործնական կարիքներ: Դրանք ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

- Որակի բարելավում,
- Գործողություններ առողջապահական ծրագրերում՝ օգնելու անդամներին որոշակի խնդիրների դեպքում (օրինակ՝ ասթմա),
- Բժշկական վերանայման անցկացում կամ կազմակերպում,
- Իրավաբանական ծառայություններ, ներառյալ խարդախության և չարաշահումների հայտնաբերման և հետապնդման ծրագրերը,
- Գործողություններ, որոնք կօգնեն մեզ ենթարկվել օրենքներին,
- Անդամների կարիքների վերանայում, ներառյալ բողոքների և բողոքարկումների լուծում:

Մենք կկիսվենք Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությամբ Գաղտնի բժշկական տեղեկատվությունը այլ ընկերությունների հետ («**բիզնես գործընկերներ**»), որոնք տարբեր տեսակի գործողություններ են իրականացնում մեր առողջապահական պլանի համար: Մենք կարող ենք նաև օգտագործել Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությունը Գաղտնի բժշկական տեղեկատվությունը՝ Ձեր հանդիպումների մասին Ձեզ հիշեցումներ տալու համար: Մենք կարող ենք օգտագործել ձեր PHI-ը՝ ձեզ տեղեկություններ տրամադրելու այլ բուժման կամ առողջության հետ կապված այլ նպատակների և ծառայությունների մասին:

Ե՞րբ կարող է Molina-ն օգտագործել կամ համօգտագործել ձեր PHI-ն՝ առանց ձեզանից գրավոր թույլտվություն (հաստատում) ստանալու:

Օրենքը թույլ է տալիս կամ պահանջում է, որպեսզի Molina-ն օգտագործի և համօգտագործի ձեր PHI-ը մի քանի այլ նպատակներով, ներառյալ հետևյալը.

Օրենքով պահանջվում է

Մենք կօգտագործենք կամ կհամօգտագործենք ձեր մասին տեղեկությունները, ինչպես պահանջվում է օրենքով: Մենք կհամօգտագործենք ձեր PHI-ը, երբ պահանջվի Առողջապահության և մարդկային ծառայությունների վարչության (HHS) քարտուղարի կողմից: Սա կարող է լինել դատական գործի, այլ իրավական վերանայման համար կամ երբ պահանջվում է իրավապահ նպատակներով:

Հանրային առողջություն

Ձեր PHI-ը կարող է օգտագործվել կամ համօգտագործվել հանրային առողջապահական գործունեության համար: Սա կարող է ներառել օգնություն հանրային առողջապահական գործակալություններին կանխելու կամ վերահսկելու հիվանդությունը:

Առողջապահության վերահսկողություն

Ձեր PHI-ը կարող է օգտագործվել կամ համօգտագործվել պետական մարմինների հետ: Նրանց կարող է անհրաժեշտ լինել ձեր PHI-ը՝ ստուգելու, թե ինչպես է մեր առողջապահական ծրագիրը ծառայություններ մատուցում:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Իրավական կամ վարչական վարույթ

Ձեր PHI-ը կարող է համօգտագործվել դատարանի, քննիչի կամ փաստաբանի հետ, եթե խոսքը Medi-Cal-ի շահագործման մասին է: Սա կարող է ներառել խարդախություն կամ ուրիշներից գումար վերադարձնելու գործողություններ, երբ Medi-Cal ծրագիրը տրամադրել է ձեր առողջապահական նպաստները:

Ե՞րբ է Molina-ին անհրաժեշտ Ձեր գրավոր թույլտվությունը (հաստատումը) Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությունը օգտագործելու կամ դրանով կիսվելու համար:

Molina-ն Ձեր գրավոր հաստատման կարիքն ունի՝ օգտագործելու կամ կիսվելու Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությամբ, եթե նպատակը նշված չէ սույն Շանուցման մեջ: Molina-ին անհրաժեշտ է Ձեր թույլտվությունը՝ նախքան Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությունը բացահայտելը հետևյալի դեպքերում. (1) հոգեթերապիայի նշումների օգտագործման և բացահայտումների մեծ մասը, (2) օգտագործում և բացահայտումներ շուկայավարման նպատակներով, և (3) օգտագործում և բացահայտումներ, որոնք ներառում են PHI-ի վաճառք: Դուք կարող եք չեղարկել գրավոր հաստատումը, որը դուք տվել եք մեզ: Ձեր չեղարկումը չի տարածվի մեր կողմից արդեն իսկ կատարված գործողությունների վրա՝ ձեր կողմից մեզ արդեն տրված հաստատման պատճառով:

Որո՞նք են Ձեր իրավունքները՝ կապված բժշկական տեղեկատվության հետ:

Դուք իրավունք ունեք՝

- **Պահանջելու գաղտնի բժշկական տեղեկատվության օգտագործման կամ բացահայտման սահմանափակում (Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությամբ կիսվելը)**

Դուք կարող եք խնդրել մեզ չկիսվել Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությամբ բուժմում, վճարում կամ առողջապահական գործառնություններ իրականացնելու համար:

Դուք կարող եք նաև խնդրել մեզ չհամօգտագործել ձեր PHI-ն ընտանիքի, ընկերների կամ ձեր նշած այլ անձանց հետ, ովքեր ներգրավված են ձեր առողջության պահպանման մեջ: Այնուամենայնիվ, մեզանից չի պահանջվում համաձայնել ձեր խնդրանքին: Դուք պետք է գրավոր ներկայացնեք Ձեր խնդրանքը: Դուք կարող եք օգտվել Molina-ի ձևից Ձեր պահանջը կազմելու համար:

- **Խնդրելու գաղտնի բժշկական տեղեկատվության գաղտնի հաղորդագրություններ**

Դուք կարող եք խնդրել Molina-ին Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությունը Ձեզ տրամադրել որոշակի ձևով կամ որոշակի վայրում, որպեսզի օգնի Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությունը գաղտնի պահելուն: Մենք կհետևենք խելամիտ գաղտնի հաղորդակցության հարցումներին՝ տրամադրելու PHI-ն որոշակի ձևով կամ ձևաչափով, եթե այն հեշտությամբ արտադրվում է պահանջվող ձևով և ձևաչափով կամ այլընտրանքային վայրերում: Դուք պետք է Ձեր հարցումը ներկայացնեք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

▪ Դիտելու և պատճենելու Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությունը

Դուք իրավունք ունեք դիտելու և ստանալու Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվության պատճենը, որը պահվում է մեզ մոտ: Սա կարող է ներառել գրառումներ, որոնք օգտագործվում են որպես Molina-ի անդամ Ձեր ապահովագրության, հայցերի և այլնի վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Դուք պետք է գրավոր ներկայացնեք Ձեր խնդրանքը: Ձեր հարցումը կատարելու համար կարող եք օգտագործել Molina-ի ձևաթուղթը: Մենք կարող ենք ձեզանից խելամիտ վճար գանձել գրառումները պատճենելու և փոստով ուղարկելու համար: Որոշ դեպքերում մենք կարող ենք մերժել հարցումը: *Կարևոր նշում. Մենք չունենք ձեր բժշկական փաստաթղթերի ամբողջական պատճենները: Եթե ցանկանում եք դիտել, ստանալ պատճենը կամ փոխել Ձեր բժշկական գրառումները, դիմեք Ձեր բժշկին կամ կլինիկային:*

▪ Փոփոխելու Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությունը

Դուք կարող եք խնդրել, որ մենք փոփոխենք (փոխենք) Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությունը: Սա վերաբերում է միայն այն գրառումներին, որոնք մենք պահում ենք Ձեր մասին՝ որպես անդամի: Դուք պետք է գրավոր ներկայացնեք Ձեր խնդրանքը: Ձեր հարցումը կատարելու համար կարող եք օգտագործել Molina-ի ձևաթուղթը: Դուք կարող եք նամակ ներկայացնել՝ չհամաձայնելով մեզ հետ, եթե մենք մերժենք Ձեր խնդրանքը:

▪ Ստանալու գաղտնի բժշկական տեղեկատվության բացահայտման դեպքերի մասին հաշվետվություն (Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությամբ կիսվելը)

Դուք կարող եք խնդրել, որ մենք Ձեզ տրամադրենք կոնկրետ կողմերի ցուցակը, որոնց հետ մենք կիսվել ենք Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությամբ Ձեր հարցման օրվան նախորդող վեց տարվա ընթացքում: Ցանկում չի ներառվի այն գաղտնի բժշկական տեղեկատվությունը, որով կիսվել ենք հետևյալ կերպ՝

- բուժմում, վճարմում կամ առողջապահական գործառնություններ իրականացնելու համար,
- անձի սեփական գաղտնի բժշկական տեղեկատվությունը,
- Ձեր թույլտվությամբ տեղեկատվությամբ կիսվելու դեպքերը,
- տեղեկատվության օգտագործման կամ բացահայտման դեպքերը, որոնք թույլատրվում կամ պահանջվում են կիրառելի օրենսդրությամբ,
- այն գաղտնի բժշկական տեղեկատվությունը, որը բացահայտվել է ազգային անվտանգության շահերով կամ հետախուզական նպատակներով, կամ
- որպես սահմանափակ տվյալներ՝ համաձայն գործող օրենսդրության:

Մենք խելամիտ վճար կգանձենք յուրաքանչյուր ցուցակի համար, եթե Դուք խնդրեք այս ցուցակը մեկից ավելի անգամ 12 ամսվա ընթացքում: Դուք պետք է գրավոր ներկայացնեք Ձեր խնդրանքը: Ձեր հարցումը կատարելու համար կարող եք օգտագործել Molina-ի ձևաթուղթը:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Դուք կարող եք կատարել վերը թվարկված ցանկացած հարցում կամ կարող եք ստանալ այս ճանուցման թղթային պատճենը: Խնդրում ենք զանգահարել մեր՝ Անդամների սպասարկման բաժին՝ **1-888-665-4621** հեռախոսահամարով:

Ինչպե՞ս կարող եմ բողոքել:

Եթե կարծում եք, որ մենք չենք պաշտպանել Ձեր գաղտնիությունը և ցանկանում եք բողոքել, կարող եք բողոք (կամ դժգոհություն) ներկայացնել՝ զանգահարելով կամ գրելով մեզ հետևյալ հասցեով՝

Molina Healthcare of California
Manager of Member Services
200 Oceangate - Suite 100
Long Beach, CA 90802
Հեռախոս՝ 1-888-665-4621

ԿԱՍ կարող եք զանգահարել, գրել կամ դիմել ստորև նշված գործակալություններին՝

Privacy Officer
c/o Office of Legal Services
Privacy Officer and Senior Staff Counsel
California Department of Health Care Services
1501 Capitol Avenue
P.O. Box 997413, MS 0010
Sacramento, CA. 95899-7413
(916)440-7700
Էլ.փոստ՝ privacyofficer@dhcs.ca.gov

Կամ

Office for Civil Rights
U.S. Department of Health & Human Services
90 7th Street, Suite 4-100
San Francisco, CA 94103
(800) 368-1019, (800) 537-7697 (TDD),
(202) 619-3818 (Ֆաքս)

Որո՞նք են Molina-ի պարտականությունները

Molina-ից պահանջվում է՝

- Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվությունը գաղտնի պահել,
- Ձեզ տրամադրել գրավոր տեղեկատվություն, ինչպիսին այս ձեռնարկն է, Ձեր գաղտնի բժշկական տեղեկատվության վերաբերյալ մեր պարտականությունների և գաղտնիության քաղաքականության մասին,
- Ձեզ ծանուցում ուղարկել Ձեր չպաշտպանված գաղտնի բժշկական տեղեկատվության ցանկացած խախտման դեպքում:
- Զօգտագործել կամ չիրապարակել Ձեր գենետիկական տեղեկատվությունը անդերրայթինգի նպատակով,
- Հետևել սույն ճանուցման պայմաններին:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Սույն ծանուցումը ենթակա է փոփոխման

Molina-ն իրեն իրավունք է վերապահում ցանկացած ժամանակ փոխելու իր տեղեկատվական քաղաքականությունը և սույն ծանուցման պայմանները: Եթե մենք դա անենք, ապա նոր պայմանները և քաղաքականությունը կկիրառվեն մեր կողմից պահվող ողջ գաղտնի բժշկական տեղեկատվության համար: Եթե մենք որևէ էական փոփոխություն կատարենք, Molina-ն կտեղադրի վերանայված ծանուցումը մեր վեբ կայքում և կուղարկի վերանայված ծանուցումը, ինչպես նաև տեղեկատվություն էական փոփոխությունների և այն մասին, թե ինչպես ստանալ վերանայված ծանուցումը, մեր հերթական տարեկան տեղեկագրում, որն ուղարկվում է Molina-ի՝ տվյալ պահի անդամների:

Կոնտակտային տվյալներ

Հարցերի դեպքում դիմեք հետևյալ գրասենյակ՝

Molina Healthcare of California
Attention: Manager of Member Services
200 Oceangate - Suite 100
Long Beach, CA 90802
Հեռախոսահամար՝ 1-888-665-4621

Ծանուցում օրենքների մասին

Սույն Անդամության ձեռնարկին շատ օրենքներ են վերաբերում: Այդ օրենքները կարող են ազդել Ձեր իրավունքների և պատասխանատվությունների վրա, նույնիսկ եթե այս ձեռնարկն այդ օրենքների վերաբերյալ տեղեկություններ կամ բացատրություններ չի պարունակում: Այս ձեռնարկին վերաբերող հիմնական օրենքներն են Medi-Cal ծրագրի մասին նահանգային և դաշնային օրենքները: Կարող են կիրառվել նաև դաշնային և նահանգային այլ օրենքներ:

Ծանուցում Medi-Cal-ի՝ որպես վերջին ատյանի վճարողի, այլ առողջապահական ապահովագրության և վնասի վերականգնման մասին

Medi-Cal ծրագիրը հետևում է նահանգային և դաշնային օրենքներին և կանոնակարգերին, որոնք վերաբերում են անդամներին առողջապահական ծառայությունների դիմաց երրորդ անձանց իրավական պատասխանատվությունին: Molina Healthcare-ը կձեռնարկի բոլոր ողջամիտ միջոցները՝ ապահովելու, որ Medi-Cal ծրագիրը վերջին ատյանի վճարողն է:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Medi-Cal-ի անդամները կարող են ունենալ այլ առողջապահական ապահովագրություն (OHC), որը նաև կոչվում է մասնավոր առողջապահական ապահովագրություն: Որպես պայման Medi-Cal-ից օգտվելու իրավասության համար՝ Դուք պետք է դիմեք կամ պահպանեք ցանկացած հասանելի OHC, երբ այն անվճար է:

Դաշնային և նահանգային օրենքները Medi-Cal-ի անդամներից պահանջում են գեկուցել OHC-ի և գործող OHC-ի ցանկացած փոփոխության մասին: Ջնարավոր է, որ ստիպված լինեք վերադարձնել DHCS-ին սխալմամբ վճարված որևէ աջակցության համար, եթե արագ չգեկուցեք OHC-ին: Ներկայացրեք Ձեր OHC-ն առցանց՝ հետևյալ հասցեով՝ <http://dhcs.ca.gov/OHC>:

Եթե Դուք ինտերնետ կապի հասանելիություն չունեք, կարող եք OHC-ի մասին հայտնել Molina Healthcare-ին՝ զանգահարելով 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711): Կամ կարող եք զանգահարել DHCS-ի OHC մշակման կենտրոն՝ 1-800-541-5555 (TTY 1-800-430-7077 կամ 711) կամ 1-916-636-1980 հեռախոսահամարներով:

California-ի Առողջապահական ծառայությունների վարչությունը (DHCS) իրավունք և պատասխանատվություն ունի փոխհատուցում ստանալու Medi-Cal-ի ապահովագրված ծառայությունների համար, որոնց համար Medi-Cal-ը առաջին վճարողը չէ: Օրինակ՝ եթե Դուք վնասվածք եք ստացել ավտովթարի կամ աշխատանքի ժամանակ, հնարավոր է՝ մեքենայի կամ աշխատողների փոխհատուցման ապահովագրությունը առաջին վճարողը առաջինը ստիպված լինի վճարել Ձեր բուժօգնության համար կամ հետ վճարել Medi-Cal-ին, եթե վճարի Medi-Cal-ը:

Եթե Դուք տուժել եք, և մեկ այլ կողմ է պատասխանատու Ձեր վնասվածքի համար, Դուք կամ Ձեր օրինական ներկայացուցիչը պետք է DHCS-ին ծանուցեք՝ դատական հայց կամ պահանջ ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում: Ուղարկեք Ձեր ծանուցումն առցանց՝

- Վնասվածքների անձնական ծրագրին՝ <https://dhcs.ca.gov/PIForms>
- Աշխատողների փոխհատուցումների վերականգնման ծրագրին <https://dhcs.ca.gov/WC>

Լրացուցիչ տեղեկությունների համար՝ այցելեք DHCS Երրորդ կողմի պատասխանատվության և փոխհատուցումների վերականգնման բաժնի կայքը <https://dhcs.ca.gov/tplrd> կամ զանգահարել 1-916-445-9891 հեռախոսահամարով:

Ծանուցում գույքի վերականգնման մասին

Medi-Cal ծրագիրը պետք է փոխհատուցում պահանջի որոշ մահացած անդամների գնահատված գույքի հաշվին՝ այն Medi-Cal արտոնությունների համար, որոնք անդամները ստացել են իրենց 55-ամյակի օրը կամ դրանից հետո: Վերադարձի ենթակա գումարը ներառում է վճարովի ծառայության (FFS) և կառավարվող ինսամքի հավելվածարներ կամ կապիտալ վճարումներ մասնագիտացված հաստատության ծառայությունների, տնային և համայնքային ծառայությունների, հարակից հիվանդանոցային և դեղատոմսով նշանակվող դեղերի համար, որոնք անդամը ստացել է մասնագիտացված հաստատությունում ստացիոնար հիվանդի կարգավիճակում գտնվելիս կամ տնային և համայնքային ծառայություններ ստանալիս: Վճարումը չի կարող գերազանցել անդամի գույքի գնահատված արժեքը:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Լրացուցիչ տեղեկությունների համար՝ այցելեք DHCS Գույքի վերականգնման ծրագրի վեբկայքը՝ հետևյալ հասցեով՝ <https://dhcs.ca.gov/er> կամ զանգահարել 1-916-650-0590 հեռախոսահամարով:

Գործողությունների մասին ծանուցում

Molina Healthcare-ը Ձեզ կուղարկի Գործողությունների ծանուցում (NOA) պարունակող նամակ ամեն անգամ, երբ Molina Healthcare-ը մերժի, հետաձգի, դադարեցնի կամ փոփոխի առողջապահական ծառայությունների պահանջը: Եթե համաձայն չեք Molina Healthcare-ի որոշման հետ, միշտ կարող եք բողոքարկել Molina Healthcare-ին: Կարդացեք այս ձեռնարկի 6-րդ գլխի «Բողոքարկումներ» բաժինը՝ Ձեր բողոքարկումը ներկայացնելու վերաբերյալ կարևոր տեղեկատվություն ստանալու համար: Երբ Molina Healthcare-ը Ձեզ ուղարկում է Գործողությունների ծանուցում (NOA), այնտեղ Ձեզ բացատրվում են Ձեր բոլոր իրավունքները, եթե համաձայն չեք մեր կայացրած որոշման հետ:

Ծանուցումների բովանդակությունը

Եթե Molina Healthcare-ը Ձեր ծառայությունների մերժումները, ուշացումները, փոփոխությունները, դադարեցումները, կասեցումները կամ կրճատումները Ձեր հիմնավորում է՝ ամբողջությամբ կամ մասամբ բժշկական անհրաժեշտությամբ, Ձեր NOA-ն պետք է պարունակի հետևյալը՝

- Հայտարարություն այն գործողության մասին, որ Molina Healthcare-ը մտադիր է իրականացնել
- Molina Healthcare-ի որոշման պատճառների պարզ և հակիրճ բացատրություն
- Ինչպես է Molina Healthcare-ը որոշում կայացրել, ներառյալ այն կանոնները, որոնցից օգտվել է Molina Healthcare-ը
- Որոշման բժշկական պատճառները: Molina Healthcare-ը պետք է հստակ նշի, թե ինչպես է Ձեր վիճակը չի համապատասխանում կանոններին կամ ուղեցույցներին:

Թարգմանություններ

Molina Healthcare-ից պահանջվում է անդամների համար ամբողջությամբ թարգմանել տեղեկատվությունը, ներառյալ բոլոր բողոքների և բողոքարկումների մասին ծանուցումները և նրանց ներկայացնել այդ տեղեկատվությունը գրավոր եղանակով՝ հիմնական նախընտրելի լեզուներով:

Ամբողջությամբ թարգմանված ծանուցումը պետք է ներառի Molina Healthcare-ի որոշումը՝ մերժելու, հետաձգելու, փոփոխելու, դադարեցնելու, կասեցնելու կամ նվազեցնելու առողջապահական ծառայությունների հարցում:

Եթե Ձեր նախընտրած լեզվով թարգմանությունը հասանելի չէ, Molina Healthcare-ը պետք է բանավոր օգնություն առաջարկի Ձեր նախընտրած լեզվով, որպեսզի կարողանաք հասկանալ ստացած տեղեկատվությունը:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

8. Կարևոր հեռախոսահամարն եր և բառեր, որ պետք է իմանալ

Կարևոր հեռախոսահամարներ

- Molina Healthcare-ի անդամների ծառայությունների բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD կամ 711)
- Medi-Cal Rx՝ 1-800-977-2273 (TTY 1-800-977-2273) և սեղմեր 7 կամ 711
- Իրավասության մասին տեղեկատվություն՝ 1-800-357-0172
- 24-ժամյա բուժքույրական աջակցության գիծ՝ 1-888-275-8750
- Իսպաներենով խոսող բուժքրոջ Համար՝ 1-866-648-3537
- Հիվանդանոց ընդունելության մասին ծանուցում՝ 1-866-553-9263 (Ֆաքս)
- Health Net անդամների ծառայություններ՝ 1-800-675-6110
- Health Net կայք՝ www.healthnet.com

Բառեր, որ պետք է իմանալ

Ակտիվ ծննդաբերական ցավեր՝ Այն ժամանակահատվածը, երբ հղին գտնվում է ծննդաբերության երրորդ փուլում և չի կարող ապահով տեղափոխվել այլ հիվանդանոց մինչև ծննդաբերությունը, կամ տեղափոխումը կարող է վնասել հղիի կամ չծնված երեխայի առողջությանն ու անվտանգությանը:

Սուր՝ Կարճ, հանկարծակի բժշկական վիճակ, որը պահանջում է արագ բժշկական օգնություն:

Ամերիկյան հնդկացի՝ Անհատ, որը համապատասխանում է «հնդկացիի»՝ դաշնային օրենքի 42 CFR 438.14 բաժնում նշված սահմանմանը: «Հնդկացի» համարվում է այն անձը, որը համապատասխանում է հետևյալ պայմաններից որևէ մեկին՝



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

- Դաշնային մակարդակով ճանաչված հնդկացիական ցեղի անդամ է
- Ապրում է քաղաքային կենտրոնում և համապատասխանում է հետևյալներից մեկին կամ մի քանիսին.
 - Հնդկացիների ցեղի, խմբի կամ այլ կազմակերպված խմբի անդամ է, ներառյալ այն ցեղերը, խմբավորումները կամ խմբերը, որոնք գործունեությունը դադարեցվել է 1940 թվականից, և նրանք, որոնք այս պահին ճանաչված են կամ ապագայում կճանաչվեն այն նահանգի կողմից, որտեղ նրանք բնակվում են, կամ անձինք, ովքեր առաջին կամ երկրորդ աստիճանի հետևորդն են այդպիսի որևէ անդամի
 - Եսկիմոս է, ալեուտ կամ Ալյասկայի այլ բնիկ
 - Ներքին գործերի նախարարի կողմից համարվում է հնդկացի ցանկացած նպատակով
 - Համարվել է հնդկացի՝ ըստ ներքին գործերի քարտուղարի կողմից տրված կանոնակարգի
- Ներքին գործերի նախարարի կողմից համարվում է հնդկացի ցանկացած նպատակով
- Առողջապահության և մարդկային ծառայությունների քարտուղարի կողմից համարվում է հնդկացի՝ հնդկացիական առողջապահական ծառայություններից օգտվելու իրավասություն ունենալու համար, այդ թվում՝ որպես Կալիֆոռնիայի հնդկացի, Եսկիմոս, ալեուտ կամ Ալյասկայի այլ բնիկ

Բողոքարկում՝ Անդամի հայցը Molina Healthcare-ին՝ վերանայելու և փոփոխելու հայցվող ծառայության ապահովագրության վերաբերյալ կայացված որոշումը:

Արտոնություններ՝ Առողջապահական ծառայություններ և դեղեր, որոնք ծածկվում են այս առողջապահական պլանի շրջանակներում,

Californiaյի մանկական ծառայություններ (CCS)՝ Medi-Cal ծրագիր, որը ծառայություններ է տրամադրում մինչև 21 տարեկան երեխաներին, ովքեր ունեն որոշակի առողջական խնդիրներ, հիվանդություններ կամ քրոնիկական առողջական խնդիրներ:

Գործի կառավարիչ՝ Գրանցված բուժքույր, արտոնագրված մասնագիտացված բուժքույր/լիցենզավորված պրակտիկ բուժքույր, սոցիալական աշխատող կամ որակավորված մեկ այլ առողջապահական մասնագետ, որը կարող է օգնել անդամին հասկանալ հիմնական առողջական խնդիրները և կազմակերպել խնամք անդամի մատակարարների հետ:

Արտոնագրված բուժքույր-մանկաբարձ (CNM)՝ Անձը, որը լիցենզավորված է որպես գրանցված բուժքույր և վկայագրված է որպես բուժքույր մանկաբարձուհի Californiaյի գրանցված բուժքույրական խորհրդի կողմից: Արտոնագրված բուժքույր մանկաբարձին թույլատրվում է ներկա լինել ծննդաբերության սորմալ դեպքերին:

Կիրոպրակտոր՝ Մատակարար, որը բուժում է ողնաշարը ձեռքով մանիպուլյացիայի միջոցով:

Քրոնիկ խնդիր՝ Հիվանդություն կամ այլ բժշկական խնդիր, որը հնարավոր չէ ամբողջությամբ բուժել, որը վատանում է ժամանակի ընթացքում, կամ որը պետք է բուժվի, որպեսզի անդամի վիճակը չվատթարանա:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել Californiaյի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Կլինիկա՝ Հաստատություն, որը անդամները կարող են ընտրել որպես առաջնային ինսամբի մատակարար (PCP): Այն կարող է լինել կամ դաշնային մակարդակով որակավորված առողջապահական կենտրոն (FQHC), համայնքային կլինիկա, գյուղական առողջապահական կլինիկա (RHC), հնդկացիական առողջապահական մատակարար (IHCP) կամ առաջնային ինսամբի այլ հաստատություն:

Համայնքային ծառայություններ չափահասների համար (CBAS) Ամբուլատոր, ստացիոնար մասնագիտացված ինսամբի ծառայություններ, սոցիալական ծառայություններ, թերապիա, անձնական ինսամբ, ընտանիքի անդամների և ինսամակալների ուսուցում և աջակցություն, սննդի ծառայություններ, փոխադրման և այլ ծառայություններ իրավասու անդամների համար:

Բողոք՝ Անդամի բանավոր կամ գրավոր դժգոհությունը Medi-Cal-ի, Molina Healthcare-ի, շրջանի հոգեկան առողջության ծրագրի կամ Medi-Cal-ի մատակարարի վերաբերյալ: Բողոքը նույնն է, ինչ դժգոհությունը:

Ինսամբի շարունակականություն՝ Ծրագրի անդամի հնարավորությունը՝ շարունակելու Medi-Cal ծառայություններ ստանալ ցանցում չներառված իր գործող մատակարարի կողմից մինչև 12 ամիս, եթե մատակարարը և Molina Healthcare-ը համաձայնեն:

Պայմանագրով սահմանված դեղացանկ (CDL)՝ Medi-Cal Rx-ի հաստատված դեղացանկը, որում ներառված ծածկվող դեղերը մատակարարը կարող է պատվիրել՝ ըստ անդամի կարիքների:

Արտոնությունների համակարգում (COB)՝ Գործընթաց, որով որոշվում է, թե որ ապահովագրական ծածկույթն (Medi-Cal, Medicare, առևտրային ապահովագրություն կամ այլ) ունի առաջնային բուժման և վճարման պարտականություններ մեկից ավելի առողջության ապահովագրության ծածկույթ ունեցող անդամների համար:

Համավճարում (համավճար)՝ Վճարում, որն անդամը կատարում է, սովորաբար ծառայության պահին, ի լրումն ապահովագրողի վճարմանը:

Ապահովագրված ծառայություններ՝ Medi-Cal ծառայություններ, որոնց վճարման համար պատասխանատու է Molina Healthcare-ը: Ապահովագրված ծառայությունները կարգավորվում են Medi-Cal պայմանագրի պայմաններով, կանոններով, սահմանափակումներով և բացառություններով, պայմանագրի ցանկացած փոփոխությամբ, ինչպես նա ինչպես նշված է այս Անդամների ձեռնարկում (նաև հայտնի է որպես Ծածկույթի ապացույցի համակցված ձև (EOC) և Տեղեկատվության բացահայտման ձև):

DHCS՝ California-ի առողջապահական ծառայությունների վարչություն՝ Սա այն նահանգային գրասենյակն է, որը վերահսկում է Medi-Cal ծրագիրը:

Գրանցումից դուրս գալ՝ Դադարեցնել առողջապահական պլանի օգտագործումը, քանի որ անդամն այլևս չի իրավասու չէ կամ անցնում է առողջապահական նոր պլանի: Անդամը պետք է ստորագրի ձևաթուղթ, որտեղ ասվում է, որ նա այլևս չի ցանկանում օգտվել առողջապահական պլանից, կամ պետք է զանգահարել «Health Care Options»՝ և գրանցումից դուրս գալ հեռախոսազանգի միջոցով:



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

DMHC` Californiaյի Կառավարվող առողջապահության վարչությունը: Սա այն նահանգային գրասենյակն է, որը վերահսկում է կառավարվող ինսամքի առողջապահական պլանները:

Երկարաժամկետ օգտագործման բժշկական սարքավորումներ (DME)` Բժշկական սարքավորումներ, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և պատվիրվել են անդամի բժշկի կամ այլ մատակարարի կողմից, որն անդամն օգտագործում է տանը, համայնքում կամ որպես տուն ծառայող հաստատությունում:

Վաղ և պարբերական զննում, ախտորոշում և բուժում (EPSDT)` Տես «Medi-Cal երեխաների և դեռահասների համար»:

Անհետաձգելի բուժօգնություն` Բժշկի կամ անձնակազմի կողմից օրենքով թույլատրելի հետազոտություն, որն իրականացվում է բժշկի հսկողության ներքո՝ պարզելու համար, թե արդյոք առկա է անհետաձգելի առողջական խնդիր: Բժշկական ծառայություններ, որոնք անհրաժեշտ են Ձեր կայուն վիճակը բժշկական հաստատության հնարավորությունների շրջանակում ապահովելու համար:

Անհետաձգելի բժշկական վիճակ` Բժշկական կամ հոգեկան վիճակ այնպիսի ծանր ախտանիշներով, ինչպիսիք են սկսվող ծննդաբերությունը (կարդացեք վերը նշված սահմանումը) կամ ուժեղ ցավը, որը, անհապաղ բուժօգնություն չցուցաբերելու դեպքում առողջության և բժշկության մասին միջին գիտելիքներ ունեցող սովորական խելամիտ մարդու կարծիքով, կարող է՝

- Անձի կամ չճնված երեխայի առողջությունը լուրջ վտանգի տակ դնել
- Մարմնի ֆունկցիայի խանգարում առաջացնել
- Մարմնի մասի կամ օրգանի ոչ ճիշտ աշխատանքի պատճառ դառնալ
- Հանգեցնել մահվան

Անհետաձգելի բժշկական փոխադրում` Շտապօգնության մեքենայով կամ արտակարգ իրավիճակներում օգտագործվող մեքենայով փոխադրում շտապ օգնության սենյակ՝ շտապ բժշկական օգնություն ստանալու համար:

Գրանցված անձ` Անձ, որը առողջապահական պլանի անդամ է և ծառայություններ է ստանում պլանի միջոցով:

Հաստատված հիվանդ` Հիվանդ, որը կապ ունի մատակարարի հետ և գնացել է տվյալ մատակարարի մոտ առողջապահական պլանով սահմանված ժամկետում:

Փորձարարական բուժում` Դեղորայք, սարքավորումներ, պրոցեդուրաներ կամ ծառայություններ, որոնք գտնվում են փորձարկման փուլում՝ լաբորատոր կամ կենդանիների վրա արվող հետազոտություններով՝ նախքան մարդկանց վրա փորձարկումը: Փորձարարական ծառայությունները կլինիկական հետազոտություն չեն անցնում:

Ընտանիքի պլանավորման ծառայություններ` Հղիության կանխարգելման կամ հետաձգման ծառայություններ: Ծառայությունները տրամադրվում են վերարտադրողական տարիքի անդամներին, որպեսզի նրանք կարողանան որոշել երեխաների թիվը և նրանց միջև տարիքային տարբերությունը:

Դաշնային մակարդակով որակավորում ունեցող առողջության կենտրոն (FQHC)` Առողջապահական կենտրոն մի տարածքում, որտեղ չկան



Ձանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Ձանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել Californiaյի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

մատակարարներ: Անդամը կարող է առաջնային և կանխարգելիչ խնամք ստանալ FQHC-ում:

Medi-Cal վճարովի ծառայություն (FFS)՝ Երբեմն Molina Healthcare-ը չի ծածկում ծառայությունները, սակայն անդամը, այնուամենայնիվ, կարող է դրանք ստանալ FFS Medi-Cal-ի միջոցով, ինչպես օրինակ՝ դեղատների բազմաթիվ ծառայություններ Medi-Cal Rx-ի միջոցով:

Հետագա խնամք՝ Բժշկի կողմից կանոնավոր բուժօգնություն՝ անդամի առաջընթացը հոսափտալացումից հետո կամ բուժման կուրսի ընթացքում ստուգելու համար:

Խարդախություն՝ Խաբեության կամ խարդախության մասին իմացող անձի կողմից դիտավորյալ գործողությունը կարող է հանգեցնել որևէ չթույլատրված արտոնություն տվյալ անձի կամ մեկ ուրիշի համար:

Անկախ ծննդյան կենտրոններ (FBC)՝ Առողջապահական հաստատություններ, որտեղ ծննդաբերությունը պլանավորվում է հղի անդամի բնակության վայրից հեռու, և որոնք լիցենզավորված կամ այլ կերպ հաստատված են նահանգի կողմից՝ նախաձեռնության, ծննդաբերության կամ հետծննդյան փուլերում բուժօգնության և այլ ամբուլատոր ծառայություններ մատուցելու համար, որոնք ներառված են պլանում: Այս հաստատությունները հիվանդանոցներ չեն:

Բողոք՝ Անդամի բանավոր կամ գրավոր դժգոհությունը Medi-Cal-ի, Molina Healthcare-ի, շրջանի հոգեկան առողջության ծրագրի կամ Medi-Cal-ի մատակարարի վերաբերյալ: Բողոքի օրինակ է Molina Healthcare-ին ցանցում ներառված մատակարարի մասին բողոքը:

Արիվտացիոն ծառայություններ և սարքեր՝ Առողջապահական ծառայություններ, որոնք օգնում են անդամին պահպանել, սովորել կամ բարելավել հմտությունները և գործել առօրյա կյանքում:

Առողջապահական խնամքի տարբերակներ (HCO)՝ Ծրագիր, որը կարող է առողջապահական պլանում անդամագրել կամ անդամությունից հեռացնել:

Բժշկական ապահովագրություն՝ Ապահովագրական ծածկույթը, որը վճարում է բժշկական և վիրաբուժական ծախսերը՝ հիվանդության կամ վնասվածքների փոխհատուցվող ծախսերը մարելու կամ ուղղակիորեն բժշկական օգնության մատակարարին վճարելու միջոցով:

Տնային առողջության խնամք՝ Մասնագիտացված խնամք և այլ ծառայություններ, որոնք տրամադրվում են տանը:

Տնային առողջապահական ծառայությունների մատակարարներ՝ Մատակարարներ, որոնք անդամներին տրամադրում են որակավորված մասնագիտացված խնամք և այլ ծառայություններ տանը:

Հոսփոսային խնամք՝ Խնամք՝ նվազեցնելու ֆիզիկական, Էմոցիոնալ, սոցիալական և հոգևոր անհարմարությունները մահացու հիվանդություն ունեցող անդամի համար: Հոսփոսային խնամքը հասանելի է, երբ անդամի կյանքի տևողությունը 6 ամիս է կամ ավելի քիչ:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Հիվանդանոց` Վայր, որտեղ անդամը ստանում է ստացիոնար և ամբուլատոր օգնություն բժշկների և բուժքույրերի կողմից:

Հիվանդանոցային ամբուլատոր խնամք` Բժշկական կամ վիրաբուժական բուժօգնություն, որը կատարվում է հիվանդանոցում առանց որպես ստացիոնար հիվանդ ընդունվելու:

Հոսպիտալացում` Ընդունելություն հիվանդանոց` որպես ստացիոնար հիվանդ բուժման նպատակով:

Հնդկական առողջապահական ծառայություններ մատուցողներ (IHCP)` Առողջապահական ծրագիր, որը գործում է Հնդկացիական առողջապահական ծառայության (IHS), Հնդկացիական ցեղի, Առողջության ցեղային ծրագրի, Ցեղային կազմակերպության կամ Զաղաքային հնդկացիական կազմակերպության (UIO) կողմից, ինչպես այդ տերմինները սահմանված են Հնդկացիական առողջապահության բարելավման ակտի 4-րդ բաժնում (25 U.S.C. բաժին 1603):

Ստացիոնար խնամք` Երբ անձը պետք է գիշերը մնա հիվանդանոցում կամ այլ վայրում` անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու համար:

Միջանկյալ խնամքի հաստատություն կամ տուն` Խնամքը տրամադրվում է երկարաժամկետ խնամքի հաստատությունում կամ տանը, որը տրամադրվում է շուրջօրյա ծառայություններ` բնակության հնարավորությամբ: Միջանկյալ խնամքի հաստատությունների կամ տների տեսակները ներառում են` միջանկյալ խնամքի հաստատություններ/գարգացման խանգարումներով անձանց համար(ICF/DD), միջանկյալ խնամքի հաստատություններ/գարգացման խանգարումներով անձանց համար` աբիլիտատիվ (ICF/DD-H) և միջանկյալ խնամքի հաստատություններ/գարգացման խանգարումներով անձանց համար` մասնագիտացված (ICF/DD-N):

Հետազոտական բուժում` Բուժման դեղամիջոց, կենսաբանական արտադրանք կամ սարքավորում, որը հաջողությամբ ավարտել է կլինիկական հետազոտության առաջին փուլը, հաստատվել է Դեղորոշայքի դաշնային գործակալության (FDA) կողմից, սակայն որը հաստատված չէ FDA-ի կողմից ընդհանուր օգտագործման համար և մնում է FDA-ի կողմից հաստատված հետազոտության փուլի կլինիկական հետազոտության մեջ:

Երկարաժամկետ խնամք` Խնամք հաստատությունում, որը տևում է ընդունելության ամսից ավելի երկար` գումարած 1 ամիս:

Կառավարվող խնամքի պլան` Medi-Cal առողջապահական պլան, որի շրջանակում կարելի է օգտվել միայն կոնկրետ բժիշկների, մասնագետների, կլինիկաների, դեղատների և հիվանդանոցների ծառայություններից, որոնք ներառված են այդ պլանում Medi-Cal անդամների համար: Molina Healthcare-ը կառավարվող խնամքի պլան է:

Medi-Cal երեխաների և դեռահասների համար` Medi-Cal-ի արտոնություն` 21 տարեկանից ցածր տարիքի անդամների համար` օգնելու նրանց առողջ մնալ: Անդամները պետք է անցնեն իրենց տարիքին համապատասխան ճիշտ բժշկական զննություն և համապատասխան սքրինինգային ստուգումներ` հայտնաբերելու առողջական խնդիրները և բուժելու հիվանդությունը վաղ փուլում: Նրանք պետք է



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին` 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ` ժամը 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց` հետևյալ հասցեով` www.MolinaHealthcare.com:

բուժում անցնեն՝ բուժելու կամ թերևս ցանցելու այն խնդիրները, որոնք կարող են հայտնաբերվել ստուգումների ժամանակ: Այս արտոնությունը հայտնի է նաև որպես վաղ և պարբերական գնման, ախտորոշման և բուժման (EPSDT) արտոնություն, որը տրամադրվում է դաշնային օրենքով:

Medi-Cal Rx՝ Դեղատնային արտոնությունների ծառայություն, որը FFS Medi-Cal-ի մի մասն է և հայտնի է որպես «Medi-Cal Rx»: Այն տրամադրում է դեղատնային արտոնություններ և ծառայություններ, ներառյալ դեղատոմսով դեղեր և որոշ բժշկական պարագաներ Medi-Cal-ի բոլոր շահառուներին:

Բժշկական տուն՝ Խնամքի մոդել, որն ապահովում է առաջնային բուժօգնության հիմնական գործառնությունները: Սա ներառում է համապարփակ խնամք, հիվանդակենտրոն, համակարգված խնամք, մատչելի ծառայություններ, ինչպես նաև որակ ու անվտանգություն:

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտություն (կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ միջոց)՝ Բժշկական առումով անհրաժեշտ ծառայությունները կարևոր ծառայություններ են, որոնք համարվում են ողջամիտ և պաշտպանում են կյանքը: Խնամքը անհրաժեշտ է հիվանդներին լուրջ հիվանդությունից կամ հաշմանդամությունից գերծ պահելու համար: Այս խնամքը նվազեցնում է սաստիկ ցավը՝ հիվանդությունը, խնդիրը կամ վնասվածքը ախտորոշելու կամ բուժելու միջոցով: 21 տարեկանից ցածր տարիքի անդամների համար Medi-Cal-ի՝ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ներառում են խնամք, որն անհրաժեշտ է ֆիզիկական կամ հոգեկան հիվանդության կամ խնդրի, ներառյալ թմրամիջոցների օգտագործման խանգարումները շտկելու կամ թերևս ցանցելու համար:

Բժշկական փոխադրում՝ Փոխադրում, որը մատակարարը նշանակում է անդամի համար, երբ անդամը ֆիզիկապես կամ բժշկական առումով ի վիճակի չէ օգտվել մեքենայից, ավտոբուսից, գնացքից կամ տաքսիից՝ ծածկվող բժշկական այցի վայր հասնելու կամ դեղատոմսեր վերցնելու համար: Molina Healthcare-ը վճարում է Ձեր բժշկական կարիքների համար ամենաեժան տրանսպորտի համար, երբ Ձեզ անհրաժեշտ է ուղևորություն դեպի Ձեր տեսակցությունը:

Medicare՝ Դաշնային առողջապահական ապահովագրության ծրագիր 65 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց, հաշմանդամություն ունեցող որոշ երիտասարդների և երիկամային անբավարարության վերջին փուլում գտնվող մարդկանց համար (երիկամների մշտական անբավարարություն, որի դեպքում պահանջվում է դիալիզ կամ փոխպատվաստում, որը երբեմն կոչվում է երիկամային անբավարարության մահացու փուլ (ESRD)):

Անդամ՝ Medi-Cal-ի ցանկացած իրավասու անդամ, որը գրանցված է Molina Healthcare-ում և իրավունք ունի ստանալ ապահովագրված ծառայություններ:

Հոգեկան առողջության ծառայությունների մատակարար՝ Առողջապահության ոլորտի մասնագետներ, ովքեր հիվանդներին մատուցում են հոգեկան առողջության և վարքագծային առողջության ծառայություններ:

Սանկաբարձական ծառայություններ՝ Նախածննդյան, ծննդյան և հետծննդյան փուլերի խնամք, ներառյալ մոր համար ընտանիքի պլանավորման ծառայությունները և նորածնի անհետաձգելի բուժօգնությունը, որոնք տրամադրվում են



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

հավաստագրված բուժքույր-մանկաբարձների (CNM) և լիցենզավորված մանկաբարձների (LM) կողմից:

Ցանց՝ Բժիշկների, կլինիկաների, հիվանդանոցների և այլ մատակարարների մի խումբ, որը պայմանագիր է կնքել Molina Healthcare-ի հետ՝ բուժօգնություն մատուցելու համար:

Ցանցային մատակարար (կամ ներցանցային մատակարար)՝ Տես «Մասնակից մատակարար»:

Չապահովագրված ծառայություն՝ Ծառայություն, որը Molina Healthcare-ը չի ծածկում:

Ոչ բժշկական փոխադրում՝ Փոխադրման ծառայություններ՝ մատակարարի կողմից լիազորված Medi-Cal ապահովագրված ծառայության այցի վայր գնալու և վերադառնալու, ինչպես նաև դեղատոմսեր և բժշկական պարագաներ վերցնելու համար:

Չանդամակցող մատակարար՝ Մատակարար, որը Molina Healthcare-ի ցանցում ներառված չէ:

Այլ բժշկական ապահովագրություն (OHC)՝ Այլ բժշկական ապահովագրությունը (OHC) վերաբերում է մասնավոր բժշկական ապահովագրությանը և ծառայությունների համար վճարողներին, որոնք Medi-Cal-ի հետ կապ չունեն: Ծառայությունները կարող են ներառել բժշկական, ատամնաբուժական, օֆտալմոլոգիական, դեղագործական, Medicare Advantage պլաններ (Մաս C), Medicare դեղերի պլաններ (Մաս D) կամ Medicare-ի լրացուցիչ պլաններ (Medigap):

Օրթոսիկ սարքավորում՝ Սարքավորում, որն օգտագործվում է որպես հենարան կամ ֆիքսատոր, որն ամրացվում է մարմնից դուրս՝ աջակցելու կամ ուղղելու մարմնի լուրջ վիրավորված կամ հիվանդ հատվածը, և որը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է անդամի առողջության վերականգնման համար:

Տարածքից դուրս ծառայություններ՝ Ծառայություններ, երբ անդամը գտնվում է ցանկացած վայրում, որը Molina Healthcare-ի սպասարկման տարածքից դուրս է:

Ցանցում չներառված մատակարար՝ Մատակարար, որը մաս չի կազմում Molina Healthcare ցանցի:

Ամբուլատոր խնամք՝ Երբ անդամը ստիպված չէ գիշերել հիվանդանոցում կամ այլ վայրում՝ անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու համար:

Ամբուլատոր հոգեբուժական ծառայություններ՝ Ամբուլատոր ծառայություններ թեթև և միջին աստիճանի հոգեկան խանգարումներ ունեցող անդամների համար, ներառյալ՝

- Հոգեկան առողջության անհատական կամ խմբակային գնահատում և բուժում (հոգեթերապիա)
- Հոգեբանական թեստավորում, երբ կլինիկորեն հաստատվել է հոգեկան առողջության վիճակը գնահատելու կարիքը
- Ամբուլատոր ծառայություններ՝ դեղորայքային թերապիայի մշտադիտարկման նպատակով
- Հոգեբույժի խորհրդատվություն



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711): Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00: Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

- Ամբուլատոր լաբորատորիա, պարագաներ և հավելումներ

Պալիատիվ խնամք՝ խնամք՝ նվազեցնելու ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհարմարությունները լուրջ հիվանդություն ունեցող անձի համար:
 Պալիատիվ խնամք ստանալու համար պարտադիր չէ, որ անդամի կյանքին 6 ամիս կամ ավելի քիչ ժամանակ մնա:

Մասնակից հիվանդանոց՝ Լիցենզավորված հիվանդանոց, որը պայմանագիր ունի Molina Healthcare-ի հետ՝ անդամներին ծառայություններ մատուցելու այն ընթացքում, երբ նրանք բուժօգնություն են ստանում: Ապահովագրված ծառայություններ, որոնք որոշ մասնակից հիվանդանոցներ կարող են առաջարկել անդամներին, սահմանափակված են Molina Healthcare-ի օգտագործման պայմանների վերանայման և որակի ապահովման քաղաքականությունը կամ Molina Healthcare-ի պայմանագիրը հիվանդանոցի հետ:

Մասնակից մատակարար (կամ մասնակից բժիշկ)՝ Բժիշկ, հիվանդանոց կամ լիցենզավորված առողջապահական այլ մասնագետ կամ լիցենզավորված առողջապահական հաստատություն, ներառյալ ենթասուբ հաստատությունները, որոնք պայմանագիր ունեն Molina Healthcare-ի հետ՝ անդամներին ապահովագրված ծառայություններ առաջարկելու այն ընթացքում, երբ անդամը խնամք է ստանում:

Բժշկի ծառայություններ՝ Բժշկությամբ կամ օստեոպաթիայով զբաղվելու համար նահանգային օրենքով լիցենզավորված անձի կողմից մատուցվող ծառայությունները, չներառյալ բժիշկների կողմից առաջարկվող ծառայությունները, երբ անդամը ընդունվում է հիվանդանոցում, որոնց համար գումար է գանձվում հիվանդանոցի ներկայացրած հաշիվ-ապարանքագրով:

Պլան՝ Տե՛ս «Կառավարվող բուժօգնության պլան»:

Վիճակի կայունացումից հետո մատուցվող ծառայություններ՝ Շտապ առողջական խնդրի հետ կապված ապահովագրված ծառայություններ, որոնք տրամադրվում են անդամի վիճակի կայունացումից հետո՝ կայուն վիճակը պահելու համար: Վիճակի կայունացումից հետո մատուցվող խնամքի ծառայությունները ծածկվում են և վճարվում են: Ցանցում չներառված հիվանդանոցներին կարող է անհրաժեշտ լինել նախնական հաստատում (նախնական թույլտվություն):

Նախնական հաստատում (նախնական թույլտվություն)՝ Գործընթացը, որով անդամը կամ նրա մատակարարը պետք է հաստատում խնդրի Molina Healthcare-ից որոշակի ծառայությունների համար՝ համոզվելու համար, որ Molina Healthcare-ը ծածկում է դրանք: Ուղեգիրը հաստատում չէ: Նախնական հաստատումը նույնն է, ինչ նախնական թույլտվությունը:

Դեղատոմսով դեղերի ծածկույթ՝ Մատակարարի կողմից դուրս գրված դեղամիջոցների գումարի փոխհատուցում:

Դեղատոմսով դեղեր՝ Դեղ, որի համար օրինականորեն պահանջվում է հրաման լիցենզավորված մատակարարի կողմից՝ ի տարբերություն առանց դեղատոմսի նշանակվող («OTC») դեղերի:

Առաջնային խնամք՝ Տե՛ս «Ընթացիկ բուժօգնություն»:

Առաջնային խնամքի մատակարար (PCP)՝ Լիցենզավորված մատակարարը, որն



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
 Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
 Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
 համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

ապահովում է անդամի բժշկական խնամքի մեծ մասը: Առաջնային խնամքի մատակարարն օգնում է անդամին ստանալ իրեն անհրաժեշտ խնամքը:

Առաջնային խնամքի մատակարարը կարող է լինել՝

- Ընդհանուր բժիշկ
- Թերապևտ
- Մանկաբույժ
- Ընտանեկան բժիշկ
- Մանկաբարձ/գինեկոլոգ
- Հնդկացիական առողջապահական մատակարար (IHCP)
- Դաշնային մակարդակով որակավորված առողջության կենտրոն (FQHC)
- Գյուղական առողջապահական կլինիկա (RHC)
- Բուժքույր
- Բժշկի օգնական
- Կլինիկա՝

Նախնական թույլտվությունն (նախնական հաստատում)՝ Այն գործընթացն է, որով անդամը կամ նրա մատակարարը հաստատում է պահանջում Molina Healthcare-ից որոշակի ծառայությունների համար՝ ապահովելու համար, որ Molina Healthcare-ը ծածկի դրանք: Ուղեգիրը հաստատում չէ: Նախնական թույլտվությունը նույնն է, ինչ նախնական հաստատումը:

Պրոթեզային սարք՝ Արհեստական սարք, որը կցվում է մարմնին՝ փոխարինելու մարմնի բացակայող մասին:

Մատակարարների տեղեկատու՝ Molina Healthcare-ի ցանցում ներառված մատակարարների ցանկը:

Անհետաձգելի հոգեբուժական խնդիր՝ Հոգեկան խանգարում, որի ախտանիշներն այնքան լուրջ են կամ ծանր, որ կարող են անմիջական վտանգ ներկայացնել անձին կամ այլ անձանց, կամ անձը չի կարող իրեն ապահովել կամ օգտվել սնունդից, կացարանից կամ հագուստից հոգեկան խանգարման պատճառով:

Հանրային առողջապահական ծառայություններ՝ Առողջապահական ծառայություններ՝ ուղղված ողջ բնակչությանը: Դրանք ներառում են, մասնավորապես՝ առողջապահության ոլորտի իրավիճակի վերլուծություն, առողջության հսկողություն, առողջության ամրապնդում, կանխարգելիչ ծառայություններ, վարակիչ հիվանդությունների դեմ պայքար, շրջակա միջավայրի և մաքրության պաշտպանություն, տարերային աղետներին պատրաստվածություն և դրանց արձագանքում, ինչպես նաև օկուպացիոն առողջություն:

Որակավորված մատակարար՝ Բժիշկ, որը որակավորված է պրակտիկայի ոլորտում և համապատասխանում է՝ անդամի վիճակը բուժելու համար:

Վերականգնողական վիրաբուժություն՝ Վիրահատություններ, որոնք նշանակված են շտկելու կամ վերականգնելու մարմնի ոչ նորմալ հատվածները՝ հնարավորինս բարելավելու կամ ստեղծելու նորմալ արտաքին տեսք: Մարմնի ոչ նորմալ կառուցվածքներն առաջանում են բնածին արատների, զարգացման անոմալիաների, վնասվածքների, վարակների, ուռուցքների կամ հիվանդությունների հետևանքով:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Ուղեգրում՝ Երբ անդամի առաջնային խնամքի մատակարարն ասում է, որ անդամը կարող է խնամք ստանալ մեկ այլ մատակարարի կողմից: Որոշ ապահովագրված ծառայությունների համար պահանջվում է ուղեգիր և նախնական հաստատում (նախնական թույլտվություն):

Վերականգնողական և հետվերականգնողական թերապիայի ծառայություններ և սարքավորումներ՝ Ծառայություններ և սարքավորումներ, որոնք օգնում են վնասվածքներ, հաշմանդամություն կամ քրոնիկական խնդիրներ ունեցող անձանց ձեռք բերել կամ վերականգնել մտավոր և ֆիզիկական հմտությունները:

Ընթացիկ բուժօգնություն՝ Բժշկական առումով անհրաժեշտ ծառայություններ և կանխարգելիչ բուժօգնություն, երեխաների պրոֆիլակտիկ այցեր կամ բուժօգնություն, ինչպիսին է ընթացիկ խնամքը: Ընթացիկ բուժօգնության նպատակն է կանխել առողջական խնդիրները:

Գյուղական առողջապահական կլինիկա (RHC)՝ Առողջապահական կենտրոն մի տարածքում, որտեղ չկան մատակարարներ: Անդամները կարող են առաջնային և կանխարգելիչ խնամք ստանալ առողջության գյուղական կլինիկաներում:

Զգայուն ծառայություններ՝ Հոգեկան կամ վարքային առողջության, սեռական և վերարտադրողական առողջության, ընտանիքի պլանավորման, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (STI), HIV/AIDS-ի, սեռական ոտնձգությունների և աբորտների, թմրամիջոցների օգտագործման խանգարման, սեռը հաստատող խնամքի և ինտիմ զուգընկերոջ կողմից բռնության հետ կապված ծառայություններ:

Լուրջ հիվանդություն՝ Հիվանդություն կամ վիճակ, որը պետք է բուժվի, հակառակ դեպքում կարող է հանգեցնել մահվան:

Սպասարկման տարածք՝ Այն աշխարհագրական տարածքը, որտեղ Molina Healthcare-ը ծառայություններ է մատուցում: Այն ներառում է Լոս Անջելեսի շրջանը:

Մասնագիտացված խնամք՝ Ապահովագրված ծառայություններ, որոնք տրամադրվում են անձին լիցենզավորված բուժքույրերի, տեխնիկների կամ թերապևտների կողմից խնամքի մասնագիտացված հաստատությունում կամ տանը գտնվելու ընթացքում:

Խնամքի մասնագիտացված հաստատություն՝ Վայր, որտեղ տրամադրվում է շուրջօրյա մասնագիտացված խնամք, որը կարող են մատուցել միայն վերապատրաստված առողջապահական մասնագետները:

Մասնագետ (կամ մասնագիտացված բժիշկ)՝ Բժիշկ, որը բուժում է կոնկրետ տեսակի առողջական խնդիրներ: Օրինակ՝ օրթոպեդ վիրաբույժը զբաղվում է կոտրված ոսկորներով, ալերգոլոգը զբաղվում է ալերգիաներով, իսկ սրտաբանը բուժում է սրտի խնդիրները: Շատ դեպքերում անդամին անհրաժեշտ կլինի ուղեգիր իր առաջնային խնամքի մատակարարի կողմից՝ մասնագետի մոտ գնալու համար:

Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ (SMHS)՝ Ծառայություններ թույլից մինչև միջին աստիճանից բարձր աստիճանի հոգեկան խանգարումներ ունեցող անդամների համար, ովքեր ունեն հոգեկան առողջության ծառայությունների կարիք:



Զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Զանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:

Ենթասուր ինսամքի հաստատություն (մեծահասակների կամ մանկական)

Երկարաժամկետ ինսամքի հաստատություն, որն ապահովում է համապարփակ ինսամք բժշկական առումով զգայուն անդամների համար, ովքեր հատուկ ծառայությունների կարիք ունեն, ինչպիսիք են ինհալացիոն թերապիան, տրախեոտոմիայի ինսամքը, ներերակային խողովակով կերակրումը և վերքերի բուժման բարդ ինսամքը:

Մահացու հիվանդություն՝ Բժշկական վիճակ, որը հնարավոր չէ շտկել և, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի մահվան 1 տարվա ընթացքում կամ ավելի վաղ, եթե հիվանդությունը զարգանա իր բնական ընթացքով:

Վնասի վերականգնում՝ Երբ արտոնություններ են տրամադրվում կամ տրամադրվելու են Medi-Cal-ի անդամին այնպիսի վնասվածքի պատճառով, որի համար պատասխանատու է մեկ այլ կողմ, DHCS-ը վերականգնում է այդ վնասվածքի համար անդամին տրամադրված արտոնության ողջամիտ արժեքը:

Տրիաժ (կամ սքրինինգ)՝ Անդամի առողջության գնահատումը բժշկի կամ բուժքրոջ կողմից, որը վերապատրաստված է սքրինինգի համար՝ որոշելու բուժօգնության անհրաժեշտության հրատապությունը:

Շտապ օգնություն (կամ շտապ ծառայություններ)՝ Ծառայություններ, որոնք մատուցվում են բուժօգնություն պահանջող ոչ անհետաձգելի հիվանդության, վնասվածքի կամ վիճակի դեպքերում: Անդամները կարող են շտապ օգնություն ստանալ ցանցում չներառված մատակարարի կոմից, եթե ներցանցային մատակարարները ժամանակավորապես հասանելի կամ մատչելի չեն:



Չանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Չանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com:



Ձանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ 1-888-665-4621 (TTY/TDD 711):
Molina Healthcare-ը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը՝ 7:00-19:00:
Ձանգն անվճար է: Կամ կարող եք զանգահարել California-ի «Relay» գիծ 711
համարով: Այցելեք առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.MolinaHealthcare.com: